



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

33
Ա ԵՐԱ Խ ՈՎ.



Հ. Ծ Տ Բ Ա Խ ՈՎ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

ՔԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

H. Մուրախյան

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐէՆԻՑ

Խմբագրութեամբ

Ա. Տ ի գ ր ա Շ ե ա ն ի

Վ. Ա. Դ. Ա. Ր Շ Ա Պ Ա Տ

Տպարան Մայր Արքունյ Ս. Էջմիածնի

1908

15(01)

U - 79

14 JUL 2009

Ա. Ս Տ Բ Ո Վ Ա. Հ. Ծ Տ Ր Ա Խ Օ Վ Ե

15(01)
4-90

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

ՅԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ ՌԱԽԵՐԵԼՆԵՑ

ԽՄԲԱԳՐՈՒՔԵԱՄԲ

Ա. Տ ի գ ր ա ն ե ա ն ի

Վ. Ա. Ա. Ր Ճ Ա. Պ Ա. Տ

Տպարան Մայր Աբովյան Ա. Էջմիածնի

1903

Սոյն գիրքը Ն. Ստրախովի «Օ՛ օսновныхъ понятияхъ психологии и физиологии» հեղինակութեան առաջին մասի (Часть первая. Ось основныхъ понятияхъ психологии.) բարգմանութիւնն է, որ արել է Ա. Տէր-Պողոսեանը իւր մի քանի ընկերակիցների մասնակցութեամբ (բոլորն էլ ու էջմիածնի Գևորգեան ձեմարանի ուսանողներ, այժմ աւարտած): Ես ուղղել եմ իմբագրել եմ բարգմանութիւնը եւ կազմել վերչի բառարանը:

Իւր բովանդակութեամբ այս գիրքը մի ներածութիւն, նախակրարան, կարելի է համարել թէ նոգեբանութեամբ եւ թէ փիլիսոփայութեամբ (իմաստափրութեամբ) հետաքրքրութիւնի համար։ Շարադրութեան ձերի կողմից այս մի հանրամատչելի գրուածք է, որը կարդալու եւ հասկանալու համար չէ պահանջում ընթեցողից յատուկ մասնագիտական պատրաստութիւն։ Սակայն հանրամատչելի լինել չէ նշանակում դիւրամատչելի լինել։ Ուստի, թող ներէ ինձ ընթեցողս, եթէ բարեմիտ համարձակութեամբ մի խորհուրդ տամ իրեն՝ կարդա այս գիրքը ուսադիր մտքով եւ մի քանի անգամ ծայրէ ծայր։ ինչ չես հասկանայ կամ սխալ կհասկանաս առաջին անգամ-լաւ կհասկանաս՝ երբ կրկին անգամ կկարդաս։

Սիրական Տիգրանեան։

Վաղարշապատ 1902 Սեպտեմբեր

06.08.2013

Дозволено цензурою 12 октября 1902 г. г. Тифлисъ

Առաջին գիրքը՝ Ն. Ստրախովի «Օն օսновныхъ понятіяхъ психологии и физиологии» նեղինակութեան առաջին մասի (Часть первая. Онъ օсновныхъ понятіяхъ психологии.) բարգ-մանութիւնն է, որ արել է Ա. Տէր-Պողոսեանը իւր մի քանի ընկերակիցների մասնակցութեամբ (բոլորն էլ ս. Էջմի-ածնի Գէորգեան ձեմարանի ուսանողներ, այժմ աւար-սած): Ես ուղղել եւ խմբագրել եմ բարգմանութիւնը եւ կազմել վերջի բառարանը:

Իւր բովանդակութեամբ այս գիրքը մի ներածութիւն, նախակրթարան, կարելի է համարել թէ նոգեբանութեամբ եւ թէ փիլիսոփայութեամբ (իմաստափրութեամբ) նե-սահմանողների համար։ Նարադրութեան ձեւի կողմից այս մի հանրամաշչելի գրուածք է, որը կարդալու եւ հաս-կանալու համար չէ պահանջում ընթեցողից յատուկ մասնագիտական պատրաստութիւն։ Սակայն հանրամաշ-չելի լինել չէ նշանակում դիւրամաշչելի լինել։ Ուստի, քող ներէ ինձ ընթեցողս, երէ բարեմիտ համարձակու-թեամբ մի խորհուրդ տամ իրեն՝ կարդա այս գիրքը ուշա-դիր մտով եւ մի քանի անգամ ծայրէ ծայր։ ինչ չես հաս-կանայ կամ սխալ կիասկանաս առաջին անգամ-լաւ կիասկանաս՝ երբ կրկին անգամ կկարդաս։

Սիրական Ցիցրանեան։

Վաղարշապատ 1902 Սեպտեմբեր



ՀԵՂԻՆԱԿԻ

Առաջին հրատարակութեան յառաջաբանից:

Այսի քանի շատ հասարակ և շատ պարզ ճշմարտութիւններ են այս գրքոյի առարկանց Արդէն վաղուց, գեռ ևս ուսանողական նստարանի վերայ՝ մի քանի տարրական գիտական դրութիւններ ինձ համար ամեն տարրակոյսի սահմանից գուրս էին, ոչ թէ իբրև մի գիւտ կամ նոր հայեացք, այլ իբրև գրեթէ մի այնպիսի բան, որ ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Այս պատճառով յետագայում ես յաճախ զարմանում էի (պէտք է խոստովանեմ, որ մինչև այժմ էլ շարունակ զարմանում եմ), թէ ինչպէս կարող են գոյութիւն ունենալ և երբեմն տիրել իսկ այնպիսի վարդապետութիւններ, որոնք համաձայն չեն այդ ճշմարտութիւններին։ Բացարութիւնը, երեի, այն է, որ մարդկանց մտքի մէջ, նոյնիսկ լուսաւորուածների և գիտնականների, մտաւոր կեանքի իւրաքանչյուր շրջանում գտնափարների միայն մի շատ փոքր թիւ է լիսկատար ոյժ ստանում, որոնց տակ և այդ շրջանում ամեն տեսակ առարկաներ են գասում։ Ինչպէս որ բժշկութեան գործնականում սովորաբար հինգ-վեց գեղ են կազմում գործածելի միջոցների գլխաւոր պաշարը, և, երբ սրանք ուրիշ գեղերով են փոխանակում, գարձեալ ոչ աւելի, քան հինգ կամ վեց նոր գեղերով, նոյնպէս էլ մոտաւոր գործունեութեան մէջ սովորաբար միայն սակաւաթիւ կատեղորիաների (ընդհանուր, գասաւորիչ գաղափարների) հետ ենք գործ ունենում, որոնց և անվերջ վերագրում ենք այն ամենին, ինչի մտաին որ մտածում ենք։ Սորանից առաջ է գալիս՝ որ գիտութեան ամբողջ շրջաններ իբրև իսկական

իմաստով մեզ համար անմատչելի են դառնում, իսկ եթէ մենք մշակում ենք դրանց՝ բոլորովին խեղաթիւնուած ձև են ստանում, զրկուում իրենց իսկական բովանդակութիւնից:

Այսպիսով ընթերցողին հասկանալի կլինի իմ ջանքը ճիշտ կերպով հաստատել յայտնի գիտութիւնների մի քանի հիմնական գաղափարն երը Այդ գաղափարներն իմ աչքում անտարակուսելի լինելով՝ ինձ թւում էր, թէ ես կարող եմ դրանք աւելի պայծառ և լիակատար կերպով պարզել, քան այդ սովորաբար անում ենք Բացի դուրանից աշխատել եմ ամենամեծ հեղինակութիւններ գտնել, որոնց վերայ կարելի լինէր յենուել իմ դրութիւնները, որպէսզի գիտութիւնների հետ քիչ ծանօթ մարդկանց համար գրանք միայն ինձ առանձնապէս պատկանող խորհրդածութիւններ չներկայանան, այլ երեան գայ այդ խորհրդածութիւնների բուն գիտութեան էական ընթացքի հետ ունեցած անմիջական կապակցութիւնը:

Դրայիս գրելու գրդող մի ուրիշ հանգամանք էլ կար: Պաշտօնով պարաւորուած էի զննել միջնակարգ ուսումնարանների համար նշանակուած հոգեբանութեան համառու գասագրերը: Այդ գասագրերից լաւագնների մէջ անդամ, իմ համոզմամբ, գիտական ինդիբները կատարելապէս ճիշտ և պայծառ կերպով չեին դրուած: այնպէս որ շարունակ ցանկութիւն ունէի բացագրել շարադրութեան այն եղանակը, որն ես կատարելապէս ուզիղ եմ համարում:

Որոշ գիտութիւնների հետ ծանօթ լինելը, որ ընդհանուր ուսման մասն է կազմում, պէտք է առհասարակ ձգտի ոչ այնքան տեղեկութիւնները առատացնելուն, որքան իւրաքանչիւր գիտութեան հենց սկզբունքը ամրապնդելուն մտքի մէջ: Եթէ մեզ համար պարզ կլինի սկզբանքը, այսինքն գիտութեան խնդիրը, որա հայեցակէտը, ապա այդ իրօք կարելի կլինի ուսում կոչել: այս գէպքում, գիտելիքներով հարստացած կարող կլինինք մեր ձեռք

բերածը պատշաճապէս զետեղել, դրանց պատշաճ իմաստ տալ:

Սովորաբար բանն այլ կերպ է լինում: Սովորաբար մեր մտքերն ու տեղեկութիւնները մի խայտաճամուկ քառ են կազմում, ուր ամեն ինչ մէկը միւսին է կցւում, բայց պայծառ միութիւն ոչ մի տեղ չէ գոյանում: Այդ քառասի մէջ երբեմն գրաւում ենք որոշ գաղափարներով, բայց ինքն ներս չենք իմանում՝ թէ այդ գէպքում ինչն է մեզ առաջնորդողը, իսկ աւելի ես քիչ ենք իմանում՝ թէ ընդհանրապէս ինչնվագ պէտք է առաջնորդուենք, որ մեր քառասի մէջ մի ներգաշնակութիւն մտցնենք: Այստեղից են առաջանում՝ թէ ամեն տեսակ մոլորումներ, թէ մոլորութիւններ և թէ վերջապէս սկեպտիցիզմ (կասկածամտութիւն), իհարկէ ոչ կատարեալ և հետեւղական, բայց շատ ընդարձակ սկեպտիցիզմ: Սխալն այստեղ հինն է և միշտ միւնոյնը: Մենք միշտ կարծում ենք, թէ գիտելիքները, երբ շատ հաւաքենք, իրենք իրենց մեր հոգու մէջ մի ինչ որ ներգաշնակ և լաւ բան կյօրինենք: Այդ չէ լինում և լինել չէ կարող, անհրաժեշտաբար մտքի խիստ աշխատանք է պահանջւում, և ով ոչինչ չէ փնտուում, նա ոչինչ էլ չի գտնի:

Իւրագանչիւր գիտութեան սկզբունքը ոչ միայն կապակցում և կերպոնացնում է նորա բոլոր մասերը, այլ հենց ինքն է որ որոշում է գիտութեան բուն շրջանը, ցոյց է տալիս սահմանագիծը, որից այն կողմը գաղարում է նոյն գիտութեան տիրապետութիւնը: Այս պատճառով, երբ կիւրացնենք զանազան գիտութիւնների առանձին լինդիրները՝ մեր մտաւոր աշխարհը ուղիղ կերպով կբաժանուի կամ կբաշխուի պարզորոշ կերպոններ ունեցող որոշ շրջանների: Ուստի մենք կտեսնենք, որ գոյութիւն ունեն աւելի ընդհանուր և բարձր խնդիրներ, որոնք մասնակի գիտութիւններով չեն լուծւում, մասնակի գիտական շրջաններից գուրս են գտնուում:

Այն ժամանակ չենք չափաղանցեցնի և ընդհան-

բացնի մեր գիտելիքների նշանակութիւնը, այն է՝ կիմառնանք, որ մեր տեղեկութիւնները, ճիշտ, այսինքն գիտական իմաստով վերցրած, որոշ տեսակի տարասութիւն են ներկայացնում, ընդհանրապէս միակողմանի են և, հետեաբար, չէ կարելի անսահման և ընդհանուր նշանակութիւն վերագրել դրանց, չէ կարելի կարծել, թէ ճշմարտութիւնը ձեռք է բերւում գիտելիքների հասարակ կուտակմանը, թէ մեր հայեացքը բարձրացնելու համար բաւական է միայն գիտելիքներից մի բուրգ կամ կոյտ կառուցանել որքան կարելի է բարձր, գիզելով ինչ որ կարող կլինենք հաւաքել: Այսպիսով՝ մեր գիտելիքների նշանակութիւնը որքան աւելի լաւ և ճիշտ կերպով հասկանանք, այնքան էլ անխուսափելի կերպով կընկնի: իւրաքանչիւր որոշութիւն միևնույն ժամանակ նաև սահմանափակումն է:

Մի քանի նկատողութիւններ էլ աւելացնեմ, որոնք թէկ գրքիս անմիջական առարկաններից հեռու են, բայց առնչութիւն ունեն նրա հետ և շատ կարեսր են այն հարցի նկատմամբ, որին վերաբերում են:

Գիտութիւններն, ընդհանրապէս, մտաւոր գործունեութեան կանոնաւոր, կենդանի ծնունդն են. այնպէս որ իւրաքանչիւրը, եթէ ճիշտ կերպով վերլուծենք իւր սկզբունքները, կարող է մեր առաջ բանալ գիտական իմացութեան բուն էութիւնը: Որովհետեւ չէ կարելի կատարելապէս հասկանալ գիտելիքների մի տեսակի առանձնայատկութիւնը՝ առանց հասկանալու միւս տեսակների յատկութիւնները և այն ընդհանուր հիմքը, որի վերայ դրանք բոլորն էլ հաստատուած են: Այսպիսով՝ գիտութիւնները հետազօտելով, կարող ենք հասկանալ ընդհանրապէս ու ացիսնալի զմի ողին, որի շրջանին է պատկանում անկանած այն բոլորը, ինչ որ գիտութիւնների մէջ ճշշմարիտ—գիտական է հանդիսանում: Խոկ այստեղից կարող է առաջ դալ մտքի գիտակից և կանոնաւոր վերաբերմունք դէպի կեանքը, իւր ամբողջ լրութեամբ վերցրած: Յիշ-

րաւի, եթէ անդիտակցօրէն և ակամայ չենք շարժւում մի որոշ շրջանի մէջ, այլ ընդհակառակն բոլորովին գիտակցաբար ինքներս ենք մեր շուրջը որոշ սահման գծում, ապա մեր հայեացքն անխուսափելի կերպով կձգտի դէպի այն բանը, որ այդ սահմանագծից գուրս է: Հետեաբար, մեր ընդհանուր հորիզոնը այնքան աւելի ստոյգ կերպով կընդարձակուի և կպարզուի, որքան աւելի ճշտութեամբ սահման կդժենք իրականութեան այն ըմբռնութիւնների համար, որոնք գիտական իմացութիւնն են կազմում: Յայտնի գիտութիւնների հիմնական գաղափարները հետազօտելիս, այսպիսով, անհրաժեշտ եղաւ՝ ու ացիսնալի զմի սահմանագծի վերայ էլ մի քանի ցուցմունքներ անել, այսինքն այն առարկայի վերայ, որ մեր մտքի ամբողջ շրջանի մէջ դերագոյն կարեորութիւն ունի:

9 նոյս. 1886.

Հեղինեկի

Երկրորդ հրատարակութեան յառաջաբանից:

Այս հրատարակութեան մէջ ոչ մի յաւելում և վորոխութիւն չկայ, բացի մանր սրբագրութիւններից:

Փորձեմ գէթ մի քանի խօսք ասել այն թիւրիմացութիւնների և առարկութիւնների առիթով, որոնց ենթարկուեց գիրքս: Բանից երեսում է, որ շատերը գրքիս նայում են ոչ այն տեսակէտից, որի վրայ ես ամեն կերպ աշխատել եմ կանգնեցնել ընթերցազներիս: Իմ խօրհրդածութիւնների մէջ ինչ որ բնագանցագիտութիւն (մետափիզիկայ) են որոնում և գտնում, մինչդեռ ես գլխաւորապէս առաջադրել եմ գաղափարների քննագագաթիւն, դրանց արամատիսութիւնը (գիտելեկտիկան):

Այս՝ ամենասովորական սխալն է: Մարդու իւր բնու-



թեամբ բնազանցագէտ (մետաֆիզիկոս) է. այսինքն նա միշտ յայտնի գաղափարներ է ստեղծում, որոնց միշտով մտածում է իւր և իւրաքանչիւր այլ գոյութեան և գործողութեան մասին, Ասածու, հոգու և աշխարհի մասին։ Այդ գաղափարների յօրինումը կատարւում է անգիտակցաբար, ակամայ, և մարդիկ սովորաբար չեն նկատում դրանց առանձնայատկութիւնները, այլ զուտ տրամաբանական ձևեր են ընդունում, մտքի այնպիսի եղանակների տեղ, առանց որոնց մտածելն անգամ անկարելի է։ Այդպիսի անգիտակցական բնազանցագիտութեան (մետաֆիզիկայի) ժամանակ բոլոր խորհրդածութիւնները նպատակ են ունենում պարզել միանդամ ընդ միշտ ընդունուած գաղափարների փոխադարձ յարաբերութիւնները և լուծել այդ գաղափարներից ծագող հարցերն ու հակասութիւնները։ Այսպէս՝ մատերիալիստն ուզում է ամեն բան նիւթով բացատրել. իսկ եթէ մի բան չէ կարողանում, ապա պատրաստ է այդ մի յաւիտենական հանելուկ ընդունել։ Մի բան միայն չէ կարող նրա մտքով տնցնել՝ տարակուսել իւր նիւթի գաղափարի վերայ։

Այնինչ սովորաբար սիսալում ենք՝ մեր յայտնի գաղափարներին այդպիսի անշարժութիւն և անփոփոխութիւն վերագրելիս։ Փիլիսոփայութեան պատմութիւնը մեզ համար պարզում է, որ գաղափարները գարերի ընթացքում փոփոխուել են, և հէնց այդ փոփոխութիւնների որոշելն է նոյն այդ պատմութեան էտական գործը։ Մի բնազանցագիտութիւն (մետաֆիզիկայ) փոխարինում է միւսին մի կանոնաւոր օրէնքով։ Կանաց իրեն խնդիր գրեց՝ զննել այդ գաղափարների կազմուելը, իսկ Հեղէլը՝ ըմբռնել գրանց ընթացքը։ Այն տրամախօսութիւնը (գիւղեկտիկան), որ կատարուել է և կատարւում է մարդկային մտածողութեան մէջ՝ այսպիսով գիտակցութեան է բերւում։ Ներկայումս մի որևէ գաղափարի՝ իբրև անշարժի և վերջնականի՝ վրայ կանգ առնելու փոխարէն պէտք է նորա կաղմուել։ հետազոտենք և որոնենք դէպի աւելի բարձր և ընդար-

ձակ դաղափարն ունեցած յարաբերութիւնները։ Թէ սեպահական և թէ իւրաքանչիւր այլ գոյութեան և գործունէութեան մասին ունեցած մեր հասկացողութիւնը անկասկած գրանից կշահուի։ Յիրաւի, այդ գէպքում ամեննեին չեն կորչում այն գիտելիքները, որ ձեռք ենք բերել ստոր կէտի վերայ կանգնած ժամանակ, նեղ և կոպիտ գաղափարների աստիճանի վրայ. այլ այդ գիտելիքներին նոր իմաստ ենք տալիս և ճանապարհ ենք ցոյց տալիս, որով այդ իմաստը միշտ աւելի բարձր և ընդարձակ կարող է գառնալ։ Օրինակ՝ հոգու մասին յաճախ այնպէս են մտածում, թէ նա մի տեսակ էակ է, փակուած մարմնի ներսում, իբրև մի պատեանի մէջ, և թէ յետոյ, մահուան ըոպէտում, նա թողնում է մարմինը, դուրս է թռչում մարմնի մի ինչ որ ներքին տեղից։ Շատերի համար այսպիսի գաղափարը անտարակուսելի է թւում և գորա ժխտումը նրանք պատրաստ են հէնց հոգու գոյութեան ժխտում համարել։ Մինչդեռ պարզ է, որ այդտեղ մենք նիւթականացնում ենք մի նուրբ նիւթական առարկայի ձևով, և դրա համաձայն երևակայում նորա յարաբերութիւնները։ Հոգին մեր հասկացողութեամբ մերենայօրէն մարմնից առանձնացած է և մեքենայօրէն կապուած նորա հետ։ Բայց այդ առանձնութեամբ չէ որ ցանկանում ենք միայն այն արտայայտել, որ հոգին տարբեր է մարմնից. և արտայայտում ենք շատ անկատար ձևով։ Նոյնպէս և պատկերացնելով, թէ հոգին բոլոր կողմերից շրջապատուած է մարմնով, ուզում ենք արտայայտել մարմնի հետ ունեցած նորա կապը. և դարձեալ արտայայտում ենք շատ թոյլ կերպով։ Եւ այսպէս, ժխտելով այդ գաղափարները, կարող ենք հոգու աւելի լաւ հասկացողութեան հասնել։ Հոգու և մարմնի տարբերութիւնը անհամեմատ աւելի խոր է, քան ենթադրուում է սովորական հասկացողութեամբ. այդ տարբերութիւնը արտաքին առանձնութեան մէջ չէ, այլ էական հակադրութեան մէջ, որ և պէտք է ուսումնասիրենք։ Նմանապէս

հոգու ու մարմնի կապակցութիւնն էլ անհամեմատ աւելի խոր է, քան մի նիւթական առարկայի հասարակ շփումը մի ուրիշ առարկայի հետ, որի մէջ նա փակուած է, Մարմինը հոգուն օտար մի էակ չէ, մի էակ, որի մէջ հոգին, ասես բոնի կերպով, ներփակուած է, մարմինը հոգու յարատե, ստեղծագործութիւնն է կամ, ինչպէս ասում են, մարմնացումը:

Ինչ էլ որ լինի, շարունակ պէտք է հոգանք մեր գործածելի գաղափարների քննադատութեան մասին: Եթէ այս բանը կանոնաւոր կերպով կատարենք, ոչ միայն ոչինչ չենք կորցնի, այլ մեր՝ առարկաները հասկանալու գործում առաջադիմութիւն կանենք: Բայց այդ տրամախօսութիւնը (գիտելիտիկան) շատ գժուարին է իւր ճշմարիտ ձեռվ, և միենոյն ժամանակ նորա իւրաքանչիւր քայլը, կարելի է ասել, հաւասարապէս թանկագին է, որովհետեւ իւրաքանչիւրը կանոնաւոր ընթացք է տալիս մեր գաղափարներին: Ահա թէ ինչու մեզ համար այնքան խրատական են նախկին փիլիսոփաների (իմաստասէրների) ընթերցանութիւնը: Նրանց երկերում յաճախ դտնում ենք օրինակելի շարադրութիւն մտածողութեան ընթացքի այս կամ այն քայլի, այն աստիճանների, որոնցով ընթանում է գաղափարների անհրաժեշտ զարգացումը: Այդ չէ նշանակում, թէ պատրաստ ենք այդ աստիճանների վերայ կանգ առնելու, այլ միայն որ այսուղ մի սանդուղք ենք գտել, որով պէտք է բարձրանաք: Այսպէս՝ առաջ բերելով Դեկարտի խորհրդածութիւնը՝ ես այդ ոչ թէ մի վերջնական եղբակացութիւն կամ արդէն պատրաստի վարդապետութիւն էի համարում, այլ միայն մի չափազանց պայծառ և ճշգրիտ աստիճան, որով պիտի անցնի իւրաքանչիւր ոք, ով խոր հում է հոգու մասին:

Յարդ մեր գաղափարների տրամախօսութիւնը (գիտելիտիկան) մի խորհրդաւոր շրջան է ներկայանում, որ շատերի համար անմատչելի է, ուստի և որանց կողմից չէ ընդունում և պախարակում է: Եւ յիրաւի ցարդ գորա

մէջ շատ սովորական բան են սխալներ, կամայականութիւն, սովորականութիւն: Սակայն վաղ թէ ուշ մտքերը պէտք է ընտելանան դրան, և դրա մէջ աւելի ու աւելի կտիրէ պայծառութիւն ու կարգ:

Եթէ ընթերցողը կտմնի, որ այս գլուխում բաւական ճշգրիտ և հաստատուն կերպով որոշուած են մի քանի գաղափարներ և ցոյց է տուած դրանց փոխադարձ յարաբերութիւնը, այդ ինձ համար ամենացանկալի խրախուածները կլիներ:

Ն. Ս Տ Բ. Խ Ո Վ :

19 նոյ. 1894 Սպբ.:



ՀՈԳԵԲԱՆԻԹԵԱՆ ՀԻՄԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈԴՈՒ ԵԽ ՄԵՐՄՆԻ ՏԱՐՅԵՐՈՒԹԻՒՆԸ

I.

Ինչից պէսէ է սկսել:

Գիտական ճշմարտութիւնների սխմթեմաւոր շարադրութիւնը ունի իւր յատուկ վասնգները, որոնցից երբեմն հեշտ չէ լինում խուսափել։ Առարկան սահմանելու, մասերի բաժանելու, այդ մասերը յաջորդաբար շարադրածելու և այլն ընդհանուր ձեւերը գործածելիս՝ ակամայից այնպէս ենք ձեւացնում և այնպէս խօսել սկսում, կարծես թէ կատարելապէս տիրապետում ենք առարկային, կարծես թէ նրան ուսումնասիրելու գործը հասցըել ենք իւր վերջնական արդիւնքներին։ Բոլոր պակասները, չվըճռուած մնացած հարցերը և այն հարցերը՝ թէ արդեօք օրինաւոր են հենց իրենք իսկ այդ հարցերը, որքան դրանք ուղիղ են դրուած, երկրորդական տեղ են բռնում. և գիտութիւնը կորցնում է իւր էական բնաւորութիւնը՝ հետազոտման բնաւորութիւնը։

Նման սխալներ թերեւս ամենից յաճախ պատահում են և իշխում այսպէս կոչուած էմպիրիկ (փորձական) գիտութիւնների մէջ։ Յայտարարելով սկզբից, թէ հայեցու

զութիւնը բոլորովին արտաքսուած պիտի լինի գիտութիւնից, և թէ իւրաքանչիւր գիտական գաղափար և դրութիւն ձեռք պիտի բերուի փորձի միջոցով, ինդուկցիայի խստ կանոնների համաձայն՝ հեղինակը իսկոյն և եթ սկսում է իւր առարկան շարադրել բոլորովին դոգմատիկ ձևով. այսինքն՝ մեղ տալիս է պատրաստի տերմիններ, բաժանումներ, ընդհանուր օրէնքներ և բացատրութիւններ, առանց ցոյց տալու.՝ թէ ինչպէս են դրանք ձեռք բերուած, և բնաւ չհոգալով, որ ապացուցանէ դրանց ձեռք բերելու կանոնաւորութիւնը և ուրիշ ամեն տեսակ եղրակացութիւնների անկարելիութիւնը՝ ձշմարիտ է, փաստերը մեծ քանակութեամբ են առաջ բերում. բայց այդ փաստերը ընթերցողի աջքի առաջ չեն վերլուծում, այլ յայտարարում են լոկ իրեւ առաջուց կատարուած վերլուծման հաստատում։ Էմպիրիկ—հեղինակը, առանց ամենափոքր վարանման, մտցնում է իւր շարադրութեան մէջ ամեն տեսակ գաղափարներ և կատեգորիաներ, որոնց նա ոչ մի տեղից չէ եղրակացնում և ոչ մի բանով չէ ճշմարտում, իսկ մի քանիսը մինչև անդամ ամենելին չէ էլ նկատում, այսինքն, ամենելին չէ տեսնում, որ նրանք մտել և նշանաւոր գեր են կատարում իւր շարադրութեան մէջ։ Գաղափարների և դրութիւնների ամբողջ այս բարդ խառնուրդը ամենելին չէ եղրակացւում փորձից այն ճշտութեամբ և զգուշութեամբ, որի մասին սիրում են խօսել էմպիրիկները, այլ վերցում է որտեղից որ պատահի, կազմում է մեծ մասամբ իրեն հեղինակի համար անձանօթեղանակով և լոկ վերադրում է փորձին, լոկ ստուգւում է փորձի վերայ այն յուսով, թէ սա՝ իրեւ մի լաւ մազ, կմազէ միայն ալիւրը և կպահէ ամեն գեր ու թեփանկապէս այդ եղանակները բոլորովին զուրկ են գիտական լինելուց։ Իսկական—գիտական կարելի է կոչել միայն այն շարադրութիւնը, որի մէջ ըստ կարելւոյն պայծառ կերպով կարտացոլուի հենց հետազոտման մեթոդը, մոքի ներքին ընթացքը։ Այս պատճառով ամենաընտիր

Եղանակներից մէկն այն է, որ սկսեն ոչ թէ ընդհանուր գրութիւններից և սահմանումներից, այլ մի մասնակի փաստից, մի առանձին օրինակից, և ապա վերլուծման միջոցով հասնեն ընդհանուր գաղափարների և դուրս բերեն այն հարցերը, որ դնում՝ է և հետազոտում՝ է դիտութիւնը։ Էւ առհասարակ՝ վատ չի լինի, եթէ որոնենք շարադրութեան մի բնական կարգ, որ ցոյց է տրւում հէնց իրեն առարկայի յատկութիւններով և այն վիճակով, որի մէջ գտնուում է նոյն առարկայի ուսումնասիրութիւնը։ Այսպէս՝ տարրական քիմիայի շարադրութիւնը սովորաբար սկսում են ոչ թէ տարրերի, սրանց միաւորսութիւնների և այլն մասին եղած ընդհանուր գաղափարներից, այլ թթուածնի նկարագրութիւնից։ Թթուածնից յետոյ գալիս են միւս պարզ նիւթերը, յայտնի, ամենից յարմար հերթով, և ասախճանաբար բացատրում են անհրաժեշտ կատեգորիաները և աճում փաստերի բարդութիւնը։

Փիլիսոփայական (իմաստասիրական) դիտութիւնների մէջ ամենից յարմարն է նոյնպէս մի առանձին փաստից սկսել, այսինքն փիլիսոփայութեան պատմութեան մի որևէ է դէպքից, մի որոշ վարդապետութիւնից, որ արտայայտել է նոյն պատմութեան հերոսներից մէկը։ Այդպիսի մի վարդապետութիւն կարող է ներկայացնել թէ մտքի մեծ ամփոփութիւն և պայծառութիւն, և թէ միենոյն ժամանակ արտայայտութեան՝ ամփոփութիւն և պայծառութիւն, որ յատուկ է սովորաբար ինքնուրոյն մտածողներին։ Սկսելով մի այդպիսի վարդապետութիւնից, այնուհետև կարելի կլինի ճշտապահ զարգացուցմանը անցնել այն դիտական ձևին և այն դիտական բովանդակութեանը, որ մենք ամենալաւը կհամարենք։

II.

Cogito, ergo sum¹⁾.

Թուում է թէ հոգեբանութիւնը սկսել ամենից յարմար է Դեկարտի «Ego cogito, ergo sum»-ից։ Եթէ մարդկային մտքի մէջ յեղացըումներ լինում են, ապա այդամենամեծ յեղացըումներից մէկի մասին յայտարար նշան կարող է համարուել այս սոսացուածքը, որ ըստ երեսութիւն շատ հասարակ է և քիչ բան պարունակող։ Բոլորովին ստոյգ է, որ առանց հոգեկան երեսյթների մասին հարցը այն ձևով գնելու, որ Դեկարտն արաւ և որը ցուլանում է նորա սոսացուածքում, երբէք չէին լինի ոչ միայն Սպինոզան, Մալբրանշը, Լէյբնիցը, այլ և Լոկլը, Բերկլին, Իւմը և այլն։ Հոգեբանական այն գաղափարները, որոնք յայտնուել են նոր փիլիսոփայութեան ամբողջ շրջանի ընթացքում, հետևապէս նաև նրանք, որոնք այժմ ոյժ ունին, պէտք է իրենց ծննդաբանութիւնը Դեկարտից սկսեն։ Եթէ դրանցից մի քանիսը ուղղակի հակասում են Դեկարտի հիմնական դրութիւններին և սրանց յետագայ զարգացումից սոսացուած եղանակացըութիւններին, ապա այդպես ապացոյց չէ, թէ այդ գաղափարները անկախ են յառաջացել։ Միայն այն միտքը կարելի է բացասել, որ դրական ձևով յայտնուած է եղել։

Ինչպէս յայտնի է՝ Դեկարտը իւր սոցութիւնների մէջ իրեւ ելակէտ իւր փիլիսոփայութեան։ Այդպատճառով յարմար է, որ մեր խորհրդածութիւնները հէնց այդպիսի գրութիւնից սկսենք, եթէ ցանկանում ենք, որ մեր սկզբնական գրութիւնների մէջ որքան կարելի է քիչ կանխակալ մաքեր լինեն։

Այս պատմական փաստը իւր զուտ և լիակատար ձևով

1) «Եղո կոդիաօ, էուգօ սում»—«Ես դիտակցում եմ, հետևապէս կամ»։



աչքի առաջ ունենալու համար, վերցնենք ուղղակի Դեշկարտի իսկական խօսքերը, որոնք արտայայտում են նորափիլիսոփայութեան սկզբնական կէտը։ Դեկարտի այդ մտքի առաջին, շատ թոռոցիկ արտայայտութիւնը երևեցաւ Discours de la méthode¹⁾-ում (1637)։ իսկ յետոյ իւր խորհրդածութեան ընթացքը՝ ամբողջ լրութեամբ՝ շարադրեց Meditationes de prima philosophia²⁾-ում, և վերջապէս ամենաճշտ և սեղմ կերպով կրկնեց Principiae philosophiae³⁾ գրքում։ Մենք կվերցնենք այս կարծ և ճիշտ շարադրութիւնը։ Դեկարտի «Փիլիսոփայութեան սկզբունքը» սկզբունքը և բարձրացնելու ակաւում են այսպէս։

1.

«Քանի որ երեխայ ենք ծնւում և իրերի մասին զանազան դատողութիւններ կազմում ենք նախ քան մեր «բանականութեան կատարեալ կիրառութեան համարելը, «ուստի բազմաթիւ նախապաշարմունքների շնորհիւ շեղւ «ւում ենք ճշմարտութիւնը իմանալուց։ Ազատուել այդ նաև «խապաշարմունքներից, ըստ երեսութին, կարող ենք ոչ այլ «կերպ, բայց եթէ աշխատելով կեանքում մի անդամ տաշ «բակուսել այն ամենի վերայ, ինչ բանի մէջ անստուգութեան դէմ մի ամենափոքր կառկած կդանենք։

2.

«Սին ամենը, ինչի վերայ կակսենք տարակուսել, օգաւակութեան միանալու ամենամ սուտ համարել, որպէս զի աւելի պայծառութեամբ տեսնենք թէ՝ իմացութեան համար ինչ կայ ամենաստոյդ և ամենայարմար։

1) «Խորհրդածութիւն մեթոդի մասին»։

2) «Խորհրդածութիւններ առաջին փիլիսոփայութեան մասին»։

3) «Փիլիսոփայութեան սկզբունքներ»։

3.

«Բայց այդ տարակուսանքը պէտք է սահմանափառ կենք միայն ճշմարտութեան հայեցողութեամբ։ Որովհետեւ «ինչ որ կեանքի գործերին է վերաբերում, (քանի որ «շատ անդամ գործելու դէպքը կարող է ձեռքից փախչել, «նախ քան տարակոյաներից կազմատուենք), ստիպուած ենք «լինում յաճախ կանգ առնել մի այնպիսի բանի վրայ, «որ լոկ հաւանական է. կամ մինչև իսկ երբեմն, չնայեալով որ մէկը աւելի հաւանական չէ թւում մեզ քան միւսը, «բայց և այնպէս ընտրել դրանցից մէկն ու մէկը»։

4.

«Եւ այսպէս՝ քանի որ ձգտում ենք միմիայն ճշշ «մարտութիւնը հետազոտելու, սկսենք նրանից, որ տարակուսենք՝ արդեօք գոյութիւն ունին որևէ զգայական «կամ երեակայական իրեր։ Նախ որովհետեւ նկատում ենք, որ մեր զգայութիւնները երբեմն մոլորում են։ «իսկ խոհեմութիւնը պահանջում է երբէք շատ չհաւատալ այն բանին, ինչ որ մէկ անդամ մեզ խարել է։ Երկ «բորդ՝ որովհետեւ ամեն օր երազում թւում է մեղ, թէ «մենք զգում կամ երեակայում ենք բազմաթիւ իրեր, «որոնք սակայն բնաւ գոյութիւն չունեն։ և այս կերպ տարակուսող մարդու համար չկայ ոչ մի նշան, որով նաստուգապէս տարբերէ քունը արթնութիւնից»։

5.

«Տարակուսենք և այն ուրիշ ամեն բանի վերայ, որ առաջ ամենաստոյգն էինք համարում։ մինչեւ անդամ «մաթեմաթիկական առաջոյցների վերաբերմամբ, նոյն իսկ այն սկզբունքների վերաբերմամբ, որ մինչեւ այժմ

« Ենքնըստինքեան հասկանալի բաներ էինք համարում։
« Նախ՝ որովհետեւ տեսնում ենք, թէ ինչպէս ոմանք սխա-
« լուել են այդ բաններում և իբրև ստուգադոյն և ինքնա-
« ըստինքեան հասկանալի ընդունել են այն, ինչ որ մեղ
« սուտ է երեսում։ Երկրորդ՝ գլխաւորապէս նրա համար,
« որ լսած ենք թէ կայ Աստուած, որ ամենակարող է և
« որը ստեղծել է մեզ։ Զէ որ մենք չդիտենք՝ մի գուցէ
« Նա կամեցել է մեղ այնպէս ստեղծել, որ միշտ սխա-
« լուենք, նոյն իսկ այն բաննում, որ մեղ ստուգադոյն է
« թւում։ Քանի որ, ըստ երեսութին, այդ նոյնքան հնա-
« բաւոր բան է, որքան և այն՝ որ մենք երբեմն սխալում
« ենք, — իսկ մենք տեսանք արդէն, որ այս պատահում է։
« Իսկ եթէ երեակայենք, որ ամենակարող Աստծուց չենք
« ծագում, այլ հէնց մեզնից կամ մի ուրիշից, ապա որ-
« քան նուազ զօրեղ կլինի մեր ծագման ենթադրելի աղ-
« բիւրը, նոյնքան աւելի հաւատալի բան կլինի՝ թէ մենք
« այն աստիճան անկատար ենք, որ շարունակ մոլորում ենք։

6.

« Սակայն ումնից էլ որ ծագած լինենք և որքան էլ
« նա զօրեղ լինի, որքան էլ նա խաբող լինի, բայց և այն-
« պէս մեր մէջ մի աղատութիւն ենք զգում, որով միշտ
« կարող ենք յետ կենալ հաւատալուց այն բանին, ինչ
« որ դեռ ևս կատարելապէս ստուգուած և քննուած չէ, և
« այդպիսով մեղ աղատ պահել ամեն տեսակ մոլորութիւնից։

7.

« Եթէ այս ձեռվ մերժենք այն ամենը, ինչի վերայ
« որևէ է կերպ կարող ենք տարակուսել, և նոյն իսկ այդ-
« ամենը սուտ համարենք, այն ժամանակ, թէս հեշտու-
« թեամբ կենթագրենք, թէ չկայ ոչ մի Աստուած, ոչ մի
« երկինք, ոչ մի մտրմին — և թէ մենք էլ չունինք ոչ

« ձեռք, ոչ ստք, ոչ էլ առհասարակ մարմին. սակայն
« չենք ենթագրի նոյնպէս և այն՝ թէ մենք ինքներս էլ,
« այդ մասին մտածողներս, գոյութիւն չունինք. որովհետեւ
« անհեթեթ բան կլինէր խոստովանել՝ թէ ինչ որ մտա-
« ծում է, նոյն այդ միջոցին երբ մտածում է գոյութիւն
« չունի։ Ապա ուրեմն այս գիտելիքը՝ Ես գիտակ-
« ցում եմ, հետեւապէս գոյութիւն ունիմ, բոլոր
« գիտելիքներից առաջինը և ստուգադոյնն է, որ հան-
« գիպում է իւրաքանչիւր կարգին իմաստափրողի, փիլի-
« սոփայութիւն անողի։

8.

« Եւ այս՝ հոգու բնութիւնը և մարմնից ունեցած տար-
« բերութիւնը իմանալու լաւագոյն ճանապարհն է. որով-
« հետեւ հետազոտելով՝ թէ ինչ ենք մենք, որ սուտ ենք
« համարում ամեն բան ինչ որ մեզնից տարբեր է, մենք
« ուղարզ ի պարզոյ կտեսնենք, որ ոչ տարածութիւնը, ոչ
« ձեզ, ոչ տեղափոխութիւնը և ոչ սոյնանման բաներն են
« յատուկ մեր բնութեան, այլ մի միայն գիտակցութիւնը,
« որը հէնց այդ պատճառով և ամեն նիւթական առար-
« կայից ստուգագոյն և առաջագոյն է ճանաչում. որովհետեւ
« գիտակցութեանը արդէն գիտակ ենք, մինչդեռ ուրիշ
« ամեն բանի վերայ տակաւին տարակուսում ենք։

9.

« Գիտակցել բառով ես հասկանում եմ այն ամենը, ինչ
« որ կատարում է մեր մէջ երբ մեղ գիտակից ենք լինում,
« որչափ մեր մէջ այդ կատարուող բաների գիտակցութիւն
« է լինում. և հետեւապէս ոչ միայն հասկացողութիւնը,
« ցանկութիւնը, երեակայութիւնը, այլ և զգայութիւնն ես
« այստեղ նոյնպէս գիտակցութիւն եմ անուանում։ Որով-

« հետեւ, եթէ ասեմ, « ես տեսնում եմ — , » կամ « ես ման եմ դալիս, հետեաբար գոյութիւն ունեմ , » և եթէ այդ « ասելով հասկանամ այն տեսողութիւնն ու ման դալը, « որ կատարում է մարմնով, — եղբակացութիւնս անպայ « ման ստոյդ չի լինի, որովհետեւ, ինչպէս այդ յաճախ պատահում է երազում, կարող եմ կարծել թէ տես « նում եմ կամ ման եմ դալիս, մինչդեռ աչքերս փակ « են և տեղիցս չեմ շարժում և նոյն իսկ մինչդեռ « թերեւ բնաւ մարմին չունիմ: Բայց եթէ տեսու « զոթեան կամ ման դալու նոյն ինքն զգայութիւնը կամ « գիտակցութիւնն եմ հասկանում, ապա քանի որ այս « դէպօւմ խօսքս հոգու մասին է, որը միակ զգում կամ « գիտակցում է տեսնելս կամ մանգալս, — եղբակացու « թիւնս կատարելապէս ստոյդ կլինի: »

III.

Տարակոյս:

Աչա մի եղաելի հետազոտութիւն, որ անդիմադրելի ուժով մեր միտքը հոգեկան երևոյթների ուրոյն բնութեան վերայ է դարձնում, մատնացոյց է անում սրանց էական յատկանիշը, ունեցած ծաւալը և իրօք ամենալաւ միջոցն է տալիս մարմնական և ընդհանրապէս նիւթական երևոյթներից տարբերելու:

Նախ և առաջ, Դեկարտի պահանջմամբ, պէտք է տարակուսենք մեր ամեն գիտեցած բանի վերայ: Այս անեւ լու ենք ոչ թէ իրօք, այսինքն չպէտք է ձգտենք ոչնչացնել մեր մէջ ամեն մի վստահութիւն, — այլ միայն փորձի, օրինակի համար, ճիշտ այնպէս, ինչպէս մամեմաթիկոսը սխալ ենթադրութիւն է անում, երբ ի հակառակէն ապացոյց է վարում: Մենք պէտք է փորձ անենք բացառել այն ամենը, ինչ որ կարելի է բացառել, և տեսնենք թէ դուրանից ինչ դուրս կգայ:

Այսպէս ուրեմն Դեկարտի տարակուսանքը չէ նշանակում, թէ նա գէթ մի բոպէ տարակոյսի ենթարկեց ճշշմարտութիւնը կմանալու կարելիութիւնը, այլ նշանակում է միայն, որ Դեկարտը ծշմարտութեան համար անտարակուսելի ապացոյցներ է վնատում: Ծշմարտութիւնը պէտք է անտարակուսելի կերպով ապացուցուած լինի, կամենում է ասել Դեկարտը. — ապա թէ ոչ կարող եմ նրան չհաւատալ: « Մենք աղատ ենք, » ասում է նա, « յետ կենալ հաւատալուց այն բանին, ինչ որ դեռ ևս կատարելապէս քննուած և ստուգուած գիտելիքների շատ մեծ ծարաւ յարուցեց: Փիլիսոփայութեան ամբողջ յաշորդ պատմութիւնը և գիտութիւնների ամբողջ շարժումը մինչև վերջին ժամանակը վկայում են թէ ինչ մեծ ոյժ ունի Դեկարտի ելակէտը: Մարդիկ աւելի ու աւելի մեծ ագաճութեամբ գիտում են դէպի կատարելապէս ապացուցուած և կատարելապէս ապացուցանելի գիտելիքները և յետ են կենում հաւատալուց այն ամենին, ինչ որ կատարելապէս ստոյդ չէ: Այդ պատճառով, ինչպէս կարծում ենք, մարդկային չէ: Այդ պատճառով, ինչպէս կարծում ենք, մարդկային չէ: Այդ պատճառով, ինչպէս կարծում ենք, մարդկային պարզացման ամբողջ ընթացքը ստացաւ մի տեսակ միավարդացման ամբողջ ընթացքը ստացաւ մի տեսակ միավարդացմանիւն, զարտուղութիւն: Բայց և այնպէս շարժման ոյժը անտարակուսելի է:

Մամակի կերպով նկատենք, որ տարակուսանքի գիծը անխօսափելի կերպով մնում է իրքի բնորոշ գիծ հոգեբանական հետազոտութիւնների, կամ այսպէս ասած մտքի հոգեբանական տրամադրութեան: Այն մարդը որի համար ամեն ինչ հոգեկան փաստերի է վերածւում, մարդկանց մէջ ամենից քիչ հաւատացողն է: Այդ մարդու համար պատճական բոլոր անցքերը, ամեն դործ և ամեն մի գիտելիք հոգեկան երևոյթների մի խաղ է դառնալում, և ամբողջ տիեզերքը իւր անհամար արեգակներով

Առկ լոյսի զդայութիւնների մի փոքրիկ խմբի նշանակուաթիւն ունի:

IV.

Երազ:

Արդ՝ ինչ բան կատարելապէս քննուած և ստուգուած չէ: Վերցնենք մեր գիտելիքների ամբողջ ծաւալը և սկսենք ժխտել այն ամենը, որի մասին կարող կլինենք տարակուսել: Սակայն իւրաքանչիւր մասնակի գեպի համար պէտքէ տարակուսելու պատճառ ունենանք, քանի որ ընդհանրապէս չենք մերժում մարդում ճշմարտութիւնը իմանալու կարողութիւնը, և ընդունում ենք, որ ընդունակ ենք տարբերել ստոյգը անստոյգից:

Մի կողմ թողնելով ինչ որ Դեկարտն ասում է մանկութեան, նախապաշարմունքների, Աստծու զօրութեան մասին, կանդ առնենք այն փաստի վերայ, որ կատարելապէս գոհացուցիչ է մեր նպատակի համար, իսկ ընդհանուր լինելու կողմից գերազանցում է միւս բոլորին: Այդ փաստը—երազն է: Իւրաքանչիւր մարդ ամեն օր ամենաակներե փորձով իմանում է, որ ինքը մի առ ժամանակ անյողդողդ կերպով հաւատում է այնպիսի բանի, որ ընաւ գոյութիւն չունի: Meditationes-ում Դեկարտը նկարագրում է այդ փաստը վերին աստիճանի կենդանի և զօրեղ կերպով:

«Քանի անգամ պատահել է ինձ, ասում է Դեկարտը, «գիշերը երազել, թէ ես հէնց այս միեւնոյն տեղը հագնուած «նստած եմ կրակի գիմաց, մինչդեռ իրօք հանուած պառ «կած եմ եղել անկողնումա: Ի հարկէ՝ այժմ ինձ թւումէ, «թէ ես արթուն աչքերով եմ նայում այս թղթին,—թէ «այս գլուխը, որ ես շաբժում եմ՝ քնած չէ,—թէ ես «գիտմամբ և գիտակցաբար մեկնում եմ այս ձեռքը և

«որ զգում եմ թէ ձեռք ունիմ. որովհետեւ ինչ որ «երազում է երեսում, ըստ երեսութին, չէ լինում այսափ «վառ և մեկին: Սակայն, բանը ճշտիւ քննելիս՝ մտաբերում եմ, որ չէ որ յաճախ երազում բոլորովին խաչը բուած եմ եղել նման ցնորդներով. և այս մոքի վերայ «կանդ առնելով, ես այն աստիճան պարզ տեսնում եմ, «որ չկան արթնութիւնը երազից խիստ կերպով տարբերող «ստոյգ նշաններ, որ զարմանքից շուտարած եմ. այնչափ «խիստ զարմանքից, որ համարեա թէ պատրաստ եմ կար «ծելու, թէ քնած եմ» (Medit. I.).

Ուրեմն կարելի է տարակուսել այն ամենի վերայ, ինչ որ երազում կարող ենք տեսնել ճիշտ այն կերպ, ինչ կերպ որ տեսնում ենք իրականութեան մէջ: Մենք ընտելացել ենք այն մտքին, թէ ինչ որ արթուն դրութեամբ ենք տեսնում՝ գոյութիւն ունի, իսկ ինչ որ երազում ենք տեսնում՝ գոյութիւն չունի: Բայց եթէ այդպէս է, ապա, երբ կամենում ենք որևէ է գոյութիւն հաստատել, պէտք է ապացուցանենք որ քնած չենք: Սակայն ինչպիսի ապացոյցներ էլ որ հնարելիս լինենք, փորձով գիտենք, որ երազի ժամանակ ամբողջ արթուն վիճակը այդ ապացոյցների հետ էլ կարող է ճշտութեամբ կրկնուել, հետեւաբար այդպիսի գէպքում երազում ստիպուած կրկնենք՝ ըստ ենթագրութեան գոյութիւն չունեցող առարկաները իրեւ գոյութիւն ունեցող ընդունելուրեմն արթուն վիճակում էլ ոչ աւելի քան երազում իրաւունք ունենք պնդելու, թէ քնած չենք և թէ ինչ որ տեսնում ենք գոյութիւն ունի:

Այս ապացոյցը անհերքելի է: Յիրաւի, բոլոր սխալներից, որ մենք անում ենք, և բոլոր պատրանքներից, որոնց ենթարկում ենք, երազը ամենից լիակատար և անգիմագրելի պատրանքն է: Երազում ոչ միայն մեղ արթուն ենք երեակայում, այլ և կարող ենք քնել և զարթնել, կարող ենք մեղ հարցնել՝ «արդեօք քնած չեմ»: Ուստի կատարելապէս իրաւացի ենք, երբ նաև արթուն

վիճակում այդ նոյն հարցն ենք մեղ տալիս:

Ուրեմն՝ այն ամենին, ինչ որ մեր կատարելապէս արթուն եղած բանականութեան և գիտակցութեան բոլոր ուժերով գործած ժամանակ գոյութիւն ունեցող և ճշշմարիտ ենք համարում, ոչ աւելի գոյութիւն և ճշմարտութիւն վերադրել կարող ենք, քան այն բանին, ինչ որ երազում ենք տեսնում: Կարող ենք ենթադրել, թէ ամեն ինչ երազ է: Տեսնենք՝ թէ այն ժամանակ էլ ինչ բան կմնայ:

V.

Անտարակուսելի ուղան:

Պարզ բան է որ կմնայ երազը: Այսինքն՝ կմնայ երեսյթների անթիւ մի բազմութիւն, որոնք սակայն չունեն այն իմաստը, որ սովորաբար վերադրում ենք իրենց: *

* Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար նկատեմ, որ երեսյթ բառը դարձ եմ ածում իւր ամենապարզ առմամբ, որը յաճախ մոռացւում է նոյն բառին վերադրած աւելի բարդ նշանակութիւնների պատճառով: Երեսյթը սովորաբար հակազրում է թէ ութեան, ըստ ինքեան իրին և այլն: Մինչեւ երեսյթը հակազրութիւն է նաև պատճառով, իմաստի, նպատակի, ըստ անդակութեան և այլն. իսկ ամենապարզ առմամբ հակազրութիւն է ընդհանուրի. Երեսյթը սովորապէս որևէ դոյութեան կամ գործողութեան մի մասնակի դէպք է: Այս իմաստով են գործ ածում այդ բառը ֆիզիկոսները և ուրիշ բնագէտները (նատուրալիստները). օրինակ՝ Նիւտոնը իւր հոչակաւոր ասացուածքում. Omnis enim philosophiae difficultas in eo versari videtur, ut a phaenomenis motuum investigemus vires naturae, deinde ab his viribus demonstremus phaenomena reliqua. Այս խօսքերի բուն իմաստն այս է. շարժման մասնակի դէպքերից պէտք է ընդհանուր օրէնք գուրս բերուի և այդ օրէնքի տակ դնուեն մնացած մասնակի դէպքերը:

Երազը չէ համապատասխանում ոչ մի իրականութեան, ոչ մի ճշմարտութեան: Ճիշտ նոյնպէս մեր գործունէութեան և իմացութեան ամբողջ շրջանին, հէնց որ տարակուսենք նրա վերայ, չի համապատասխանի ոչ իրականութիւնը, ոչ էլ ճշմարտութիւնը. ամեն բան թուացող կդառնայ, բայց ինքը գործողութիւնը, որի միջոցով այդ բոլորը մեղ թւում է, իրողութիւն կմնայ, և դորա դոյութիւնը ժխտել անհնարին բան է. որովհետեւ այլ կերպ անկարելի կլինէր մեր առաջին ժխտումը, մեր տարակոյսը իրականութեան և մեր իմացութեան ճշմարտութեան վերայ: Թող ես ասեմ՝ «կապոյտ երկնակամարը դոյութիւն չունի»: կամ՝ «ես չգիտեմ նա դոյութիւն ունի, թէ ոչ»: Ակներեւ է, որ չեմ կարող արտայայտել այդ ժըմատումս կամ չգիտենալս, եթէ նախապէս ընդունած չլինեմ, թէ երկինքը կապոյտ կամար է պատկերանում ինձ: Նմանապէս ասելով՝ «կայ ոչ մի գոյութիւն և ճշշմարտութիւն, այլ ամեն ինչ միայն թւում է թէ դոյութիւն ունի», - ես պէտք է ընդունեմ ոչ մ' այն ընդհանուրապէս այն գործողութիւնը, որով ինձ կարող է թուալ, այլ և բոլոր այն մասնակի օրոշ ձևերը, որոնց գորութեամբ ինձ թւում են հէնց այս և ոչ թէ այլ իրեր:

Այսպիսով ստանում ենք երեսյթների մի ամբողջ աշխարհ, որոնց գոյութիւնը արդէն զերծ է ամեն մի տարակոյսից. որովհետեւ իւրաքանչիւր տարակոյս հնարաւոր է միայն այն պայմանով, երբ ընդունում ենք գրանց գոյութիւնը: Մնացած ամեն ինչ կարող է գոյութիւն ունենալ կամ չունենալ. բայց այդ երեսյթները գոյութիւն չունենալ չեն կարող. այսինքն առանց դրանց անկարելի կլինէր խօրհրդածել, բան չեր լինի մտածելու համար:

Այսպէս՝ իւրաքանչիւր մասնակի դէպքում եթէ կարողանանք տարբերել ինչ որ ենթարկւում է տարակույսի և տարակուսելին դէն ձգենք, մնացորդում կը ատանանք այն ինչ որ անտարակուսելի է: Հետևապէս՝ պէտք է սովորենք սրոշ ձևով վերլուծել մեր գիտելիքների բովանավորենք:

գակութիւնը։ Սովորաբար այդ բանը այսպէս են արտաշայտում՝ պէտք է տարբերենք մեր գիտելիքների սուբյեկտիւ կողմը նրանց օբյեկտիւ նշանակութիւնից։

Եթէ, օրինակ, որևէ առարկայ եմ տեսնում, լսում, շօշափում, կարող եմ ենթադրել որ այդ առարկան իրօք դոյութիւն չունի. բայց նրա պատկերը, ի հարկէ, տարակոյս չկայ որ դոյութիւն ունի։

Եթէ մի բան եմ անում, շրջապատող աշխարհում որևէ է փոփոխութիւն եմ առաջ բերում, կարող է լինել որ իմ գործողութիւնները նոյնքան քիչ դոյութիւն ունենան որքան և այս աշխարհը։ Բայց իմ ջանքերը, ցանկութիւնները, իմ գիտաւորութիւնները տարակոյս չկայ որ դոյութիւն ունեն։

Եթէ մի բան սիրում եմ, մի բանից վախենում, զայրանում եմ մի բանի վերայ. թերևս, իրօք բնաւ դոյութիւն չունեն այն իրերն ու երեսինները, որոնց վերաբերում են այդ զգացմունքներս. բայց իրենք զգացմունքները՝ սէրը, զայրոյթը, վախը այնուամենայնիւ դոյութիւն ունեն։

Եւ ընդհանրապէս իմ ամբողջ կեանքը և իմ ամբողջ աշխարհը կարող է լոկ երազ լինել. բայց այդ երազը անտարակոյս տեսնում եմ. և ոչ միայն իրաւունք ունեմ, այլ և պարտաւոր եմ ընդունել դրա դոյութիւնը, հէնց որ դրա վերայ որպէս երազի վերայ նայեմ։

Դեկարտի համար, և այժմ մեղ համար, այդ դոյութիւնն ընդունելը իմացութեան մէջ մի տատիճան է միայն. մենք յոյս ունենք, որ յաջորդ աստիճաններում նաև ուրիշ շատ բաների դոյութիւն կընդունենք։ Սակայն սկեպտիկ փիլիսոփայութիւնը յաճախ կանդ է առել այդ աստիճանի վերայ և աշխարհի երազ լինելը իր միակ ստոյդ իմացութիւն ընդունել։ Իսկապէս կանախ հայեացքը ճիշտ այդ իմաստն ունի, և Շոպենհաուէրը կատարեալ իրաւունք ունէր մեկնաբանել կանախ փիլիսոփայութիւնը իւր աւելի որոշ բանաձևով՝ «աշխարհն իմ մտապատկերն է»։

VI.

Հ Ա Գ Ի:

Առաջ գնանք։ Տեսնենք ինչ տեսակ է այն դոյութիւնը, որ մենք անտարակուսելի համարեցինք։

Այդ երազը—իմն է. այդ մտապատկերները և պատկերները ինձ են պատկանում. այդ զգացմունքներն ու ձգտումներն իմ մէջ են կատարւում, իմ մէջ դոյութիւն ունեն։ Այդ բոլորն իմն են. բոլորը կազմում են մի շրջան, որը սովորաբար իմ ներքին աշխարհը, իմ հոգեկան վիճակները, տանջանքներն ու գործողութիւններն եմ անուանում։ Այդ—իմ հոգու շրջանն է։ Այստեղ ես հոգի եմ անուանում առ այժմ ոչ թէ մի որոշ էակ, որ որոշ բնութիւն ունի, այլ հէնց ինձ, որչափ ես իմ ճանաչած սուրյեկտիւ աշխարհի տէրն եմ։ Բոլոր հոգեկան երեսիթները, որոնց անտարակուսելի դոյութեանը համոզուեցայ ինձ են պատկանում. դրանք բոլորն էլ, ինչ մտքով էլ որ լինի, իմ սեպհականութիւնն են կազմում. և հէնց այն բանը, որին դրանք բոլորն անտարակոյս պատկանում են, կլինի իմ հոգին, իմ եսը։

Ահա այս է Դեկարտի ego cogito ergo sum-ի ամենից որոշակի և բուն իմաստը։ Եատ սովորաբար Դեկարտի այս խօսքերը ընդունել են և ընդունում են իբրև մի բանավարութիւն, մի եզրակացութիւն, և եզելութիւնը նոյն իսկ այնպէս են պատմում, իբր թէ փիլիսոփան տարակուսել էր իւր դոյութեան վերայ և ապացուցել այդ հաւաքարանութեամբ։ Մինչդեռ այդ գատողութեան, որ արտաքուստ միայն հաւաքարանութեան ձև ունի, իսկական իմաստն այս է՝ նախ և առաջ անտարակուսելի պէտք է համարենք հոգեկան, սուրյեկտիւ երեսիթները. ուստի և իմ դոյութեան անտարակուսելի մասը նախ և առաջ իմ հոգին է, և ոչ թէ մարմինը։

Ճիշտ նոյնպէս շատ սովորաբար cogito բառին տալիս

Են նրա բառացի առումը — մտածել: Գերմանացի՝ փիլիսոփայութեան պատմիչները նոյն իսկ մի առանձին կերպով պնդում են այդ առումի վերայ, որովհետեւ մտածողութեան գաղափարը գերմանական փիլիսոփայութեան մէջ առանձնապէս կարևոր դեր է խաղում: Բայց Դեկարտի սեփական խօսքերից, իններորդ պրակից (տես երես 21), տեսնում ենք, որ սկզբում նա այդ բառով հասկացել է պարզապէս բոլոր հոգեկան, սուբյեկտիւ երևոյթների համագումարը. և հէնց իւր խորհրդածութեան ամբողջ ընթացքի համաձայն՝ Դեկարտն այլ կերպ չէր էլ կարող վարուել, չէր կարող կանդ առնել միայն մէկ խիստ որոշ հոգեկան գործողութեան վերայ, ոչ մտածողական, ոչ էլ այլ տեսակի գործողութեան:

Դեկարտի ամբողջ խորհրդածութիւնը իւր կատարեալ ուժով կարելի կլինի կրկնել ինչ հոգեկան փաստ էլ որ վերցնելիս լինենք, ոչ միայն մտածողութիւնը, այլ և որևէ զգայութիւն, ցանկութիւն, ամենաչնչին ըմբռնութիւնն Օրինակ՝ քաղցր համ եմ զգում, կարող եմ տարած կուսել, արդեօք աշխարհում կայ մեղք և շաքար, և գոյսութիւն ունի իմ լեզուն. բայց չեմ կարող տարակուսել, որ քաղցրութեան զգայութիւնը կայ և ինձ է պատկանում: Այս անտարտկուսելի է, եթէ նոյն իսկ ամեն բան երազում կատարուելիս լիներ և այդ քնից երբէք արթնանալ չկարողանայի: Ուրեմն նախ և առաջ ինձ պիտի ընդունեմ իբրև ընդունակ քաղցրութիւն զգալու:

Principia philosophiae-ի այն առաջին պրակներում, որ մենք վերն առաջ բերինք, Դեկարտը գործ չէ ածում հոգի, anima, բառը, այլ ամեն տեղ մենք է դրում, և Փրանսերէն այդ բառն արտայայտում է esprit, միտք, բառով: Արտայայտութեան այդ եղանակը, ինչպէս նաև օգու բառի գործածութիւնը, կատ ունի ընդհանրապէս Դեկարտի մտքերի և յետագայ խորհրդածութիւնների ուղղութեան հետ: Բայց այստեղ, ակներև է, որ մենք կատարեալ իրաւունք ունենք մենքում առաջանական այն է,

նել: Եթէ mens-ը cogitare անելու ընդունակութիւնն է, իսկ cogitare նշանակում է intelligere, velle, imaginari et sentire (հասկանալ, ցանկալ, երևակայել և զգալ), ապա mens կնշանակէ հէնց այն, ինչ որ մենք հոգի ենք անուանում:

VII.

Ներքին աշխարհ:

Առարկաների և գաղափարների ամեն տեսակ յարաբերութիւն արտայայտելու համար սովորաբար գործ ենք ածում տարածութեան և ժամանակի ձևերը, որոնցից և մեր ասելիքի համար օրինակներ կամ նմանութիւններ ենք յօրինում: Քանի որ հոգեկան երևոյթները բուլորն էլ մեզ են պատկանում կամ մեզ հետ են կատարում, ուստի սովորաբար ասում ենք, թէ նրանք գոյութիւն ունեն մեր ներսը, մեր մէջը. այսպիսով դրանցից կազմում ենք մի առանձին շրջան, մեր ներքին աշխարհ և Այն ժամանակ մնացած բոլոր երևոյթները՝ մեզնից տարբեր արտաքին աշխարհ է կկազմեն:

Հեշտ է համոզուել, որ մեր մարմինն էլ ոչ թէ մեր ներքին, այլ արտաքին աշխարհին է պատկանում: Մեր մարմինը արտաքին աշխարհի միւս առարկաներից միայն այն բանով է տարբեր, որ շարունակ ներկայ է մեր առաջ, կամ մեր շուրջը (խօսելով տարածական գարձուածքներով): Քանի որ արտաքին աշխարհի բոլոր առարկաներն էլ կարող ենք երազել, ապա մարմնի վերաբերմամբ հարկաւոր է միայն աւելացնել, որ մարմինը մենք շարունակ երազում ենք: Աակայն այնպիսի երազներ էլ են լինում, երբ մեզ պատկերացնում ենք առանց մարմնի, կամ մերի փոխանակ՝ մի ուրիշ մարմնով:

Մեր մարմնի մի այլ առանձնայատկութիւնն այն է,

որ նրա մէջ մեր նկատած փոփոխութիւնների մեծ մասը ընթացակցւում է որոշ հոգեկան երեղյթների հետ. այնպէս որ սովորում ենք անքակ կերպով կապել մեր այդ ներքին երեղյթները մարմնի արտաքին փոփոխութիւնների հետ. Սակայն մարմնի մէջ բազմաթիւ այնպիսի փոփոխութիւններ էլ են տեղի ունենում, որ չենք զգում և որպիսիներն այդ դէպքում դիտում ենք ճիշտ այնպէս, ինչպէս ուրիշ առարկաների երեղյթներ։

Երբ ման ենք դալիս և դիպչում մի առարկայի՝ ոչ միայն տեսնում ենք այդ շարժումն ու հպումը, այլ և դգում ենք մեր ձեռքերի կամ մարմնի այլ (շօշափուող) մասերի լարուելն ու զգալը (թէն շատ թեթե և յաճախ ամեննին աննշմարելի ձեռվ)։ Բայց մեր զգացածը ու տեսածը երկու բոլորովին տարբեր բաներ են, կամ շարժումն ու հպումը, եթէ ոչ իբրև պատկերներ, այլ որպէս իրականութիւն հասկանալու լինենք, արտաքին աշխարհի երեղյթներ են։

Նոյն կերպ երեակայենք թէ ձեռքի վրայ վէրք կայօթաւը և բոլոր զգայութիւնները, որ զգում եմ վէրքի մէջ զանազան հանգամանկների՝ գեղեր գործածելու և աստիճանաբար առողջանալու—ժամանակ, իմ ներքին աշխարհին են պատկանում։ Բայց այդ բոլոր զգայութիւնները ինձ գաղափար չեն տալիս վէրքի ձևի, դոյնի, կազմիչ մասերի և այս բոլորի այլ և մասերի տեղաւորման փոփոխութիւնների մասին, այսինքն գաղափար չեն տալիս այն բանի մասին, որ արտաքին աշխարհին է պատկանում։ Միայն ինամոտ և երկարաւե դիտողութեամբ կարող եմ բան իմանալ երեղյթների այդ երկու կարգի փոխադարձ առնչութեան մասին, այսինքն զգայութիւններիս միջոցով իմանալ վէրքի արտաքին վիճակի մասին։

Հետևապէս Դեկարտի հոգին մարմնից տարբերելու եղանակը կատարելապէս ճիշտ է և զոհացուցիչ։ Այն

ամենը՝ ինչ որ կարող է տարակոյսի ենթարկուել, ինչ որ կարելի է երեակայել իբր երազում երեացող՝ արտաքին աշխարհն է կազմում։ Մնացած բոլորը՝ ինչ որ միապէս գոյութիւն ունի թէ երազում և թէ արթնութեան մէջ, պատկանում է մեր ներքին աշխարհին։

VIII.

Ներքին և արտաքին աշխարհի տարբերութիւնը։

Ego cogito ergo sum անտարակուսելի դիտելիքին հասնելուց յետոյ, Դեկարտը, ունենալով ինչպէս ինքն է ասում Արքիմեդէսի ցանկացած յենակէտը, դիմեց գոյութեան և իմացութեան բոլոր ճիւղերը հետազոտելու։ Բայց հոգու մասին եղած հասկացողութիւնների՝ Դեկարտից սկսուած վերլուծութիւնը կարող է գեռ ևս շարունակուել և զարդանալ բոլորովին նոյն սկսուած ուղղութեամբ։

Նախ և առաջ ակներեւ է, որ հոգու մասին մեր ունեցած գաղափարը մինչև այժմ լոկ բացառաբար է։ Նա ամբողջովին կախուած է այն բանից, թէ ինչպէս ենք հասկանում արտաքին աշխարհը։

Հետազոտութիւնը մենք սկսեցինք արտաքին աշխարհից որ և սահմանեցինք՝ իբրև մի ամբողջութիւն այն բուլոր բաների, որոնց գոյութեան մասին կարելի է տարակուսել, ինչ որ կարելի է իբրև երազ ընդունել։ Մի կողմ գնելով այդ արտաքին աշխարհը, մենք մնացինք մեր ներքին աշխարհում, որը առայժմ մեզ համար նրանով է սահմանուում որ դրան մի կողմ դնել չենք կարող, չենք կարող ժխտել դրան։

Հասկանալի է որ ով որ ժխտում է, նա չէ կարող ժխտել իւր ժխտումը, ով տարակուսում է, նա չէ տարակուսում իւր տարակուսանքի վերայ, ով տեսնում է, նա

որպէս տեսնող գոյութիւն ունի. ով մտածում է, նա որպէս մտածող գոյութիւն ունի։ Այսպիսով՝ մեր առաջ մի անտարակուսելի շրջան ունենք որի իմաստը ճիշտ որոշ ուած է։ Կարող էր թուալ, թէ մենք պէտք է ճիշտ հետեւելինք այդ շրջանի երևոյթների բուն և անյօդդողդ իմաստին և նրա սահմաններից գուրս չելնէինք, չմտնէինք մի այլ պակաս ծանօթ շրջան, ուր ամեն բան կարող է տարակոյսի ենթարկուել և մինչեւ անդամ բոլորովին ժըխտուել։ Այն ինչ անզուսպ կերպով այդ շրջանն ենք ընկնում. շարունակ մտածում ենք մեր ներքին աշխարհից գուրս գտնուող մի որևէ բանի մասին։

Եթէ զննենք արտաքին աշխարհի մասին մեր ունեցած մշտակայ միտքը, կտեսնենք որ սրա հիմնական գիծն այն է, որ ընդունում ենք մի ինչ որ գոյութիւն որ մեղանից բոլորովին անկախ է, իւր էութեամբ մեղ հետ ոչ մի կապ չունի։ Ընդունում ենք՝ որ այդ աշխարհը գոյութիւն ունի ինքն ըստ ինքեան, որ նա իւր բոլոր յատկութիւններով և երևոյթներով բնաւ պայմանաւորած չէ մեր յատկութիւններից և երևոյթներից։ Ընդունում ենք՝ որ մենք էլ այդ աշխարհի համար ոչ մի նշանակութիւն չունենք, որ մեր ներկայութիւնը նրա մէջ մի բոլորովին պատահական բան է և որ մեր բացակայութիւնը ոչինչ նորա մէջ չի փոխի։

Իսկ եթէ այդպէս է, այսինքն եթէ մեր մշտակայ միտքը արտաքին աշխարհի մասին այդ է, ապա արտաքին աշխարհը իմացութեան նկատմամբ յայտնի և որոշ յարաբերութեան մէջ պէտք է լինի։ Այն է՝ ակներև է որ նրա համար իմացութեան վերաբերմամբ հնարաւոր են յարաբերութեան հետեւեալ երեք դանաղան դրութիւնները։

1) Արտաքին աշխարհը կարող է մեզ ան յայտ լինել։ Քանի որ մեր և նրա մէջ անհրաժեշտ կապ չկայ, ապա կարելի է ենթարկել, որ մենք նրան բոլորովին չենք իմանում, կամ միայն նրա մի քանի մասերն ենք իմանում, իսկ միւսները բոլորովին չենք իմանում։

2) Արտաքին աշխարհը կարող է ոչ ոքի յայտնի չլինել, այսինքն, նա անպատճառ չէ պահանջում որ մէկը նրան իմանար, ինչպէս որ նա անկախ է մեղանից, այնպէս էլ կարող է անկախ լինել ամեն իմացող էակից։ Հետեւապէս կարելի է երևակայել որ այդ աշխարհը գոյութիւն ունի, բայց թէ իմացող էակները նրան չգիտեն, կամ թէ մինչեւ անդամ նրա մէջ բնաւ ոչ մի իմացող էակ չկայ։

3) Բայց եթէ ենթարկենք, թէ արտաքին աշխարհը մեզ յայտնի է լիովին կամ մասամբ, ապա քանի որ՝ ոչ նա մեզ համար ոչ էլ մենք նրա համար՝ ոչ մի առանձին նշանակութիւն չունենք, պէտք է ընդունենք որ նա նոյն չափով կարող է իմացուել և միւս էակներից, և հետեւաբար կարող է ամենքին յայտնի լինել։

Այս են արտաքին կամ օբյեկտիւ աշխարհի՝ իմացութեան նկատմամբ ունեցած յարաբերութիւնները, որոնք բղխում են նրա անկախ գոյութիւնից։ Բոլորովին հակառակ տեսակի են ներքին կամ սուբյեկտիւ երևոյթների յարաբերութիւնները։

1) Մեր սուբյեկտիւ երևոյթները, սուբյեկտիւ լինելով, մեզ անպատճառ յայտնի են, և յայտնի են առանց պատրանքի և սխալի, այլ կատարեալ սուստութեամբ։ Արևի և երկնքի պատկերը, իբրև պատկեր, իբրև իմ մտապատկեր, ինձ կատարելապէս յայտնի է. որովհետեւ հէնց ասած էլ իմ պատկերացնելն է և ուրիշ ոչ մի բան այստեղ ես չեմ հասկանում։

2) Զէ կարելի մտածել ոչ մի սուբյեկտիւ երևոյթ որ ոչ ոքի յայտնի չլինելու. ամեն սուբյեկտիւ երևոյթ պատկանում է որ և է իմացող էակի և յայտնի է նրան ճիշտ այնպէս, ինչպէս մեզ յայտնի են մեր մտապատկերը ները և զգացմունքները։

3) Ոչ մի սուբյեկտիւ երևոյթ չէ կարող յայտնի լինել ոչ միայն ամենքին, այլ և որևէ մէկին բացի այն էակից որի մէջ նա կատարեւում է։ Ինչպէս որ իմ մտքերը և զգացմունքները միայն ինձ են յայտնի, յայտնի վերը

ցայց արուած անխուսափելի և կատարեալ իմաստով, այնպէս
էլ իւրաքանչիւր այլ հոգու մտքերն ու զգացմունքները
նոյն իմաստով յայտնի են և կարող են յայտնի լինել մե
միայն նոյն այդ հոգուն:

Ահա արտաքի և ներքին աշխարհի ճիշտ և պայծառ
տարբերութիւնը, որ ուղղակի բղխում է մեր ելակետից:
Ընդունելով որ արտաքին աշխարհը մեզ համար կարող է
տարակուսելի լինել, մենք դրանով նրան մեզանից ան-
կախ գոյութիւն վերագրեցինք, հետևաբար և իսկական օբյ-
յեկտի, իմացութեան իսկական առարկայի, բոլոր
յատկութիւնները: Եթէ մի բան իմացութեան առարկայ է,
ապա այդ առարկան կարող է իմացուել ամենքի կողմից.
բայց այդ իմացութիւնը զանազանակերպ կլինի նայած
իմացող էակներին և սրանց գեպի առարկան ունեցած յա-
րաբերութիւններին. իմացութիւնը կարող է լինել ուղիղ և
սխալ, լիակատար և թերի. կարող է լինել ստոյգ և տա-
րակուսելի. կարող է վերջապէս ընաւ գոյութիւն չու-
նենալ: Իսկ սուբյեկտիւ աշխարհը անխուսափելի և կա-
տարեալ կերպով յայտնի լինելով իւր տիրոջը՝ տարակու-
սանքի առարկայ չէ սրա համար, բայց և ուրիշ ոչ ոքի համար
իմացութեան առարկայ չէ:

IX.

Հոգի եւ նիւթ:

Կախընթացը աւելի պարզ կլինի, եթէ զննելի
գաղափարները իրենց գործածական անուններով կոչենք:
Չուտ սուբյեկտը հոգին է, հոգեսր էակը. զուտ օբյեկտը
նիւթն է, նիւթական իրերը: Կարելի է առել՝ Դեկարտն
առաջինն էր, որ նիւթի և հոգու միջև պարզ սահման գծեց,
մի սահման որ անխախտ կերպով մինչև այժմ գոյութիւն
ունի, և հետեւապէս Դեկարտն առաջինն էր, որ թէ նիւ-

թի և թէ հոգու մասին ուղիղ գաղափար տուեց:

Նիւթը զուտ օբյեկտ է, այսինքն մի բան որ կա-
տարելապէս իմանալի է, բայց բնաւ չիմացող: Նիւթը իւր
մէջ ոչինչ սուբյեկտիւ բան չունի՝ ոչ իմացութիւն, ոչ զգաց-
մունք, ոչ ցանկութիւն: Նրա մէջ ոչինչ ներքին, մեր իմա-
ցութեանն անմատչելի բան չկայ, այլ նրա մէջ ամեն ինչ
արտաքին է, իմանալի:

Հոգին ընդհակառակին զուտ սուբյեկտ է, այսինքն
իմացող, բայց բոլորովին անմատչելի օբյեկտիւ իմացու-
թեան համար: Հոգին իւր մէջ չունի ոչինչ հանրամատչելի,
ոչինչ արտաքին բան, օբյեկտիւ աշխարհի նման իմացու-
թեան ենթարկուող: Հոգու մէջ ամեն ինչ ներքին է, ծած-
կուած օտարի հայեացքից:

Իհարկէ մեզ ամեն օր և մեծ դիւրութեամբ մատ-
չելի են մեզնից բոլորովին անկախ այլ հոգեսր էակների
սուբյեկտիւ երեսյթները: Մենք ինքներս էլ շարունակ ար-
տայայտում ենք մեր սուբյեկտիւ երեսյթները, ձգտում
ենք հազորդել և իրօք հազորդում ենք մեզանից անկախ
այլ էակների: Յայց եթէ ուշագրութեամբ դննենք, կտես-
նենք որ թէ առաջին և թէ երկրորդ գէպքում իմացու-
թիւնը կատարում է օբյեկտիւ աշխարհի միջնորդութեամբ:
Իսկ անմիջական հազորդակցութիւն, որ բոլորովին անհնա-
րին բան է, տեղի չէ ունենում: Մենք երբէք չենք ըմբռու-
նում ուրիշի ոչ մտքերը, ոչ զգացմունքները, այլ ըմբռնում
ենք լոկ նրա ձայնի հնչյւնները, դիմագծի փոփոխու-
թիւնները, աչքերի շարժումները, շարժուածքները և այլն,
և արգեն այդ օբյեկտիւ երեսյթներով, ինչպէս նշաննե-
րով կամ սիմբոններով, գլխի ենք ընկնում նրա զգաց-
մունքների և մտքերի մասին: Այս գէպքերում մենք մեր ի
նման ութեամբ ենք դատում և ուրիշ ոչ մի եղա-
նակով դատել չենք էլ կարող: Մի պատմութիւն լոե-
լիս կամ ուրիշի գործողութիւնները դիտելիս աշխա-
տում ենք ընտրել մեր ներքին աշխարհում այնպիսի ե-
րեսյթներ, որոնք յարմար լինեն այդ խօսքերին և շար-

ժումներին, և այս երեսոյթները վերադրում ենք այն մարշուն որին գիտում ենք: Այս գէպքում՝ կարող ենք սխալուել երկու պատճառով: կամ այն պատճառով, որ խօսողի խօսքերին և շարժուածքներին բոլորովին չեն հաշմապատասխանում նրա իրական զգացմունքները, ինչպէս օրինակ լաւ գերաւաններինը և լաւ կեղծողներինը, կամ այն պատճառով, որ մեր մեկնութիւնն է սխալ, օրինակ, երբ մեր ներքին աշխարհում չկան այնպիսի զգացմունքներ ու մաքեր, որոնք կարեոր են ուղիղ մեկնելու համար: Բիրտ մարդը հոգեկան նուրբ և քնքոյշ շարժումներ չեն հասկանում: շահասէր մարդուն անհասկանալի է մեծահոգութիւնը և այլն:

Այս նկատմամբ խիստ հետաքրքրական է Դեկարտի կարծիքը անհասունների մասին: Ինչպէս յայտնի է, Դեկարտը սրանց մէջ չէր ընդունում ոչինչ հոգեոր բան, ոչ մի հոգի: Հետեւաբար՝ Դեկարտն ենթադրում էր, թէ անհասունների բոլոր ձայները և շարժումները ոչ մի բան չեն նշանակում, այլ պարզապէս լոկ ձայներ և շարժումներ են: Այս հայեւացը անհասունների վերաբերմամբ, ի հարկէ, անարդար է: Բայց և այնպէս այդպիսի մի հայեւացքի հնարաւոր լինելը պարզում է մեզ համար ինսդիրը, նման այն հանգամանքի որ իւրաքանչիւր րոպէ մենք հնարաւորութիւն ունենք երեակայելու, թէ արթուն չենք և բոլոր մեր շըմապատող բաները երազում ենք տեսնում:

Արտաքին աշխարհի վերաբերմամբ միշտ իրաւունք ունենք հարցնելու՝ արդեօք չէ թւում մեզ: Նոյնպէս էլ ուրիշ մարդկանց սուբյեկտիւ աշխարհի վերաբերմամբ պէտք է շարունակ մեզ հարց տանք՝ արդեօք այն կայ նրա մէջ ինչ որ մենք ենք ենթադրում, և արդեօք ճիշտ այնպէս կայ ինչպէս որ ենթադրում ենք:

Ամենահասարակ գէպքերում միմեանց հասկանալու համար կարող ենք արտաքին փորձին գիտել. որուշում ենք օբյեկտիւ աշխարհի այն պայմանները, որոնց հետ միաժամանակ կատարւում է որոշ սուբյեկտիւ երեսոյթ:

Այսպէս, դիցուք, իմանալու համար՝ թէ ինչ բան է քաղցր համը, հարկաւոր է որ մեր լեզուի վրայ թքի մէջ մի կտոր շաքար լուծուի: Երկու մարդ, որ պայմանաւորուել են քաղցր կոչելու այն զգայութիւնը որ այդ գէպքում կը տացուի, ընդհանրապէս ասած այդ բառով միենոյն զգայութիւնը կհասկանան: Սակայն այդ անպայման կերպով ասել չէ կարելի. նոյն իոկ ընդհակառակը պէտք է անպատճառ մէկի զգայութեան մէջ՝ համեմատած միւսինի հետ՝ մի ուրոյն նրբերանգութիւն ենթադրել: Ամեն սուբյեկտիւ բան անփոխութելի և անտարակրուտելի լինելով այն սուբյեկտի համար, որին նաև պատկանում է, չունի այն հանրական սուբյութիւնը և անփոխութիւնը, որ յատուկ է օբյեկտիւ աշխարհին:

Օբյեկտիւ աշխարհը ընդհանրապէս մի անխուսափելի շրջան է միմեանցից անկախ հոգեոր էակների միմեանց ճանաչելու համար: Ես չեմ կարող իմ մէտքը կամ զգացմունքը յայտնել ուրիշ հոգեոր էակներից բացառապէս մէկին: Ես ամեն անդամ անխուսափելի կերպով մի այնպիսի արտայայտութիւն կանեմ: Որ մատչելի է նաև ուրիներին, որովհետեւ հէնց որ մի օբյեկտիւ բան է երեան գալիս, ապա նաև երեան է գալիս իւր բոլոր յատկութիւններով, հետեւաբար ինչպէս մի հանրամատչելի բան:

Ահա թէ ինչու համար ենք ասում, թէ մեր հոգին փակուած է մեր մարմնի մէջ, կամ շրջապատուած է նրանով ինչպէս մի պատեանով: Այդ նշանակում է թէ մարմինը օբյեկտիւ աշխարհի այն մասն է, որ իւր երեսոյթների մէջ շարունակ ցոլացնում է մեր հոգու երեսոյթները և առանց որի հոգին ոչինչ չէ կարող արտայայտել, ոչ էլ կարող է ըմբռնել որևէ օտար արտայայտութիւն: Միայն այս մոքով պէտք է հասկանանք՝ հոգու և մարմնի կապակցութիւնը: Այսինքն՝ այս անփոխու կապակցութեան չնորհիւ ոչ մարմինն է սուբյեկտիւ գառնում, ոչ էլ հոգին օբյեկտիւ սութիւն ստանում, այդ երկու աշխարհները խիստ որոշ սահմանագծով միմեանցից զատուած են մնում: բայց մէկը

միւսի արտայայտութեան համար է ծառայում այնպէս, ինչպէս որ տառերը հնչիւններ են արտայայտում և հընչիւնները՝ մտքեր:

X.

Նիւբական աշխարհի իմացութիւնը:

Հոգու մասին կաղմած գաղափարը՝ նիւթի վերաբերամբ Դեկարտին որոշ գաղափարի բերեց: Ինչպէս հոգու, այնպէս էլ նիւթի վերաբերամբ կարելի է տաել՝ Դեկարտին առաջինը եղաւ որ պարզ և ճշգրիտ հասկացութեան հաստաւ: Դեկարտը նիւթից հեռացրեց որևէ է սուբյեկտիւութեան նշոյն անդամ, և այդ պատճառով բառի բուն նշանակութեամբ նրան անկեն գան գարձրեց (հետաքրքրական է նկատել, որ խօսելով նիւթի անկեն գան ու թեան մասին ակնյայտնի մի բացասական գարձուածք ենք գործ ածում: Հաստատում ենք, թէ նիւթի էութեանը յատուկ է կեանքի բացակայութիւն: այնպէս որ նախ պէտք է իմանանք՝ թէ ի՞նչ բան է կեանքը, և ապա միայն կարելի կլինի հասկանալ նիւթի այդ յատկութիւնը): Այստեղից ստացուեց մեք են այ ական հայեացքը բոլոր նիւթական երեսյթեների վերայ, ամբողջ արտաքին աշխարհի վերայ, այսինքն հենց այն հայեացքը, որ բնագէտների (նատուրալիստների) մէջ մինչ ցարդ իշխող է, որին պէտք է վերադրել թէ նրանց ամենամեծ յաջողութիւնները բնութեան հետախուզման մէջ և թէ նրանց ամենամեծ մոլորութիւնները, օրինակ նրանց մէջ շատ սովորական բան գառած մատերիալիզմը:

Գտնելով, այսպէս ասած, թէ ի՞նչ բան է նիւթը, Դեկարտը ձեռնարկեց նիւթական աշխարհի մասին գիտութիւններ կառուցանել: Զարմանալի սրամտութեամբ և

միանդամայն արտակարդ աշխատասիրութեամբ ու եռանգով, նա ստեղծագործեց իւր մեք ենայաբանութիւնը, ֆիզիկան, ֆիզիկական աստղագիտութիւնը, բնական ասդամբ առաջար առաջնութիւնը (Պարզութեան համար մենք այստեղ Դեկարտի մշակած գիտական շրջանների արդի անուններն ենք գործ ածում): Այդպիսի ահագին շենք կառուցանելիս Դեկարտը շատ սխալներ արեց: սակայն նրա ստեղծած գիտութիւնների ոգին և մեթոդները նոյնն էին, որոնցով այդ գիտութիւնները զարգանում են մինչև այսօր: Դեկարտի սխալներն իսկ արդէն նոր սխալներ էին, նման այն սխալների որոնք մինչև այժմ էլ գործում են և, ի հարկէ, յառաջիկայում էլ կործուեն բնագէտների (նատուրալիստների) կողմից: Մէկ խօսքով Դեկարտի ժամանակ և նրանից յետոյ ֆիզիկական գիտութիւնների արդէն նոր պատմութիւն է սկսում, որ շարունակում է մինչև այժմ: մի պատմութիւն՝ որ եթէ Դեկարտից չէ սկիզբն առնում, ապա անկատած նրանից է ստանում իւր կատարեալ ոյժը:

Այդ շարժմանը, ինչպէս արդէն ասացինք, մենք պարտական ենք ամենամեծ գիտակերով, գիտութեան իսկական հրաշալիքներով, որոնց հաղիւ թէ կարողանան հաւասարուել մարդկային մտքի որևէ ուրիշ մեծագործութիւններ: Պարզ և ճշգրիտ գիտելիքների ձգտումը իւր համար հարուստ և փարթամ մնունդ գտաւ:

Երբ փիլիսոփայական վերացուցման գորութեամբ բնութիւնից հեռացըրինք ամեն մի կենդանութիւն, երբ վարժուեցինք ուշագրութիւն չգարձնել նրա երկայթների գեղեցկութեան և կենդանի արտայայտութեան վրայ, այլ սկսեցինք նայել նրա վրայ իրեւ մի անկենդան մեքանիզմի վրայ, գտանք այն օրէնքները որոնց ենթակայ է այդ մեքանիզմը, և շարունակում ենք անվերջ գտնել սրա շինուածքի մանրամասնութիւնները:

Այսպէս՝ մարդկային մտքի այն յեղաշրջումը, որ իւր



գիտակցական արտայայտութիւնը դուաւ Դեկարտի վիլիս սովորութեան մէջ, մի մեծ և արդասաբեր յեղացը ում էր Այստեղ մեր առաջ աւելի պարզ քան այլ դէսքերում երեւան է գալիս մարդկային մտքի ընթացման դաշտանիքը և իմացութիւն ասուած քանի բնութիւնը:

XI.

Իմացութիւնն ընդհանրապէս:

«Գիտակցութիւնը», դրում է Դեկարտը, «իմանում ենք ամեն նիւթական առարկայից աւելի առաջ և աւելի ստոյդ կերպով. որովհետեւ նրան արդէն գիտակ ենք, իսկ միւս բոլորի վերայ դեռ տարակուսում ենք» (§ 8-րդ):

Իբրև հետեւանք այդպիսի հասկացողութեան՝ Դեկարտը cogito ergo sum-ը ոչ միայն իբրև իւր փիլսոփայութեան ելակէտ ընդունեց, այլև կարծում էր, թէ պէտք է գիտակցութեան հետազոտումից սկսել (իսկ գիտակցութիւն ասելով, ինչպէս գիտենք, նա հասկանում էր հոգեկան երևոյթների ամբողջ շրջանը), և որ այս շրջանում պիտի ստացուեն մեղ համար ամենահաստատ և պարզ գիտելիքներ, որոնց վերայ և պիտի յենուեն բոլոր մնացածները:

Սակայն արդիւնքները այդ ըստ երեւութիւն կատարելապէս պարզ միտքը չարդարացրին: Հէնց առաջին քայլոց Դեկարտը այդ ճանապարհի վերայ այնպիսի դժուարութիւնների և բարդութիւնների հանդիպեց, որ թէ նրա ստեղծած հոգեբանութիւնը նոյնպէս ելակէտ եղաւ նոյն գիտութեան յետագայ բոլոր զարդացումների համար, բայց ամենեին չէ կարող հաւասար համարուել Դեկարտի՝ նիւթական աշխարհի մասին կառուցած գիտութիւններին: Եւ մինչեւ այժմս էլ հոգեբանութեան պատմութիւնը ամենեին չէ ներկայացնում այն հաստատուն

և փայլուն զարդացումը, որ տեսմում ենք բնական գիտութիւնների մէջ:

Ակներեկ է որ մի սխալ է եղել հոգեկան երկայթակի՝ դէպի իմացութիւնն ունեցած յարաբերութեան մասին եղած մտքի մէջ: Այն բանից որ այդ երկույթները մեզ համար ամենից անտարակուսելին և ստոյգն են ամենափառ չէ հետեւում՝ որ իմացութեան համար ամենից մատչելին են, և մինչեւ անդամ՝ որ առհասարակ մատչելի են իմացութեան համար: Նոյնպէս՝ այն բանից որ նիւթական աշխարհը կարող է տարակոյսի ենթարկուել չէ հետեւում որ աւելի դժուարութեամբ կամ աւելի թոյլ կերպով է իմացում, քան սուբյեկտիւ աշխարհը:

Ընդհակառակն ակներեկ է որ օբյեկտիւ աշխարհը մեր իմացութեան իսկական առարկան է, մեր իսկական օբյեկտը, որի վերաբերմբ աղատ և ուղիղ կերպով կարելի է գործադրել մեր բոլոր իմացական միջոցները և կարողութիւնները. մինչդեռ սուբյեկտիւ աշխարհը իմացութեան հասարակ եղանակներից խուսափում է և մեր մըտքից հակադարձ եղանակներ, ուրոյն ջանքեր և արտասովոր հայեցակէտ է պահանջում:

Ա priori ոչ մի հիմք չկայ կարծելու, թէ այդ երկու աշխարհները իմացութեան համար միանման առարկաներ են. իսկ եթէ դրանք դէպի իմացութիւնը տարբեր յարաբերութիւն ունեն, ապա հարկաւոր է պարզ և ճշգրիտ կերպով ցոյց տալ այդ տարբերութիւնը և հաստատ կերպով հետեւել նրան:

Շատ մեծ սխալ են անում, մեր կարծիքով, նրանք, որոնք հոգին և մարմինը իմացութեան մէջ մի շարքում են դասում և ասում, օրինակ, իբր թէ և մէկի և միւսի էութիւնը մեղ հաւասարապէս անյայտ է, թէ նիւթի գաղափարը նոյնչափ դժուար է որքան և հոգու գաղափարը կամ դեռ աւելի ևս դժուար, կամ թէ որ ընդունելով ելեկտրականութեան մեզ անյայտ սկզբունքը պէտք է ոչ պակաս պարզութեամբ և ստուգութեամբ:

նաև հոգեկան երևոյթների առանձին սկզբունքն ընդոււնենք, և այն։ Դեկարտից յետոյ, նրա զարմանալի վերլուծութեան հիման վերայ, հոգեկան և նիւթական աշխարհի սոյնանման համեմատութիւնները շատ սովորական դարձան։ Իսկոյն յայտնուեցան և մինչև այժմս էլ գոյութիւն ունեն այսպէս կոչուած մատերիալիստները և ուղիւրիտական երեսները։ Առաջինները սկսեցին հաստատել և մինչև այժմս էլ հաստատում են, թէ գոյութիւն ունի միայն օբյեկտիւ աշխարհը որ կազմուած է Դեկարտի անկենդան նիւթից։ Էսկ երկրորդները, թէ բացի նիւթից այդ նիւթական աշխարհին կից և նրա մէջ, նրա ներսը, գոյութիւն ունի հոգեոր աշխարհ, էակների մի այլ դաս որ ուրիշ յատկութիւններ ունի. օրինակ՝ անտեսանելի, անշօափելի են, բայց յայտնում են նիւթական աշխարհում որոշ գործողութիւններով և մատչելի են ներքին գիտողութեան, այնպէս որ դրանց կարելի է մտքի նոյն ընդհանուր ձևերի և օրէնքների տակ դնել ինչպէս և նիւթական տուարկանները։ Այստեղից առաջ եկան անվերջ վէճեր և ջանքեր, որով սպիրիտուալիստները սովորաբար աշխատում էին կամ տարակոյսի ենթարկել զուտ—օբյեկտիւ գիտելիքների հաստատ լինելը, կամ ապացուցանել։ Որ հոգեոր էակների մասին ունեցած գիտելիքները նոյնչափ հաստատուն և պարզ են, որչափ և նիւթական առարկաների մասին եղած գիտելիքները։

Սպիրիտուալիզմի համար յաճախ գործ է ածւում գուալիզմ աւելի ընդհանուր անունը այն իմաստով, թէ այդ հայեացքը աշխարհում երկու տարր, երկու տեսակ էակներ է ընդունում։ Նոյնպէս և մատերիալիզմի համար գործ է ածւում մոնիզմ անունը, որովհետեւ այստեղ ընդունում է մէկ սկզբունք, միասեռութիւն ամբողջ գոյութեան։ Եւ քիչ ջանքեր չարուեցան և արւում են այդ միասեռութիւնը որքան հնարաւոր է լայն կերպով հասկանալու, հնարելու այնպիսի հիմնական սկզբնական մի էութիւն որը իւր մէջ թէ հոգի և թէ նիւթ պա-

բունակէր, այնպէս որ այդ մոնիզմից ինքն ըստ ինքեան դուալիզմ բղիւէր։

Մինչդեռ իւրաքանչիւր չնախադաշտարուած հայեացքի համար պարզ է, որ միայն զուտ օբյեկտիւ աշխարհն է մարդկային իմացութեան իսկական ասպարէզը։ Այն հանգամանքը որ դա կարող է տարակոյսի ենթարկուել, ոչ թէ հակառակ նորա, այլ յօգուտ նորա է, որովհետեւ այդ յատկութիւնը, տարակուսելիութիւնը, միշտ վերագրում ենք իսկական իմացութեան։ Իմացութիւնը, ըստ մեր սովորական հասկացողութեան, մի այնպիսի բան է որ մեր անհրաժեշտ պատկանելիքը չէ. բայց որը սակայն կարող ենք ձեռք բերել։ Իմացութիւնը չէ գտնելում մեր հոգու մէջ, բայց կարող ենք ստանալ, տիրել նրան, և հետեւաբար նաև կորցնել և հնար չունենալ նրան մատչելուն եւ սովորաբար այնքան աւելի գին ենք տալիս իմացութեանը, այնքան մեղ համար նա աւելի հետաքրքրական է, որքան աւելի գժուար է նրան մատչելը, որքան աւելի ընդարձակ է այն տարածութիւնը (մտառու կամ նիւթական), որ մեղ բաժանում է նորա առարկայից։ Դորա հակառակ հէնց որ մենք համոզուենք՝ որ մի գիտելիք անտարակուսելիների թուին է պատկանում, որ նա հետեւանք է նոյն ինքն մտածողութեան օրէնքների կամ մեր հոգու յատկութիւնների, իսկոյն և եթ այդ գիտելիքը իւր արժեքը կկորցնի մեր աչքում և ոչ միայն չենք ուրախանայ մեր անտարակուսելի հարստութիւնով, այլ ընդհակառակն պատրաստ կլինինք մտածելու, թէ այդ սուբյեկտիւ գիտելիքները աշխարհը մեղանից թաքցնում են և արդեւք են լինում նրա իրական էութիւնը իմանալու։

Ահա թէ ինչն է էմպիրիզմի մեծ գրաւչութիւնը, այն վարդապետութեան, որ մեր բոլոր գիտութիւնների ազբիւրը փորձնում է դարձնում։ Փորձը ընդհանուր և անհրաժեշտ գիտելիքներ չեն տալիս. և հետեւաբար փորձից ստացուած իւրաքանչիւր արդիւնք ենթակայ է.

տարակոյսէ. բայց մի և նոյն ժամանակ իւրաքանչյւը էմպիրիկ արդիւնք իսկական իմացութիւն է, որովհետեւ ենթադրում է թէ նա չէ պարունակում իւր մէջ ոչինչ սուբյեկտիւ բան, ոչ մի խառնուրդ մեր սեպհական մտքի:

Ուրեմն արտաքին աշխարհը հէնց նրա համար կարող է տարակոյսի ենթակայ լինել որ իսկական օբյեկտ է: Նրա՝ ուսումնասիրութեան մատչելի լինելը մեր ժամանակում այնքան ակնյայտնի է, որ չէ կարելի առանց զարմանալու յիշել թէ այդ ուսումնասիրութեան մէջ արագ յաջողութիւնները որքան ուշ կատարուեցին: Կարելի է ընդունել, որ գործը ինչպէս հարկն է առաջ է գնում միայն վերջին երեք դարերում. և երբ զննում ենք նախկին ժամանակների պատմութիւնը, կարծես, տեսնում ենք թէ ինչն էր այդ գործի արդելքը: Մարդկութիւնն այն ժամանակ շատ էր զբաղուած իւր ներքին, սուբյեկտիւ կեանքով: Զգացմունքն ու երևակայութիւնը այնշափ վառ էին, որ սառն, հանդարտ, օբյեկտիւ հետազոտութեան էլ տեղ չէր մնում:

Սակայն ներկայ ժամանակում բնութեան ուսումնասիրութիւնը իւր յաջողութեան նկատմամբ աւելի բարձր է կանգնած քան մտաւոր գործունէութեան միւս բոլոր շրջանները, և ընդհանրապէս ասած կատարելապէս իրաւացի կերպով է հեղինակութիւն վայելում: Բնական գիտութիւնների մեթոդները մի օրինակ են, որին ձըգտում են հետեւել հետազոտութեան միւս շրջանները: Հոգեբանութեան մէջ էլ շատ անգամ ծանուցուել է, որ պէտք է հետեւել նատուրալիստների (բնագէտների) մեթոդներին:

Առանց նախապաշարման նայելով մտածողութեան պատմութեան այս բոլոր փաստերի վերայ, կարծում եմ, հեշտ է համաձայնել այն մտքի հետ, թէ իմացութեան վերաբերմամբ սուբյեկտիւ աշխարհը խորապէս տարբերում է օբյեկտիւց: Նիւթական բնութեան լուսաւոր աշխարհի հետ համեմատած՝ հոգին մթին և խորհրդաւոր

մի շրջան է, որ հետազոտութեան համար հաղիւթէ թոյլ է տալիս նոյն այդ մեթոդները: Արան մենք լիովին կը համոզուենք, եթէ սուբյեկտիւ աշխարհին աւելի մերձենանք և փորձենք նրա առաջ երես առ երես կանդնել:

իրեւ արդիւնք պիտի սրանց կատարեալ հաստատումը
ստացուի և ուսումնասիրելիք եղեղյմների ամբողջ գաղտնիքը
առաջուց յայտնի ընդհանուր դաղափարների միշտով

պիտի լուծուի:

Ուրիշ բան է հոգեբանութեան մէջ Եթէ մի
ամբողջ պատրաստի բնազանցադիտութեան (մետաֆիզիկայի) կամ, այսպէս կոչուած, գոյաբանութեան պաշար
չունենք, եթէ ուղղակի հոգեկան երկոյթների ու-
ստամնասիրութիւնից ենք սկսում (ինչպէս որ այդ սովորաբար և բնականորէն անում են. ինչպէս արեց նաև Դեկ-
կարտը), եթէ ընդհակառակն այդ ուսումնասիրութիւ-
նից միտք ունենք բարձրանալ մինչև որևէ բնազան-
ցադիտութեան, ապա պարզ է որ պէտք է առաջուց
պատրաստ լինենք, որ մեզ ձեռք չեն տայ մեր սովորա-
կան գաղափարները, որ ստիպուած կլինենք նոր կատե-
գորիաներ սահմանել և սրանցից մէկից միւսին անցնել,
մինչև որ աւարտենք ամբողջ ուսումնասիրելի շրջանը: Իսկ
քանի որ աւելի գժուար բան չկայ քան մի իրօք—նոր
գաղափար մտածել, և մոքի համար աւելի մեծ գայթակ-
զութիւն չկայ քան այն, որ նա երկոյթները կարգում է
հին, վաղուց ծանօթ գաղափարների տակ, ապա այստեղ
մի գժուար և վտանգաւոր գործի ենք ձեռնարկում:

Ի հարկէ կարող ենք և հակառակ տեսակի սխալ
անել. այսինքն կարող է պատահել որ երբեմն մի նոր
կատեգորիայ ստեղծենք, որի կարիքը ամենեւին չկար: Բայց
այսպիսի սխալներ երբեք այն հնշտութեամբ չեն կատար-
ւում: ինչպէս որ սովորաբար ենթագրում են: Եթէ
յիշենք մարդկային մաքի պատմութիւնը, կհամոզուենք
որ երբեմն մեծ առատութեամբ հանդէս եկող կատե-
գորիաները, որոնցից մի քանիսը ամբողջ գարեր մտքեր
են զբաղեցրել և ամենքի բերանում եղել, հենց նրա հա-
մար անպէտք են եղել, որ ոչինչ նոր բան չեն պարունա-
կել, այլ ստեղծուած են եղել հին, սովորական գաղափար-
ների նմանութեամբ, եղել են այդ գաղափարների սխալ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈԴՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

I.

Յատուկ կատեղորիաներ:

Մի այնպիսի առարկայի մասին ենք խօսում որի
համար ոչ մի պատրաստի գաղափարի վերայ յենուել չենք
կարող, այլ որը պահանջում է որ ինքներս սահմանենք և
որոշենք այդ առարկան հասկանալու կատեղորիաներ: Հո-
գեբանութիւնն այս նկատմամբ այն չէ, ինչ որ օրինակ
ֆիզիկան, երկրաբանութիւնը, կամ նման այլ գիտու-
թիւնները: Ֆիզիկայում, օրինակ, այն գաղափարները,
որոնց տակ պէտք է դասուին ուսումնասիրելիք երկոյթ-
ները, առաջուց տրուած են և բացատրելու ամենեւին
կարիք չկայ: Դրանք են մաթեմաթիքական գաղափարները,
տարածութեան ու ժամանակի ձևերն ու օրէնքները և
մեքենայաբանական գաղափարները: Եւր առարկան ու-
սումնասիրելիս ֆիզիկոսը առաջուց գիտէ թէ ինչ է գըտ-
նելու. այն է՝ նա կդանի որ տուած երկոյթները իրեն
յայտնի ընդհանուր օրէնքների մի մասնակի գէպք են: Այսպէս
օրինակի համար՝ հիւսիսափայլը կամ երկրի մագ-
նիսականութեան փոփոխութիւնները հետազոտելիս, ֆիզի-
կոսը չի ենթագրի որ մի խոտորումն է գտնելու իներցիայի
օրէնքից կամ էներգիայի պահպանութեան օրէնքից, որ
առհասարակ հանդիպելու է անկենդան բնութեան իրեն
յայտնի օրէնքների որևէ է խանդարման: Բնդհակառակն,

գործադրութիւն անհամապատասխան առարկաների վերաբերմամբ։ Կարելի՞ է արդեօք որ և է նոր բան գտնել, օրինակ, արխէի, կենսական ոյժի, ջերմածնի և այլն դաշտավարների մէջ։ Այն ինչ իրօք—նոր դաշտավարները մարդկային մտքի մէջ մի անդամ ծագելուց յետոյ այլւո երբէք չեն անհետանում, այլ միայն պարզում են և աւելի ճիշտ կերպով սահմանագծւում։

II.

Ներքին դիտողութիւն։

Հոգու աշխարհը, ինչպէս առացինք, մի մութ և խորհրդաւոր աշխարհ է։ Այդ աշխարհը դիտելու, մեր հայեացքը դէպի մեր ներսը ուզզելու համար (ինչպէս սովորաբար տառւմ են), պարզ է որ ջանք պիտի դործ դնենք մեր մտքեւին անսովոր ընթացք տալու, հակադարձ իւրեց սովորական ընթացքին, և հասկանալի է որ չենք կարող այս դէպքում նոյնքան պայծառ տեսնել ինչպէս մեր իմացման սովորական ընթացքի ժամանակ։

Այդ ջանքը շատ լաւ նկարագրում է Դեկարտը.

«Այժմ», ասում է նա, — «ես կիսիեմ աչքերս, կիսեմ ականջներս, կստիպեմ որ բոլոր զգայութիւններս լռեն։ «մտքից կհեռացնեմ նիւթական առարկաների բոլոր պատեհները կամ առ նուազն, քանի որ այդ հազիւթէ հնաւաւոր լինի, դրանց սին և սուտ կհամարեմ, և այսպիսով միայն ինքս ինձ հետ խօսելով և ինքս ինձ դիտելով՝ կաշուատեմ որքան կարելի է ինքս ինձ աւելի յայտնի և ծանօթ դարձնել։ Ես—մի դիտակցող էակ եմ, այսինքն մի այնպիսի էակ որ տարակուսում է, հաստատում է, ժըլս տում է, մի քանի բան դիտէ, շատ բան չդիտէ, սիրում է, ատում է, ցանկանում է, չէ ցանկանում, այլ և երեակաշյում է և զգում է. ինչպէս արդէն առաջ նկատեցի»

«թէև իմ զգացած և երեակայած առարկաները դուցէ «ինձնից դուրս և ինքնին ոչինչ են, այնուամենայնիւ «ես համոզուած եմ, որ դիտակցութեան այն ձեւերը (մուգուամեները, modi), որ զգայութիւն և պատկեր եմ անուանում, որքան լոկ դիտակցութեան ձեւեր են՝ իմ մէջ «են գտնւում։ Եւ ահա այսքանն է իմ ամբողջ իրօք գիւտեցածս, կամ դոնէ այն՝ ինչ որ ես մինչեւ այժմ ինձ գիւտեցած եմ համարում» (Meditatio III):

Ահա ներքին դիտողութիւն կոչուած բանի և նրա առաջ բերած արդիւնքների նկարագրութիւնը Դիսաւոր բանն այստեղ այն չէ որ մեզ արտաքին աշխարհից ծածկենք, այլ մտքի այն ուրոյն շրջումն է որ Դեկարտը արտայայտում է հետեւել խօսքերով։ Պիտի նիւթական առարկաների բոլոր պատկերները սին և սուտ համարեմ. իմ զգայութիւնների և պատկերների վերայ պիտի նայեմ իբրև և լոկ դիտակցութեան ձեւերի վերայ. Յայտնի բան է, որ կարող եմ և պէտք է կարողանամ այդ անելնաև առանց աչքերս խփելու և ականջներս խցելու։ Խորհրդածութեանս այս կէտում ինձ համար ոչ մի տարբերութիւն չկայ արտաքին առարկաների ներկայութեամբ ծագող զգայութիւնների և այսպէս անուանուած իդէաների կամ մտապատկերների մէջ, այսինքն այն պատկերների որ կարող եմ ունենալ համապատասխան առարկաների բացակայութեան ժամանակ։ Զնայելով արտաքին աշխարհի գոյութեան վերայ տարակուսելու կարելիութեան իւր վարդապետութեանը՝ Դեկարտը տակաւին կարեւութիւն էր ընծայում դորա ներկայութեանը. Նմանապէս թէ Լոկիր, թէ իւմը շեշտում են զգայութիւնների և իդէաների տարբերութիւնը, զգայութիւններին կարծես աւելի մեծ չափով իրականութիւն (ռէալութիւն) վերագրելով, որից զուրկ են իդէաները։ Որպէս զի տեսնենք այստեղ խօսպէս տարբերութիւն զնելու անհարինութիւնը՝ առաջ բե, ենք իւմի խորհրդածութիւնները։

«Ամեն մարդ հիշտութեամբ կհամաձայնի», դրում է «իւմը, — «որ մեծ տարբերութիւն» կայ հոգու ըմբռնութիւն «ների մէջ մի կողմից՝ երբ չափազանց տապ կամ ախոր «ժելի հով ենք դդում, և միւս կողմից՝ երբ յետոյ այդ «դդայութիւնը յիշողութեան մէջ ենք վերաբաղրում կամ «երեակայութեամբ պատկերացնում ենք առաջիդայում։ «Այս կարողութիւնները (այսինքն յիշութիւնն ու եւ «ը եւակայութիւնը) կարող են նմանել դդայութիւննեւ «րին, բայց երբէք չեն կարող սկզբնական դդայութեան ոյժին «և կենդանութեանը հասնել։ Մինչեւ լոկ երբ յիշողութիւնն «ու երեակայութիւնը ամենամեծ ուժով են դործում, «դրանց մասին կասենք ոչ աւելի քան` որ իրենց առար «կան այնշափ կենդանի են ներկայացնում որ համարեա «կարելի է ասել — այդ տեսնում կամ դդում ենք, բայց, «խելագարութեան և հիւանդութեան բացառութեամբ, «դրանք երբէք չեն կարող հասնել կենդանութեան այն առ «տիճանին, որ յիշեալ ըմբռնութիւնները միմեանցից անդաւ «նազանելի դարձնէին։ Բանաստեղծութեան բոլոր դոյները, «ինչքան էլ վարփառն լինին, երբէք չեն կարող բնական «առարկան այնպէս պատկերացնել, որ նկարագրութիւնը «բնութեան իրական նկար ընդունուէր։ Ամենակենդանի «միաքը տակաւին չի հասնի ամենաբութ դդայութեանը։»

«Նման տարբերութիւն կդանենք հոգու նաև բոլոր «ուրիշ ըմբռնութիւնների մէջ։ Մարդ զայրոյթի լուպէին «ամենին այնպէս չէ յուզւում, ինչպէս այն մարդը որ «լոկ մտածում է այդ յուզման մասին» և այլն (An inquiry concerning hum. understanding. Sect. II):

Եթէ յիշենք երազը, ապա կտեսնենք որ ոչ միայն հիւանդութեան կամ խելագարութեան ժամանակ, այլ ամեն օր մեր երեակայութիւնը և յիշողութիւնը իրենց պատկերները մինչեւ իրական դդայութիւնների կենդանութեան են հասցնում։ Ազթուն վիճակումն էլ այդ կենդանութիւնը ամենաբազմազան աստիճանների կարող է լիւնել. օրինակ, մի զգուելի նիւթի մասին մտածելուց մար-

գուս սիրտը կարող է խառնել։ Իսկ զուտ — սուբյեկտիւ երեսյթներում միաքը շատ յաճախ աւելի զօսեղ է ներագործում քան իրականութիւնը։ Օրինակ, սէլը դէպի բաշակայ բարեկամը կարող է աւելի ուժով բորբոքուել քան եղել է նորա ներկայութեան ժամանակ, վիրաւորանքի յիշողութիւնը կարող է աւելի ուժով զայրոյթ շարժել քան շարժուել էր հէնց նոյն վիրաւորանքի լուսելին, և այլն։ Մի խօսքով սուբյեկտիւ երեսյթները՝ նայած իրականութեան հետ ունեցած շփման աւելի կամ պակաս սուբյեկտիւ չեն դառնում։ Այդ բոլոր երեսյթները միենոյն կարգի են։ Առանց որևէ է համաշափ արտաքին ազգեցութեան կամ ներքին շարժառիթի կարող եմ ամենազօրեղ զդացմունք ունենալ և տեսնել իմ առաջպայծառ պատկերների մի ամբողջ աշխարհ։ և ընդհակառակը՝ բաց աչքերով և ականջներով, ամենաարթուն կերպով իրականութեան տպաւորութիւնները ըմբռնելիս՝ կարող եմ այդ բոլորի մէջ լոկ իմ դդայութիւնները տեսնել, լոկ իմ հոգու մոդուսները, լոկ իմ սուբյեկտիւ երեսյթները։

Հետեւաբար ամբողջ բանը մտքի հէնց այդ շրջումն է։ Այդ շրջումն այն է որ երեսյթների մէջ ժիստենք ամեն մի նշանակութիւն, բացի սուբյեկտիւ նշանակութիւնից։ Ինչպէս Դեկարտն է ասում՝ երեսյթները սին և սուտ համարենք։ Օրինակ՝ իմ մտքերը պէտք է համարեմ լոկ իմ մտքեր և ոչ թէ ծշմարտութիւն։ իմ զդացմունքների մէջ պէտք է տեսնեմ լոկ իմ զդացմունքներ և ոչ թէ բազպաւորութիւն կամ գերազգութիւն, ոչ թէ մի ճակատագիր որ ինձ վիճակուել է. իմ ցանկութիւնները պէտք է ընդունեմ ոչ իրեւ ցուցմունք՝ թէ ինչ պէտք է անեմ, ինչ բանի չդառն, այլ լոկ իրեւ իմ ցանկութիւններ։ Նատիւնի միամիտներ և պարզամիտներ՝ երբէք լաւ չեն իւրամարդիկ՝ միամիտներ ապահովութեան այս շնուրը. իսկ անասունները ցնում մտածողութեան այս շնուրը. իսկ անասունները ի հարկէ կատարելապէս անծանօթ են դրան, այնպէս որ այստեղ կարելի է տեսնել այն առաջին դիմը, որ տար-

բերում է անասնների աղքատ հոգեկան կեանքը մարդու հարուստ կեանքից։ Անասունների կեանքը այսպէս կոչուած անմիջական կեանք է. բայց աւելի կամ պակաս չափով նոյն կեանքով ապրում է և ամեն մարդ. և այս գեպօրմ անմիջական կեանքը կարող է շատ վսեմ բովանա դակութիւն ունենալ, հեռու ամեն մի անասնականութիւնից։

Հասարակ մարդը չէ զբաղւում իւր մտքերով ինչպէս մտքերով. նա ուղղակի գործ է ածում իւր մտքերը որոշ նպատակի համար, իւր յարաբերութիւնները և գործերը պարզելու համար։ Սոյնպէս՝ նա չէ վերլուծում իւր զգացածուները, չէ կասկածում դրանց խորութեան և տեսկանութեան վրայ, այլ ուղղակի տարւում է, նայած դրանց ուժին վերջապէս հասարակ մարդու համար իւր ցանկութիւնները լոկ գործելու դրդումներ են. առանց գործունէութեան՝ դրանց մասին նա երբեք չէ էլ մտածում, ոչ էլ նորա համար դրանք որևէ է միտք ունին։

Դիւրաշարժ հոգեկան կեանքի, բայց թոյլ մտաւոր ուժերի տէր մարդկանց մէջ այդ յատկութիւնները ծիծառաշարժ բնաւորութիւն են ստանում, որով աւելի պայծառ կերպով երեան է դալիս դրանց ուրոյնութիւնը։ Ի հարկ է, քիչ կան այնպիսի մարդիկ, որոնք միամտաբար հակուած են կատարելու իրենց ամեն մի ցանկութիւնը և անասունների նման ձգտում են իրենց ամեն ուղածն անել. սակայն և այնպէս այդպիսի մարդիկ կան։ Բայց շատ կան այնպիսի մարդիկ որոնք իրենց դիւրագրդիու զգայութիւնները ըրջապատող աշխարհի յատկութիւնների ծիշտ ցուցումն են ընդունում։ Այսպիսի մարդիկ երբեմն ամեն տեղ դեղեցիկ հոգիներ, սիրող և անձնուէր բարեկամներ են տեսնում։ Բայց աւելի յաճախ սրանք կեանքի վրայ մոայլ դոյնով են նայում. այդ ժամանակ սրանց թւում է, թէ իրենց գժրաղդութիւններ են հալածում, թէ իրենք նենդութիւններով և որոգայթներով են ըրջապատուած։ Սրանց համար մի հանդիպում, մի խօսք, մի հայեցք՝ ամբողջ մի անցք է, և իրենց կեանքը՝ թէկուղ ամենահասաւ

րակ և միապաղաղ կերպով ընթանալիս լինի, սրանց իբրև կնճոռու և ծանր պատահարների մի ամբողջ շղթայ է երեւում։

Բոլորովին նմանօրինակ (անալոգիկ) երեսյթ լինում է նա և մտաւոր կեանքում։ Շատերը անկարող են տարակուաել իրենց մտքերի վերայ. իրենց ամեն մի մտածութիւն ճշշմարտութիւն են ընդունում, ուստի և ոչ մի հակածառութիւն տանել չեն կարող և ամեն մի կարծիք՝ որ համաձայն չէ իրենց սեպհական եղբակացութիւններին՝ վիրաւորանք են համարում։

Հասարակ մարդիկ այս անպատեհութիւններից զերծ են մնում նրանով, որ ապրում են հնագանդուելով հաւատի և աւանդութեան մեծ հեղինակութեանը, որոնց առաջ լուսում են իրենց մտքերը, զգացմունքները և ցանկութիւնները։ Իսկ ուսեալ մարդիկ, որոնք իրենց հոգեկան կեանքին մեծ կամ փոքր ազատութիւն են տալիս. շատ յաճախ ամենազորմելի արարածներ կլինէին, եթէ չկարողանային տարակուաել իրենց մտքերի, զգացմունքների և ցանկութիւնների վրայ։ Դրա համար սրանք պէտք է կարողանան առարկայացնել (օբյեկտացնել) իրենց հոգեկան երեսյթները, համարել իրեն լոկ պատկանելութիւն իրենց հոգու, առանց դեռ ևս վճռելու դրանց ճշմարիտ կամ սուտ լինելու հարցը, առանց որևէ է իրական նշանակութիւն դրանց տալու։ Բոլորս էլ աշխատում ենք այդ օբյեկտացման (առարկայացման) մէջ որքան կարելի է ճարպիկ լինել, սովորում ենք մեզ չհաւատալ, մեզ այնպէս ենք ուսումնասիրում ինչպէս կողմնակի մարդկանց, որպէս զի մեր դատողութիւնների և գործողութիւնների մէջ կուրօրէն չենթարկուենք մեր մտքի և սրտի առանձնայատկութիւններին և սիսալանքներին։

Սակայն մինչև վերջը տանել հասցնել այդ օբյեկտացումը չենք կարող չենք կարող դոնէ առանց խեղդելու մեր մէջ մտածելու և գործելու ամեն մի կարողութիւն։ Յիրաւի, մտածել և գործել կարողանալու համար պարզ է որ պէտք է ունենանք այնպիսի մտքեր որոնց ճշմարտութեան

մասին չենք կարող տարակուսել, այնպիսի զդացմունքներ և ցանկութիւններ որոնցից չենք կարող հրաժարուել, որոնց վրայ չենք կարող իրեն մի քմահաճոյքի վրայ նաւել՝ որ կամայականորէն կարելի է թէ կատարել և թէ մերժել: Որքան էլ երբեմն խոր են թաքնուած լինում այդ մտքերն ու ցանեկութիւնները մարդու հոգու մէջ, բայց և այնպէս դրանք դոյսութիւն ունեն ամեն մէկի մէջ և երբեմն յանկարծ յայտնուած են մեծ ուժով:

Զուտ տեսականորէն էլ նոյն բանը կարելի է ասել: Փիլիսոփանները միայն աստիճանաբար և մեծ դժուարութեամբ են օբյեկտացրել հոգու կարողութիւններն ու գործողութիւնները: Ինչ որ ըստ ինքեան իրերի անտարակուսելի յատկութիւն էր համարուած եղել՝ հետզհետէ իրբել լոկ մեր սուբյեկտիւ տրամադրութիւնն ընդունուեց: Այսպէս իւմը տարակուսեց պատճառական կապակցութեան իրական լինելու վրայ, իսկ կանտը՝ թէ տարածութիւնը, թէ ժամանակը, թէ գոյսութեան և բազմութեան կատեգորիաները իրբել մեր մտքի ձևեր ընդունեց:

Ուստի տեղին կլինի, եթէ մեր հոգեկան երևոյթների մէջ առաջուց ոչ մի ստորաբաժանում չանենք, այլ նախ սովորենք նայել այդ ամբողջ աշխարհի վերայ իրբել մեր հոգում իրականութիւն ունեցող մի աշխարհի վերայ:

III.

Օ Բ Ե Կ Տ Ա Գ Ո Ւ Մ:

Ասացինք որ հոգեկան երևոյթների օբյեկտացումը (առարկայաց ացումն) է այդ: Այս բառի իմաստն այն է՝ որ իւրաքանչւր իմացութեան մէջ անհրաժեշտաբար որոշում են իմացող սուբյեկտ և իմանալի օբյեկտ, և որ հետեւապէս ամեն իմանալի բան պէտք է որ և է չափով զատուած լինի սուբյեկտից, այսպէս կամ այնպէս պէտք է նրանից անկախ լինի:

Զուտ օբյեկտը, ինչպէս տեսանք, նիւթն է, սուբյեկտից բոլորովին անկախ մի բան, ըստ ամենայնի օտար նրան: Այժմ երբ ձգտում ենք հոգեկան երևոյթները մեր օբյեկտը դարձնել՝ պէտք է սրանց էլ սուբյեկտից մի որոշ անկախութիւն և առանձնութիւն վերադրենք: Այդպէս էլ անում ենք, և անում ենք ոչ միայն տեսական հետազոտութիւնների ժամանակ, այլ և մեր առօրեայ կեանքում:

Ամեն մարդ գիտէ որ իւր հոգեկան երևոյթները ոչ ըստ ամենայնի իրենից են կախուած: Ոչ միայն չենք կարող չտեսնել ու չսել ինչ որ մեր առաջ կատարում է, այլ նաև մեր մտքերն ու զդացմունքները մեր մէջ յառաջ են գալիս անկախ մեր կամքից և նոյն իսկ մեր զօրեղ ցանեկութեան հակառակ: Հոգեկան երևոյթների այս անկախութիւնը շատ անգամ այնպէս սուր կերպով է հանդէս գալիս, որ մարդիկ պատրաստեն իրենց սեպհական մտքերն ու զդացմունքները ուրիշ էակների ներշնչման վերադրել:

Եւ դարձեալ այդ անկախութիւնը ոչ մի բանի մէջ այնպէս պարզ և մշտապէս չէ հանդէս գալիս՝ ինչպէս երազի մէջ: Երազում ապրում ենք լիակատար կեանքով, հոգու բոլոր կողմերով, և սակայն պատրաստ ենք այդ երազական կեանքի և մեր իրական գոյսութեան մէջ ամեն կապ ծխտել: Ինչ էլ որ լինի երազում մեր մտածածը, զդացածը և գործածը՝ այդ բոլորը ժխտում ենք իրբել մեզ չպատկանող: Մինչդեռ երազում կարող ենք այնպիսի ուրախութիւն և այնպիսի վիշտ զդալ, որպիսին զրեթէ անընդունակ ենք զդալու իրականութեան մէջ: կարող ենք վսկեմ մտածմունքներ ունենալ, մեծ սկսագործութիւններ կամ չարագործութիւններ կատարել: Բայց արթիանալով՝ մարդ այդ բոլորը իրեն չէ վերադրում ոչ որպէս յանցանք և ոչ որպէս վաստակ. կարծես այդ բոլորը զդացողը կամ գործողը ինքը չէ եղել, այլ մի ուրիշը. կամ աւելի լաւ է ասել՝ այդ բոլորը նա ստիպուած է եղել զդալ, մտածել և գործել, նա ոչ մի զօրութիւն չէ

ունեցել խուսափելու իւր սեպհական հոգու այդ գործողութիւններից:

Մեր հոգեկան երևոյթները օբյեկտացնել սովորած լինելով՝ կարող ենք նաև արթուն վիճակում համարեանոյն կերպ նայել գրանց վերայ, և շատ գէպքերում ակամայից այդ հայեացըն ենք ունենում: Մի փոքր փորձուելով կեանքից, հեշտութեամբ սկսում ենք հասկանալ որ ինքներս չենք մեր հոգու պատմութիւնը կատարողը, այլ որ սա մեծ մասամբ մեզանից անկախ է կատարում: Աշխարհ գալիս՝ մեզ հետ հոգեկան կարողութիւնների որոշ ձիրքեր ենք բերում, և այդ կարողութիւնների ոչ որակը, ոչ էլ քանակը մեզանից կախուած չէ: Ճիշտ է, երիտասարդութեան ժամանակ մենք հակամէտ ենք երևակայելու, թէ ամեն ինչ մեզ մատչելի է, և չկայ ոչ մի սահման որից անցնել չկարողանայինք: Բայց այդպիսի ցնորդներ միայն երիտասարդութեան ենք ներում: իսկ հասունացած մարդուն թեթեամիտ կանուանենք, եթէ նա գէթ մասամբ չգիտէ իւր կարողութիւնների յատկութիւններն ու սահմանները: Այսուհետև մեր հոգու զարդանալը, մոքի ու սրտի բնածին կարողութիւնների հասունանալը և փոփոխուելը նոյնքան քիչ է մեզանից կախուած, որքան մեր մարմի զարդանալը և այն բոլոր փոփոխութիւնները, որոնց ենթարկում է մարմինը մանկութիւնից մինչեւ զառամեալ ծերութիւնը: Բայց մարմինը հոգուց ըստ երևութիւն նոյն իսկ աւելի հաստատունութիւն ունի: Հոգու մէջ ըստ երևութիւն չենք կարող գատահ լինել որպէս մի անփոփոխ բանի վերայ՝ ոչ մի մտքի, ոչ մի ցանկութեան և ոչ մի զգացմունքի վերայ: այս բոլորը կարող է անյայտանալ, կարսող է փոխարինուել մի ուրիշ բովանդակութեամբ: Ամեն օր, ամեն րոպէ նորոգւում են մեր մտքերը, փոխում է մեր արամագրութիւնը: Հոգեկան երևոյթների բնութիւնն իսկ այնպէս է, որ զուրկ ենք գրանց հաստատուն և անփոփոխ վիճակի մէջ պահպանելու կարելիութիւնից: Ամենաջերմ զգացմունքը սառչում է, ամենավառ միտքը

չորանում, և եթէ երբեմն մեր մէջ շատ երկար են ապրում, յամենայն գէպս ժամանակի ընթացքում կերպարանափոխութիւնների են ենթարկուում, որոնց խափանել և արգելել չէ կարող մեր ոչ մի ջանքը:

Այսպիսով մարդս մեծ կամ փոքր չափով միշտ իւր սեփական կեանքի հանդիսատեսն է, այլ ոչ թէ միայն ստեղծողը: իսկ եթէ մեր մէջ զօրացնենք մեր հոգեկան երևոյթները օբյեկտացնելու սովորութիւնը, ապա աւելի և աւելի կարող կլինենք երազին նման վիճակի մերձենալ, և ոչ այնքան ապրել, որքան հայել՝ թէ ինչպէս է մեր կեանքն ընթանում:

Սակայն երբեմն ամենակայտառ կեանքի միջոցին մեզ տիրանում է մի տրամադրութիւն, նման այն տրամադրութեան որ երազում ենք զգում երբեմն հարցնում ենց մեզ՝ «արդեօք քնած չեմ: այս ինչ լաւ է», կամ «այս ինչ տալօրինակ բան է»: Այդ նշանակում է թէ մեր հոգու մէջ այնպիսի զգացմունքներ են արթնացել որ ոչ մեզանից էինք սպասում, ոչ էլ արտաքին հանգամանքներից: և յանկարծ կորցնում ենք թէ մեր անձին և թէ իրականութեանը տէր լինելու սովորական զգացմունքը:

IV.

Էմպիրիկ հոգեբանութիւնը:

Ուրեմն հոգեկան երևոյթները կարող են օբյեկտացման ենթարկուել և մի որոշ տեսակի առարկայ (օբյեկտ) դառնալ: Հետեաբար գրանց կարելի է հետազոտել և իմանալ, ուստի գրանք կազող են մի որոշ գիտութեան առարկայ լինել:

Այդ աշխարհը՝ իբրև մի առարկայական (օբյեկտ) բան պէտք է համապատասխանէ այն բոլոր պահանջներին, որ անում ենք մի առարկայից (օբյեկտից): Այն է՝

այդ աշխարհի երկոյթները կարող են գասաւորման (կլասիֆիկացիայի) ենթարկուել, որոշ սեռի և տեսակի տակդասուել, այնուհետև կարելի է դրանց վերլուծել (անալիզի ենթարկել), տարբերել դրանց մէջ պարզ և բարդ երկոյթներ, և որոշել թէ առաջին և թէ երկրորդ տեսակի երկոյթների կազմուելը. վերջապէս դրանց թէ փոխադարձ և թէ ամեն ուրիշ երկոյթների հետ ունեցած յարաբերութիւնները պէտք է ենթարկուեն խիստ օրէնքների, ճշգրիտ գետեր մինչ զմի, և կարելի պիտի լինի հետազօտել այդ օրէնքները:

Այսպիսով մեր առաջ հետազօտման մի ընդարձակ աշխարհ է բացւում. այսուեղ գործադրութիւնն կդանեն գիտական ամեն տեսակ մեթոդներ. հարկաւոր կլինի գիտութիւններ և փորձեր անել, պէտք է հիպոտեզներ և տեսութիւններ յօրինել, և ապա ստուգել դրանց հետեւութիւնները:

Այդպիսի մի գիտութիւն ստեղծուած և մշակուած կայմեծ ծաւալով. այդ գիտութիւնը էմպիրիկ հոգեբանութիւն են կոչում, ոչ այն պատճառով իր թէ նա մերժելիս լինէր ամեն ռացիոնալ տարր (որ անհնարին բան է), այլ այն պատճառով որ դորա հիմնադիրները էմպիրիկներ են եղել, այն մտածողները որոնք ուղեցել են մարդկային ամբողջ խմացութիւնը միայն փորձականի վերածել և ճգնել են ամեն բանում փորձից սկսել. Դրանք էին՝ Լոկլ և Հերտլի (Hartley) անգլիացի փիլիսոփաներն, ապա Բերկլի (Berkeley) իրանդացին և նշանաւոր շոտլանդացիների մի ամբողջ շալք՝ իւմ, Թովմաս Բիդ, Դոդլու Ստիւարտ, Թովմաս Բրուոն, Երկու Միլլեր (Ջեմս և Ջոն Ստիւարտ, հայր և որդի) և վերջապէս Ալեքսանդր Բէն:

Այդ հոգեբանութիւնը, ինչպէս Երկում է արդէն հէնց այս ցանկից, շատ ազատ և փարթամ կերպով է աճել, և միհնոյն ժամանակ ոչ միայն ընդհանրապէս անդիմական, այլ նոյն իսկ յատկապէս շոտլանդական բնիկ տեղական մի բոյս է

Եղել եւ իրօք նա ուրոյն պայմանների, մտքի ինքնուրոյն տրամադրութեան պահանջ է ունեցել: Հոգեկան երեսիթ ները այս տեսակէտից հանդարտ և երկար հետազօտելու համար պէտք էր որ հոգեբանները այդ երկոյթները ինքն ըստ ինքեան հետաքրքրական փաստեր նկատէին և գաւառնէն, որ ուսումնասիրութիւնը առարկայի էմպիրիկ հետազօտութիւնով պէտք է սահմանափակուի: Ամեն միակողմանի և նեղ հայեցակէտ հարուստ արդիւնքներ է ունենում, երբ այդ հայեցակէտի վրայ հաստատ ենք մնում և երկար աշխատում:

Գերմանիփայում՝ անդլիկական էմպիրիկ հոգեբանութեանը նման գիտութիւն ուշ ծաղկեց. որա հիմնադիր պէտք է համարել Հերբարտին՝ 19-րդ դարի տասնական և քսանական թուականներին: Հերբարտը գիտողութիւնների և փորձերի խնդիր գարձրեց ուսումնասիրութիւնը այսպէս կոչուած հոգեկան մեքանի գարձրեց, այսինքն այն կախման որ հոգեկան երկոյթներն ունեն մէկը միւսից, — իբր ուսումնասիրութիւն մի տեսակ մեքանիկական օրէնքների որոնց ենթաքրում են դրանք իրենց շարժման, միացման և այլն ժամանակ: Տես եկէն ևս աշխատում էր՝ թէւ ուրիշ ձևերով նման մեքանիկ հաստատել: Հերբարտեանների և բենեկեանների տարբերութիւնը մի քանի գրութիւնների և ենթագրութիւնների մէջ է, որոնք փորձից այն կողմն են անցնում: Գերմանացիները՝ լրութեան և սիսթեմի մի բնածին պահանջով՝ երբէք այդպիսի գրութիւններից չեն հրաժարվում:

Հերբարտի գպրոցին կարելի է ասել՝ պատկանում են Լուցէ, Լացարուս և Շակինաւալ գիտնականները: Հոգեկան մեքանիզմի հետազօտութիւնն անկասկած շատ հետաքրքրական և կարեւոր հետևանքներ ունեցաւ:

Վերջապէս նոյն էմպիրիկ հոգեբանութեան շրջանին պէտք է վերագրել բնախօսների բոլոր այն հետազօտութիւնները, որոնք վերաբերում են հոգեկան կեանքին: Բնախօսութիւնն իսկապէս նիւթական երկոյթների՝ մարդու մարմնի երկոյթների՝ հետազօտութեամբ է զբաղւում (եթէ բնախօ-

սութիւնը վերցնենք իւր ամենամեղ մտքով): Բայց որովհետեւ մարմնական երևոյթների յայտնի մասի հետ անփոփոխ կապուած է հոգեկան երևոյթների հանդէս դալը, աղա բնախօսութիւնը, իրեւ մարմինը հետազօտող մի դիտութիւն՝ պարտաւոր է կատարեալ ճշտութեամբ որոշել այն նիւթական ռործողութիւնները որոնք պայմանաւորում են կամ միշտ համապատասխանում են տուած հոգեկան երևոյթներին: Իրենք հոգեկան երևոյթները բնախօսութեան առարկան չեն և չեն էլ կարող լինել: Բնախօսութեան դրանք պատրաստի տրւում են հոգեբանութիւնից, ճիշտ այնպէս ինչպէս որ բնախօսութեանը պատրաստի տրւում են մեքենայաբանութեան, ֆիզիկայի և քիմիայի օրէնքներն ու երևոյթները: Բայց հնարաւոր է, ի հարկէ, որ մարդու մարմինը հետազօտելիս՝ բնախօսը նոր դիտութիւններ և հետազօտութիւններ անէ ֆիզիկային կամ քիմիային վերաբերեալ. և էմպերիկ հոգեբանութեան անկատարութեան պատճառով՝ անհամեմատ աւելի ևս հնարաւոր է, որ բնախօսը մի քանի նոր արդիւնքների համնի հոգեբանութեան վերաբերեալ: Սովորաբար բնախօսները առանց որևէ խղճահարութեան միջամուխ են լինում հոգեբանութեան մէջ, իբրև մի շրջանի որ դեռ ևս լիազօր տէր և խիստ հաստատուած կարդ չունի, — որ մասամբ արդարացի է, բայց ոչ երբէք այն աստիճան ինչպէս բնախօսներից շատերը կարծում են:

Բանի դրսութիւնը պարզելու համար մի քանի մասմասնութիւնների մէջ մտնենք:

Բնախօսները ներկայումս լիովին հաստատել են այս լինդրին վերաբերեալ երևոյթների հ տեեալ կատարելապէս ուղիղ բաժանումը:

1) Տպաւորութիւններ (impressio, Eindruck), այսինքն՝ զուտ ֆիզիկական, նիւթական աղդեցութիւններ, որ մեր մարմնի վրայ առաջանում են այլ մարմիններից, այլ նիւթական առարկաներից: Մեր մարմինը մի նիւթական առարկայ լինելով՝ ֆիզիկական օրէնքի համաձայն իւրա-

քանչիւր տպաւորութեան պատասխան է տալիս ուսուական երևոյթների եցութիւնով, նոյնպէս մի զուտ ֆիզիկական երևոյթով. այս հակազդեցութիւնը, որի բնութիւնը լաւ չդիտենք, օրինակ որ կատարւում է նեարդերի մէջ առանձին տեսակի երևոյթների (լոյսի, ձայնի) աղդեցութեան պատճառով, կոչւում է գրգիռ (irritatio, Reizung): Խօսակցական լեզուում տպաւորութիւն ասելով հասկանում են ոչ միայն մարմնի տպաւորութիւնը, այլ և գլխաւորապէս հոգու տպաւորութիւնը, բայց բնախօսութեան և հոգեբանութեան մէջ այդ բառը այն աւելի նեղ իմաստն ունի որ մենք բացատրեցինք:

2) Զգայութիւնը (sensatio, Empfindung) արդէն այն զուտ հոգեկան երևոյթն է որ անմիջապէս տպաւորութիւնից է առաջանում և կախուած է որանից խիստ որոշ օրէնքներով: Ամեն տպաւորութիւն զգայութիւն չէ առաջանում, ոչ էլ ամեն զգայութիւն առաջանում է տպաւորութիւնից: Բայց այն զգայութիւնները՝ որ մարմնական տպաւորութիւններից (կամ աւելի ևս ճիշտը՝ որանցից առաջացած գրգիւններից) են առաջ գալիս, համարւում են հոգեկան տարրական այսինքն՝ պարզագոյն, անլուծելի երևոյթներ:

3) Ըմբռնութիւններ (perceptio, Wahrnehmung), այլ և հոգեկան միւս բոլոր երևոյթներ բացի զգայութիւններից, Ըմբռնութիւն ասելով հասկանում են այն հոգեկան երևոյթները, որոնց ընթացակցում է արտաքին աշխարհի երևոյթների և առարկաների իրական գոյութեան մտապատկերը: Երբ մեր մէջ կատարւում են այդ երես, թները այն ժամանակ այսպէս ասած ըմբռնութեան մէջ մեր մէջ ենք արտաքին աշխարհը, կարծես թէ մեր մէջ ենք ընդունում նրա առարկաներն ու երևոյթները: Եթէ բանից գուրս գայ որ այդ երազումն է լինում, աղա պատիր ըմբռնութիւն կկոչենք. իսկ եթէ համոզուած ենք որ արթուն ենք, ընդ նմին համոզուած ենք լինում որ իրօք արտաքին աշխարհի իմացութեան գործողութիւնն ենք կատարում:

ները, կոկլը և Բերկլին, էին որ առաջին անդամ մատանցոյց արին երկու տեսակ երեսոյթների տարբերութիւնը, և Բերկլին կատարեալ պայծառութեամբ և ճշութեամբ այդ ապացուցեց տեսողութեան համար։ Բերկլիի վարդապետութիւնը, նոյն իսկ իւր բոլոր բնազանցադիտական հետեւութիւններով, ընդունում էր Հալլերը^{*}), և նոյն վարդապետութեան էտկան դժերն ընդունուեցին բոլոր բնախօսներից և մտան ֆիզիկայի բոլոր դասադրքերի մէջ։

Էմպիրիկ հոգեբանութեան շրջանում այդպիսի կատարելապէս հաստատուն և պայծառ հետազոտութիւններ շատ կարելի է ցոյց տալ։ Մեծ հոչակ ունի, օրինակ, մտապատերների զուգութեան վարդապետութիւնը, այնպէս որ երբեմն այս ամբողջ գիտութիւնը զուգութութեան հոգեբանութիւն են կոչում։ Իսկ եթէ հոգեբանական հետազոտութիւնները միշտ չեն դրաւում այն ուսումնասիրութիւնը և յարդանքը որին արժան են՝ այդ երի նրանից է որ ընթերցողները յաճախ դրանց այն նշանակութիւնը չեն տալիս որ իրօք ունին. իսկ ամենից յաճախ հէնց իրենք հետազոտողներն էլ ճշտիւ չեն սահմանափակւում այն հայեցակէտով, որից բոլորովին իրաւացի է իրենց հետազոտութիւնը։ Հոգեբանների նպատակը մէկ բան պիտի լինի — ուսումնասիրել օբյեկտացրած հոգեկան երեւոյթների կապակցութիւններն ու օրէնքները։

V.

Գիտակցութիւն։

Էմպիրիկ հոգեբանութեան մէջ մեր առաջ երեսոյթների մի ամբողջ աշխարհ կայ որ խիստ ենթարկուած է որոշ օրէնքների, բայց ուր հնարաւոր են անվերջ բազա-

^{*}) Elementa physiologiae corporis humani. M. V, 579 sq. (1779).

դրութիւններ և որը կարող է ուսումնասիրութեան անհուն ասպարէզ բայց անել մեզ։ Սակայն եթէ ցանկանում ենք հետազոտել մեր առարկայի հիմնական գաղափարները՝ պէտք է մաքներս պահենք որ այդ աշխարհը մեզ պայմանով է արուած. հետեւապէս պէտք է այդ պայմանը մեր՝ նրա մասին ունեցած գաղափարի մէջ մտցնենք։ Հոգեկան երեսոյթները միայն այն ժամանակ իրեւ օբյեկտացնենք, այսինքն զատենք մեզնից, ընդունենք իրեւ անկախ և նոյնիսկ իրեւ մեր եսին հակադիր մի բան։ Հետեւապէս պայմանն այն է՝ որ օբյեկտի և սուբյեկտի մշտական տարբերութիւն է ենթագրւում, որ իրեւ օբյեկտ ընդունուած իրաքանչիւր հոգեկան երեսոյթը մեր եսն է պահանջում որպէս սուբյեկտ իրեն համար։

Ամեն միտք, ամեն զգացմունք կամ ցանկութիւն հնարաւոր է միայն մի եսի պայմանով՝ որ մտածում է այդ միտքը, զգում է այդ զգացմունքը, ցանկանում է այդ ցանկութիւնը։ Հոգեկան երեսոյթների ամենաէտական յատկանիշը՝ դրանց իրաքանչիւրի այդ զարմանալի կերպով երկուածի բաժանուելն է՝ սուբյեկտի և օբյեկտի։ Այդ բաժանումը գիտակցութիւն ենք իրաւացի կապակցում։ Այդպէս է ասում նաև Դեկարտը 9-րդ պրակտում. «գիտակցութիւն ասելով ես հասկանում եմ այն ամենը ինչ որ կատարւում է մեր մէջ երբ մեզ գիտակից ենք լինում» որպան մեր մէջ այդ կատարուող բանի գիտակցութիւնը կայ։

Այսպէս ուրեմն հոգեկան աշխարհի հետ անբաժան կերպով կապուած է իւր սուբյեկտը, իւր եսը։ Այդ սուբյեկտի մասին հեշտ է գաղափար կազմել՝ որպէս մի եղբակացութիւն նախորդ գրութիւններից։ Եթէ մեզ զատում ենք մեր սեպհական մտքերից, զգացմունքներից և ցանկութիւններից, ապա ուրեմն մեր եսի մէջ ոչ մի այնպիսի ինչ չպէտք է ենթագրենք որ ներքին գիտողութեամբ գտնում

ենք մեր հոգու մէջ՝ եսի մէջ ոչ բազմազանութիւն կայ, ոչ փոփոխութիւն, ոչ մասեր, ոչ յաջորդականութիւն, ոչ կապակցութիւններ, ոչ էլ օրէնքներ. մի խօսքով ոչ մի այնպիսի բան որ կարող լինէինք օբյեկտացներ: Այս արդէն զուտ սուբյեկտ է, որ այդ պատճառով սահմանում է միայն բացասական նշաններով որպէս իմացութեանն անմատչելի մի բան (որովհետև ամեն իմացութիւն օբյեկտացում է):

Այդ պատճառով ասում ենք՝ մեր եսը մի այնպիսի բան է՝ որ ոչինչ չէ պարունակում, ոչ մի յոգնակիութիւն չէ ներկայացնում, ոչ մի փոփոխութիւն չունի, այսինքն՝ միշտ եղակի և միշտ անփոփոխ է, — Մոնադաց, հոգեկան աշխարհի անշարժ կեդրոնական կէտ է: Զպէտք է խաբուենք լեզուի ձևերից որ ամեն ինչ դրական է դարձնում և բացասելու համար միայն սակաւաթիւ ձևեր ունի: Մեր եսի մէջ մեր առաջ մի բան է յայտնում որ յիբաւի մեր մտքին և խօսքին անմատչելի է: Այս հասկանալու համար պէտք է հաստատ մնալ այն դրութեան վերայ, որ եսը սուբյեկտն է որ ոչ մի կերպ և ոչ մի ժամանակ չէ կարող օբյեկտ դառնար: Հետեապէս եթէ մենք ցանկանք խորհել և խօսել եսի մասին մեր սովորական միջոցներով՝ առաջուց պէտք է իմանանք որ միայն սխալ ենք անում, միայն շփոթում ենք դաղափարները:

Այս շփոթութեան ցոյց տալը և պարզելը կարելի է, ի միջի այլոց, գործադրել ինչպէս մի լաւ միջոց՝ բացասաբար հաստատելու այն դաղափարը, որին չէ կարելի մատչել դրական կողմից.

Օբյեկտացներու անդիմադրելի հակման չնորհիւ՝ մեր եսը կրառութեան և ներդարձութեան սովորական կատեգորիային ենք ենթարկում. բայց այս դէպքում կրկնապատկումներ ենք ստանում, որոնք եթէ բառացի հասկանալիս լինենք՝ բոլոր արևոյթները կարելի է վերադրել մեր եսին ինչպէս նրա պատկանելիք կամ արտայայտութիւն. բայց այս դէպքում պէտք է մտքներս պահենք, որ ինքը եսը ամենեին դրանց մէջ չէ մտնում, և դրանց որոշ գոյութիւն տալով՝ ինքն այդ գոյութեան բնաւ մասնակից չէ:

Դիտակցում եմ իմ եսը: Այստեղ եսին վերադրում ենք մի գործունէութիւն որ ուղղած է դէպի նորա սեպհական գործունէութիւնը և ընդ նմին բոլորովին նոյն տեսակի է ինչպէս որ այն գործունէութիւնը, դէպի որն ուղղուած է նա: Եթէ այդ հնարաւոր բան լինէր, այն ժամանակ նման գործողութիւն կարող էր կրկնուել կրկին ու կրկին անդամ, և չէր կարելի ոչ մի սահման դժոնել այս բարդան համար: Իրօք իհարկէ այդ չէ լինում, և պատրանքը միայն նրանից է առաջանում որ մեր եսը կեղծ օբյեկտ ենք շինում և սկսում ենք նրան վերաբերուել ինչպէս մի օբյեկտի, մինչեւ որ համոզւում ենք որ դրանց ոչինչ չէ դուրս գալիս և չէ կարող դուրս դալ:

Առհասարակ այդ սխալը ոչինչ չէ առաջացնում, բացի անլուծելի շփոթութեան մի տարօրինակ զգացմունքից, և այդ պատճառով կարող է անվաս համարուել նոյնպէս անվաս են եսի մասին եղած և բոլոր այն դարձուածքները, որոնց մէջ եսը որոշ կարողութիւններով և լնդունտկութիւններով օժտուած գործօն է հանդիսանում: Այս դէպքում միայն հարկաւոր է որ մեր խօսքին իւր բառացի իմաստը չվերադրենք, ինչպէս չենք վերադրում նաև ուրիշ բազմաթիւ դէպքերում: Ընդհանրապէս մեր լեզուն լիքն է փոխարերական իմաստ ունեցնալ բառերով և դարձուածքներով և առանց դրանց վարուել անհնարին է, և հարկ էլ չկայ երբ դիտենք որ բառերը մտքի լոկ նշանն են և ոչ թէ նրա համասեռ արտայայտութիւնը: Մեր հոգեկան աշխարհի բոլոր երեսոյթները կարելի է վերադրել մեր եսին ինչպէս նրա պատկանելիք կամ արտայայտութիւն. բայց այս դէպքում պէտք է մտքներս պահենք, որ ինքը եսը ամենեին դրանց մէջ չէ մտնում, և դրանց որոշ գոյութիւն տալով՝ ինքն այդ գոյութեան բնաւ մասնակից չէ:

VI.

Էմպիրիկ հոգեբանութեան եսը։

Ամենից հետաքրքրական և կարևոր է այն սխալը որ այս գեղագում անում է էմպիրիկ հոգեբանութիւնը։ Սա եսը նոյն գաղափարի տակ է գասում որի տակ զննում է իւր միւս բոլոր հետազոտելի երեսիները։ Հետևապէս եսը նրա համար կլինի մեր օրյեկտացրած հոգեկան երեւոյթներից մէկը, կլինի մի մտապատկեր, լոկլի տերմինով՝ մի իդէայ ձիշտ այնպէս ինչպէս և ուրիշ իդէաների վերաբերմամբ՝ էմպիրիկ հոգեբանութիւնը հետազոտումէ այդ իդէայի ծագման պայմաններն ու հանգամանքները։ Մեր եսի՝ իր հետ ունեցած մշտական նոյնութիւնը հոգեբանութիւնը բայցարում է ճիշտ նոյնպէս, ինչպէս որևէ է այլ մտապատկերի մեր ընդունելիք նոյնութիւն։ Սակայն հառկանալի է որ եսի անփոփոխութեան և եղակիութեան մասին հոգեբանութիւնը երաշխատորել չէ կարող. այդ պատճառով և պատրաստ է փոփոխութիւններ ընդունել նորա մէջ և հնարաւոր համարել նորա յոդնակի լինելը, այսինքն ենթագրել, որ մարդկային հոգու մէջ միանգամից կարող են դոյսութիւն ունենալ մի քանի այդպիսի մտապատկերներ, մի քանի եսեր։ Որքան և խորժթթուայ այս ենթագրութիւնը, սակայն անկատկած կատարեալ հետևողականութեամբ բզիսում է էմպիրիկ հոգեբանութեան հայեացակէտից ինչպէս որ, օրինակ, մի որոշ դրաբի մտապատկերը միշտ իրեն հետ նոյնն է լինում և այդ այնուամենայնիւ չէ խանգարում, որ մենք ուրիշ դրաբերի մտապատկերներ ունենանք նոյնպէս իրենք իրենց հետ նոյն, այնպէս էլ մեր մէկ եսի մտապատկերը չէ արդելում որ մեր մէջ դոյսութիւն ունենան մեր ուրիշ եսերի մտապատկերները։

Վերջին ժամանակներս էմպիրիկ հոգեբաններն ոչ միայն հանեցին և արտայայտեցին այդ եղակացութիւնը,

այլ նոյն իսկ սկսեցին պնդել որ այդ փորձով է ապացուցւում, այն է՝ մի քանի հոգախտաւորների վերայ կատարուած գիտողութիւններով։ Այսպէս Տէնը (H. Taine) յենւում է բժիշկ Կրիշաբերի կատարած գիտողութիւնների վերայ, որ նկարագրել էր մի առանձին տեսակի հիւանդութեան 39 դէպքեր (nèvropathie cerebro—cardiaque*) տարօրինակ խոտորումներ եսի գիտակցման սովորական տեսակից։ Տէնը խորհրդակցել էր իրեն բժշկի հետ, ուսումնասիրել էր հիւանդների օրագրութիւնները, նոյն իսկ առաջացած հիւանդներից մէկին հարձ ու փորձ էլ արել, և եկել հետեւալ եղակացութեան։

«Համարեա ըոլոր հիւանդները միւնոյն դարձուածք ներն են գործածում։ օրինակ՝ մէկն ասում էր՝ ես ինձ այն առաջինան կատարելապէս փոխուած էի զդուում որ ինձ թւում էր՝ թէ ուրիշ մէկն եւմ գարձել. այս միտքը շարունակ հալածում էր ինձ, թէ ես ոչ մի վայրկեան չէի մոռանում ոոր այդ խարբուսիկ է։ Միւսներն ասում էին՝ երբ եմ թւում էր թէ ես՝ ես ինքս չեմ, կամ թէ ես զդուում էի թէ շարունակ երազում եմ։ կամ այդ ես տարակուսում էի իմ սեպհական գոյութեան վերացում երբ ես գարդարում էի համար այդ վերայ և ըսպէներ էին լինում երբ գարդարում էի հաւատալ թէ կամ, և այլն»։

«Բժիշկ Կրիշաբերը և առաջացած № 38 հիւանդը դեռ աւելի հեռու են գնում, սրանք ենթագրում են որ հիւանդները չեն սխալում, երբ կարծում են թէ ուրիշ մէկն են գարձել։ Ոչ միայն ինձ թւում էր ոոր ես ուրիշ մէկն էի գարձել, ասում էր այդ ապարինածք, այլև իրօք ես մի ուրիշ մէկն էի։ մի ուրիշ ես իմ առաջին եսի տեղն էր ըսպէներ։ եւ արդարեւ ուրիշ զգայութիւններ էին գարձել նորա

* De la Névropathie cerebro—cardiaque par le Dr. Krishaber. Paris. 1873.

« Եսի բաղադրիչ զգայութիւնները, և հետևաբար նորա ճաշակը, ցանկութիւնները, ընդունակութիւններն էլ՝ բուլորը ուրիշ էին դարձել։ Այսպիսով՝ եսը, բարոյական «անձնաւորութիւնը, մի արդիւնք է որի սկզբնական դոր «ծնները զգայութիւններ են, և այդ արդիւնքը՝ զանա «զան րոպէներում դիտուելիս՝ մի և նոյնը չէ լինում, և «միենոյնն է թւում միայն այն պատճառով որ բաղաւ «դրիչ զգայութիւնները միշտ նոյնն են մնում։ Իսկ եթէ «յանկարծ այդ զգայութիւնները ուրիշ դառնան՝ ապա արա «դիւնքն էլ (եսը) ուրիշ կդառնայ և ինքն իրեն որպէս մի ուշ «ըիշ մէ կը կներկայանայ։ Այսուեզ փորձով հաստատում «է տեսութիւնը։ Յիշաւի, բժիշկ Կրիշաբերի խօսքերի համաձայն՝ այն առանձին տեսակի հիւանդական «վիճակը, որի պատճառով հիւանդը մի որոշ չափով կրցնում է իւր սեպհական անձնաւորում «թեան զգայութիւնը, միայն այն ժամանակ է «անցնում, երբ անհետանում է զգայութիւն «ների այն աղաւազումը, որի հետ այդ վիճակը «կապուած է։ Իմ կարծեքով այս հանդամանքը լիովին «վճռում է բանը, և ես կարծում եմ որ այս փոքրիկ պատշ «մութիւնը, որ ընթերցողներս կարդացին, աւելի խրա «տական է քան ընազանցագիտութեան մի ամբողջ հատոր՝ «մեր եսի սուբստանցիայի մասին։ »*

Ակնյայտնի է որ Տէնը № 38 հիւանդի հետ միասին ուզում է ընդունել՝ որ երկրորդ եսը իւր էութեամբ բոլորովին նոյն տեսակի է եղել, նոյն ընութիւնն ու արաժանիքն է ունեցել ինչ որ առաջին եսը։ Երկրորդ եսը նոր զգայութիւնների արդիւնք է եղել ճիշտ նոյնպէս, ինչպէս որ առաջին եսը՝ հների արդիւնք։ Սակայն որովհայիս ետք առաջին եսը չէր բոլորովին անհետանում, դուրս է դալիս որ այդ անհատի մէջ միաժամանակ երա

* Revue philosophique 1876. T. I, p. 294 (Sur les éléments et sur la formation de l'idée de moi. H. Taine).

կու ես է եղել՝ հինը և նորը. և այս բանի դէմ էմպիրիկ հոգեբանութեան տեսութիւնը ոչ մի արդելք չէ դնում, քանի որ հոգու մէջ կարող են գոյութիւն ունենալ զգայութիւնների զանազան շարքերի ոչ միայն երկու, այլ բազմաթիւ զանազան արդիւնքներ։ Այդպէս էլ լինում է. և հիւանդի մէկը օրինակ ինձ պատմել է որ հիւանդութեան ըսպէն իրեն ութը անհատների բաժանուած է զգացած եղել։

Սակայն հեշտ է տեսնել որ մի մարդու մէջ մի քանի եսեր լինելու մասին եղած այդ բոլոր ֆանտազիաները չքանում են. քանի որ ապացուցուած չէ որ այդ եսերը կատարելապէս համասեռ են։ Թէև բժիշկ Կրիշաբերի հիւանդն ասել է նրան թէ նոր եսը հնի տեղն էր բռնել՝ բայց պարզ է որ այդ տեղը լիովին բռնած չէ եղել, որովհետև հին եսը նկատել էր դորա արշաւանքը և ստիպուած լինելով տեղի տալ՝ մի ինչ որ անկիւնից դիտած է եղել դրան։ Մի ուրիշ հիւանդ շատ լաւ է նկարագրում այդ կոիւը, որ ցոյց է տալիս երկու եսերի ամբողջ տարբերութիւնը։

« Ինձ թւում էր թէ գործում էի ինձ համար մի օտար «դրդան չնորհիւ՝ մերենաբար։ Երբեմն հարցնում էի «ինքս ինձ՝ թէ ի՞նչ եմ անելու, և իւրեւ մի անտարբեր հադիւ «սատես ներկայ էի լինում իմ շարժումներին, խօսքերին և «բոլոր գործողութիւններին։ Իմ մէջ մի նոր էակ կար և դու «րան կից իմ անձի միւս մասը՝ հին էակը, որ ոչ մի մասնակ «ցութիւն չունէր նորի մէջ։ Շատ պայծառ յիշում եմ որ երա «բեմն ասում էի ինքս ինձ, թէ այս նոր էակի տանջանքները «ինձ համար անտարբեր բաներ են, (նշանակութիւն չու «նեն)։ Այսուամենայնիւ ես երեք իսկապէս խարուած չեմ «եղել այդ ցնորքներով. սակայն միտքս յաճախ յոզնում էր «նոր զգայութիւնները անդադար ուղղելուց և ես սկսում էի «այդ նոր էակի դժբաղդ կեանքով ապրել։ Ես ջերմապէս «ցանկանում էի կրկին տեսնել իմ հին աշխարհը, նորից «իմ հին եսը դառնալ. հենց այս ցանկութիւնն էր որ ար-

«գելեց ինձ անձնասպան լինելը Ես մի ուրիշ մէկն էի, և առաջում ու արհամարհում էի այդ ուրիշն. նա չափազանց «հակակրելի էր ինձ համար. կասկած չկար որ ուրիշ մէկը «իմ ձեն էր ընդունել և իւր վրայ առել իմ դործերը»*.

Անկարելի է աւելի պայծառ և աւելի կենդանի կերպով նկարագրել ՚ի մարդու մէջ ապրող երկու եսերի տարբերութիւնը՝ Դրանցից մէկը՝ հինը՝ պարզ է որ խիկական եսն է, այն սուբյեկտը որը ոչ մի կերպ և երբէք չէ կարելի օբյեկտացնել. Խակ միւսը՝ նոր եսը՝ մի բոլորովին օբյեկտիւ բան է և ոչ մի սուբյեկտ չէ պարունակում։ Առողջ մարդու օբյեկտիւ և սուբյեկտիւ երկու եսերի մէջ մի կանոնաւոր կապակցութիւն, կանոնաւոր յարաբերութիւն գոյութիւն ունի. Հիւանդ մարդու մէջ այդ կապակցութիւնը խախտուած է, — Հոգեկան երեսյթների աշխարհը դուրս է եկել իւր կեդրոնի օրինաւոր իշխանութեան տակից. Բայց այդ կեդրոնի և այդ երեսյթների էութիւնը չէ փոխուել. Խելագարի մէջ էլ դրանք կատարելապէս հաւատարիմ են իրենց բնութեանը՝ նախընթաց նկարագրութիւնը ուշի ուշով կարդալի՛ հեշտութեամբ կարող ենք նկատել որ նկարագրած երկու եսերի նոյն այդ յարաբերութիւնները թոյլ գծ երով կրկնւում են իւրաքանչիւր անկատկած առողջ հոգի ունեցող մարդու հոգեկան կեանքում։ Նատ յաճախ առողջ մարդիկ էլ մեք են աբար են գործում, շատ յաճախ իրենցից գժղոհ են լինում, ապաշաւում են իրենց սեպհական խօսքերի և գործերի համար որոնցից յետ կենալ չեին իմացել կամ չեին կարողացել. Բոլորս էլ ստիպուած ենք լինում միշտ հսկել մեր վրայ. լինում են բոպէներ երբ ամենքս մեղ ատելի ենք լինում. երբեմն նոյն խակ մեղ չենք ճանաչում՝ երբ հոգեկան կեանքը չափազանց լարուած կամ ճնշուած է լինում. Ամեն մարդու հետ էլ դէպքեր են պատահում երբ իրեն տիր ապետելը մի մեծ դործ և առաջինուա

*) Տէնի նոյն յօդուածը. էջ 293.

թիւն է։ Այնպէս որ մեծ կամ փոքր չափով բոլորս էլ զգում ենք երկու եսերի այդ թշնամութիւնը, որ այնպիսի չափազանց զօրութեան էր հասել մեր հիւանդի մէջ։

VII.

Սուբյեկտ:

Մեր հոգեկան կեանքի այն յատկութիւնը որ գիտակցութիւն ենք կոչում՝ հոգեկան կեանքի երևոյթներից մէկը չէ, միւս երեսյթների շարքում, այլ մի ընդհանուր յատկութիւն է որ իւր համար բոլորովին ուրոյն գաղափար է պահանջում. այն է՝ որ իւրաքանչիւր երեսյթներկուսի բաժանում՝ մի օբյեկտացնելի բանի և մի սուբյեկտի որ չէ ենթարկում օբյեկտացման։ Էմպիրիկ հոգեբանները սովորաբար ժխտում են գիտակցութիւնը այս մտքով. Ժխտում են պարզապէս նորա համար որ հոգեկան մերանիզմի, զուգորդութիւնների և իրենց այլ սովորական գաղափարների տակ չէ գտնում և հոգեկան կեանքի իրենց կաղմած պատկերի սահմաններից մի ելք է պահանջում։ Սակայն գիտակցութեան փաստը այնքան բարձրաձայն է աղաղակում իւր մասին, որ ամենքն էլ չեն կարողանում իրենց տեսութիւններով խլացնել իրենց այդ ձայնի առաջ։ Իրեւ այս փաստի չափազանց պայծառ լինելու մի ապացոյց՝ այստեղ առաջ կրերենք Զոն Ստիւարտ Միլլից մի կտոր, որ աւելի ևս նշանաւոր է այն պատճառով որ այս մտածողը փոքր հասակից գուղորդութեան հոգեբաննութեան գաղափարների վրայ էր կըրթուած եղել, միշտ այդ գաղափարներին էր հետեւել և զարմանալի հետեւզականութեամբ առաջ ըերել իւր գրուածքներում։ Բայց որովհետեւ նա միւնյոն ժամանակ գրուածքներում իւր անարատ և ծամարիտ փիլիսոփայաշքի էր ընկնում իւր անարատ և գրել է հետեւալը։

« Բացի առձեռն պատրաստ և հնարաւոր զգայութիւն»
 « ներից՝ կայ երևոյթներինաև մի ուրիշ խումբ, որոնց պէտք է
 « հոգու մասին մեր ունեցած գաղափարը կազմող տարրերի
 « շարքը դասել: Գիտակցութեան թելը, որ հոգու ֆենո-
 « մենալ կեանքն է կազմում, բաղկացած է ոչ միայն առձեռն
 « պատրաստ զգայութիւններից, այլ և մասամբ յիշողութիւն-
 « ներից և ակնկալութիւններից: Խակ ինչ են սրանք: Ինքն ըստ
 « ինքեան սրանք մի տեսակ պատրաստի զգայութիւններ են,
 « գիտակցութեան մի տեսակ վիճակ, և այս կողմից զգա-
 « յութիւններից տարբեր չեն: Բացի դրանից սրանք նման
 « են մի քանի տրուած զգայութիւնների որ ան-
 « ցեալումն ենք ունեցել: Սակայն սրանք նաև այն առան-
 « ձնայատկութիւնն ունեն որ իրենցից իւրաքանչիւրը
 « մի հաւատալիք է պարունակում՝ բացի իւր ներկա-
 « յում ունեցած սեպհական գոյութիւնից՝ նաև մի ուրիշ
 « բանի մասին: Ամեն զգայութիւն միայն սեպհական
 « ներկայ դոյութեան հաւատալիք է պարունակում. այն ինչ
 « զգայութեան յիշողութիւնը, եթէ նոյն իսկ որոշ ժամա-
 « նակի էլ չէ վերաբերում, մի միտք և հաւատալիք է պա-
 « րունակում՝ թէ այն զգայութիւնը, որի պատճեն կամ
 « մտապատկերն է նոյն յիշողութիւնը, իրօք գոյութիւն
 « է ունեցել անցեալում. նոյնպէս էլ ակնկալութիւնը քիչ
 « թէ շատ դրական հաւատալիք է պարունակում՝ որ այն
 « զգայութիւնը, որին ինքը վերաբերում է, գոյութիւն է
 « ունենալու ապագայում: Գիտակցութեան այս երկու վի-
 « ճակներին պատկանող երևոյթները ուրիշ կերպ չէ կա-
 « րելի արտայայտել քան այսպէս՝ սրանց մէջ եղած հա-
 « ւատալիքն այն է, որ ես ինքս եմ անցեալում ունեցել
 « կամ որ ես ինքս և ոչ թէ մի ուրիշը ունենալու եմ
 « ապագայում՝ այդ զգայութիւններն, որոնց մտաբերում
 « եմ կամ որոնց ակնկալում: Հաւատալիքի առարկայ
 « կազմող փաստն այն է, որ որոշ զգայութիւններ մի ժա-
 « մանակ իրօք կազմել են կամ յետագայում կազմելու են
 « վիճակների հէնց այն շարքի կամ գիտակցութեան հէնց

« այն թելի մի մասը, որի մի մասը այժմ նոյն զգայու-
 « թիւնների յիշողութիւնն ու ակնկալութիւնն է կազմում:
 « Հետեապէս եթէ ասում ենք թէ հոգին զգայութիւն-
 « ների մի շարք է, պէտք է լրացնենք այդ դրութիւնը և
 « ասենք՝ թէ հոգին զգայութիւնների մի այնպիսի շարք է
 « որ գիտէ իւր անցեալը և ապագան: Այսպիսով մի ալ-
 « տերնատիվի ենք հասնում՝ կամ պէտք է ընդունենք որ
 « հոգին, կամ եսը, ամեն տեսակ զգայութիւնների այլք
 « զգայութիւնների հնարաւորութիւնների շարքից առանձին
 « մի բան է, կամ պէտք է ընդունենք այն պարագոկը՝ թէ մի
 « բան, որ ըստ ենթադրութեան լոկ զգայութիւնների մի
 « շարք է, կարող է գիտենալ իւր մասին որպէս մի շարքի
 « մասին:

« Ճշմարտութիւնն այն է՝ որ այստեղ մի վերջնակա-
 « նապէս անբացատրելի բանի առաջ ենք կանգնած»...*

Խիստ էմպիրիկ-հոգեբանի այս խոստովանութիւնը
 թանկագին է: Խոկապէս՝ այդ մի խոստովանութիւն է այն
 եսի որ երբէք չէ կարող օբյեկտ լինել, այլ ինքն է ամեն
 օբյեկտիւթեան պայմանը: Այն է՝ ամեն առարկայաց-
 ման սկզբնական եղանակը առարկաները ժամանակի մէջ
 տարբերելն ու շարադասելն է, հետեաբար մի շարք
 կամ մի թել կազմելը: Ուստի իւրաքանչիւր ժամանակա-
 կան շարքի պայմանը մի անժամանակ ես է: Որպէս զի-
 ժամանակը մեզնից դուրսը լինի պէտք է որ ինք-
 ներս մեղ ժամանակից դուրս դնենք: Բայց խոկապէս նոյն
 այդ դուրսողութիւնը կրկնում է իւրաքանչիւր, ամենա-
 պարզ իսկ զգայութեան գէպքում: Մենք չենք ձուլում
 այս զգայութեան հետ, չենք կլանւում նրանից եթէ
 գիտակցութիւնը չենք կորցնում, և հետեաբար մենք մեզ
 նրանից դուրս ենք դնում և ոչ միայն զգում ենք, այլ և
 գիտակ ենք որ զգում ենք:

* An examination of Sir William Hamilton's philosophy. Lond.
 1865, p. 212, 213, (3-d. ed. 1876. p. 242, 242):

VIII.

Ի դ է ա լ ի զ մ:

Ինչպէս էլ որ լինի, նոյն խոկ եթէ գիտակցութիւնը իւր խոկական մտքով ընդունած լինենք, պէտք է մտքներս պահենք որ դեռ և ներքին սուբյեկտիւ աշխարհում ենք գտնում, այն շրջանում որ երազից չէ տարբեր ուռմ: Գիտակցութիւնը, մեր եսի զգայութիւնը, երազումն էլ չափազանց վառ է լինում մեր մէջ. և ինչ ուժեր էլ որ վերադրելու լինենք մեր եսին՝ պէտք է համաձայնենք որ դրանք երազում էլ գործում են ճիշտ նոյնպէս ինչպէս և արթնութեան ժամանակ: Սովորաբար գիտակցութեանն ենք վերադրում յիշութութիւնը, ուշագրութիւնը, համեմատումը, նոյնացնումը և այլն, մէկ խօսքով բոլոր այն գործողութիւնները՝ որոնք վեր են օբյեկտացնելի հոգեկան երևոյթներից, իրենք այլ ևս օբյեկտանալ չեն կարող և կատարում են միայն այն պայմանով որ արդէն կան մի քանի օբյեկտացած երևոյթներ, կատարում են այս երևոյթների վերայ: Բայց այս բոլոր երազում նոյնպիսի լրութեամբ է առաջ գալիս ինչպէս և արթնութեան ժամանակ: այնպէս որ այդ երևոյթների յատկութեան մէջ ոչինչ չենք գտնի՝ որով կարողանայինք երազն արթնութիւնից տարբերել:

Սակայն առանց երազի հետ համեմատելու էլ, եթէ կատարելապէս իւրացրել ենք պահանջելի հայեցակետը, պէտք է տեսնենք՝ որ ներքին աշխարհում ենք գտնում, և որ մի քայլ էլ ունենք անելու, և այս արդէն վերջին քայլն՝ իսկական օբյեկտիւ աշխարհ գուրս գալ:

Բայց այս ինչպէս անենք: Հոգեշանական հարցեր երբեք չհարցանիրած մարդկանց համար այսպիսի մի հարց գոյութիւն չունի: Դրանք հաստատ հաւատացած են որ շարժում են խոկական իրականութեան մէջ որ և իրենց համար ամեն բանից ակներե և անտարակուսելի է: Բայց երբ

արդէն վարժուած ենք ներքին գիտողութեանը, երբ սովորել ենք վերլուծել մեր մտքերն ու զգացմունքները՝ այն ժամանակ իմանում ենք որ մեզ անմիջապէս յայտնի են լոկ այն հոգեկան երևոյթները որ կատարում են մեր մէջ, իսկ մասցած ամեն ինչ մեզ մատչելի է միայն այդ երևոյթների միջնորդութեամբ: Այս է իդէ ալիդմ կոչուած վարդապետութեան հիմնական դրութիւնը, մի վարդապետութեան՝ որ բազմաթիւ տեսակներ ունի: Այն բոլորը ինչ որ պարունակւում է մեր իմացութեան մէջ, ամենից առաջ մի իդէ ական (իդէալ) բան է, այսինքն՝ մեր միտքն է, մեր մտապատկերն է, այն հարցը՝ թէ այդ իդէական (իդէալ) բանին արդեօք համապատասխանում է որևէ իրական (ուէալ) բան և թէ ինչ է իսկապէս համապատասխանում՝ հետազոտման կարօտ մի հարց է, մի խնդիր է, և ոչ երբեք սկզբնական մի տուեալ, ինչպէս կարծում են փիլիսոփիայութիւն անելու անընդունակ, անիմաստասէր մարդիկ:

Ըստ երևութին՝ այս հայեցակետը բոլորովին անխուսափելի է և կատարելապէս արդարացի: Բայց այդ քիչ է: Ըստ երևութին՝ իդէալիզմը իրենից ոչ մի ելք չէ տալիս, այսինքն՝ կամ չէ թողնում որ մեր իդէականի սահմաններից այն կողմը որևէ իրական (ուէալ) բան ընդունենք, կամ իրականը չժխտելով հանդերձ մեզ ոչ մի մուտք չէ տալիս դէպի նաև: Եւ յիրաւի մի անգամ մեր ներքին աշխարհն ընկնելուց յետոյ՝ միթէ կարող ենք այդ տեղից գուրս գալ: Ինչ էլ որ մենք պատկերացնելիս վիճենք, ինչպէս էլ մտածելիս վիճենք՝ արդեօք այդ բոլորը լոկ մեր մտքերն ու մեր մտապատկերները չեն լինի: Իրականի մասին մեր ունեցած գաղափարը՝ ինչքան էլ որ կատարելագործենք՝ դարձեալ լոկ գաղափար կլինի: Արտաքին աշխարհի գոյութեան մասին մեր ունեցած համոզմունքը՝ որտեղից էլ որ եղբակացնելիս վիճենք այդ համոզմունքը և ինչ հաստատութիւն էլ որ դրան վերադրելիս վիճենք՝ այնուամենայնիւ աւելի մի բան չէ քան մի համոզմունք, այսինքն՝ մի հոգեկան վիճակ: Ակնյայտնի

է որ մի անելանելի շրջագծի մէջ ենք ընկել և դատապարտուած ենք ընդ միշտ դրա մէջ մնալու:

Յաճախ բայնն հէնց այդպէս էլ հասկանում են: Մինչդեռ ակներև է որ դժուարութիւնն այստեղ նման է այն դժուարութեան, որ զգում են էմպիրիկ-հոգեբանները մեր եսի դադափարը շարգելիս: Եսը, ինչպէս տեսանք, ոչ միայն էմպիրիկ հոգեբանութեան շրջանի մէջ չէ մտնում, այլ այն անխուսափելի պայմանն է որով մեղ տրում է այդ շրջանը: Ճիշտ նոյնպէս՝ իրականութիւնը ոչ միայն ներքին աշխարհի երկոյթների թուի մէջ չէ մտնում, այլ այն պայմանն է որ անհրաժեշտ է ներքին աշխարհի դադափարը կազմելու համար: Հոգեկան երկոյթների դադափարը մենք կազմեցինք ժխտելով այն իրականութիւնը որին դրանք համապատասխանում են, և միմիայն այս կերպ կարելի է կազմել այդ դադափարը: Որպէս զի մտապատճերները լոկ մաքեր ու մտապատճերներ ընդունենք, պէտք է, ինչպէս Դեկարտն է ասում, ոին և առւտ համարենք դրանց (inanes et falsas, comme vaines et comme fausses), այսինքն՝ պէտք է ժխտենք իրականութեան հետ դրանց առընչութիւն ունենալը: Ապա թէ ոչ դրանք մեղ չեն ներշկայանայ իբրև հոգեկան երկոյթները:

Յիբաւի՝ ես ի հարկէ կարող եմ ասել՝ որ իմ ամբողջ կեանքը երազ է, որ աշխարհը լոկ իմ մտապատճերն է, որ տարածութիւնն ու ժամանակն իսկ լոկ իմ մտքի ձեւերն են. բայց որպէս զի այս խօսքերս լիակատար իմաստ ունենան՝ պէտք է որ երազ, մտապատճեր. միտք խօսքերը մի օրոշ իմաստ ունենան. իսկ ինչպէս ստանամ այդ իմաստը՝ եթէ շտարբերեմ այդ դադափարներն իրականութիւնից: Հետեւաբար ամենից առաջ իրականութիւնը պէտք է ընդունեմ:

«Մեր կեանքը երազ է»: բայց եթէ բացի երազից ոչինչ դոյլութիւն չունի՝ ապա այդ խօսքն էլ ոչ մի իմաստ չունի:

Հոգու իրական կեանքը:

Կերպին աշխարհում ապրելու դիւրին հնարաւորութիւնը և երկարատես սովորութիւնը միայն կարող էր ծնել իդէալիզմի այն ծայրայեղ տեսակները որ գանում ենք փիլիսոփայութեան պատմութեան մէջ: Ստկայն եթէ սովորական կեանքն էլ ինկատի ունենանք՝ շատ փաստեր կզանենք որոնք ցոյց են տալիս թէ իդէալիզմի տշամադրութիւնը ինչ աստիճան բնական մի բան է մարդուս համար: Մարդիկ՝ իրականութիւնը հասկանալու և սիրելու կողմից խիստ զանազանում են: Շատերին (առանձնապէս հիւսիսային ցեղերի մէջ) ներքին աշխարհի կեանքը խանգարում է իրականութեան վերայ պայծառ հայեացք ունենալուն, և բոնում է մասամբ խսկական կեանքի տեղը երբեմն-երբեմն բոլորս էլ ցնորդներով ենք ապրում և պէտք է կուսենք դրանց դէմ, ոչպէս զի իրերի իրական ընթացքը մեղանից չծածկեն: Բայց յամենայն դէպս գործնական կեանքում թէ մեղանից և թէ ուրիշներից մի օրոշ չափով ռէալիզմ ենք պահանջում և ոչ ոքի իրաւունք չենք տալիս լիսվին իդէալիստ լինելու: Եթէ կեանքը երազ լինէր միթէ արդարացի չեին լինի արբեցողները և ափիօն ծխողները, ու իրենց կեանքն հաճելի գրգռման մէջ են անց կացնում, որի ժամանակ նրանցից շատերը իրենց մտքերն առանձնապէս լուսաւոր են գտնում: Իրենց զգացմունքները ազնիւ և ուժեղ: Բայց մենք թէև հաշըբեցողութիւնը մեծ մեղք չենք համարում՝ այնուամենայնիւ կատարելապէս ներելի բան էլ չենք հաշում և նորա մէջ բնական կեանքի մի խեղաթիւրումն ենք տեսնում:

Բացի նիւթական հարբեցողութիւնից կայ և հոգեկանը, որ շատ աւելի գայթակղեցուցիչ է և սովորաբար

մինչև անդամ յարդանք է վայելում, բայց իրօք նոյնպէս անընական է և զնասակար: Միայն գինին և ափիոնը չեն որ հարկադրում են մեզ մոռանալ իրականութիւնը, մարդու կարող է արբենալ իւր մտքերով, զգացմունքներով, ցանկութիւններով: Այս մարդկանց համար, որոնց ներքին աշխարհը խիստ զարգացած է, այս մի շատ սովորական բան է: Այս գիտում կեանքը դառնում է որոշ հոգեկան տրամադրութեան մի անընդհատ սնուցում և փայփայում, և այդ արամադրութեանը յաճախ զոհ է բերում ամեն ինչ: Միրած միտքը շլայնում է մարդուս, այնպէս որ սա երբեմն անզօր է լինում ամենապայծառ ակների բանը տեսնելու, երադայոյս զգացմունքը խեղդում է ամենահասարակ և խոր ընազդները. ֆանտաստիկ ցանկութիւնները հարկադրում են կործանել թէ ուրիշներին թէ իրեն: Այս օրինակներից երեսում է որ ներքին աշխարհում ապրելը և իրականութեան մէջ ապրելը խիստ տարբեր բաներ են, այդ տարբերութիւնը ամեն օր դիտում ենք թէ մեր մէջ և թէ ուրիշների մէջ, և շարունակ վարժութիւն ենք անում այդ տարբերումը պայծառ և խիստ կերպով կատարելու: Մեր ամբողջ ներքին աշխարհը, որ մեզ անմիջապէս և կատարեալ ստուգութեամբ է յայտնի, կարծեալ թէ անիրական ենք ընդունում: Համեմատած ինչ օր մի այլ կտտարելապէս իրական (ուշալ) բանի հետ: Որպէսզի ներքին աշխարհի երեսյները մեզ համար կատարելապէս իրական (ուշալ) նշանակութիւն ստանան՝ պահանջում ենք օր մի ինչ օր այլ բանի համաձյան կամ համապատասխան լինեն, պահանջում ենք այնպիսի մի յառկութիւն օր ըստ ինքեան գրանիք կարող են և չունենալ: Այսինքն՝ մեր մտքերը իրական իմացութիւն պէտք է պարունակին, մեր զգացմունքները պէտք է մեր իրական բարիքն վերաբերեն, մեր իրական երջանկութեան բազադրիչ մասը կազմեն, մեր ցանկութիւնները հնարաւոր պիտի լինեն իրականանալու, նշանակուած լինեն իրադուչուելու համար և փոխանցուին իրական գործունելութեան:

Այս պայմաններում մեր ներքին աշխարհը կտառեալ իրականութեան նշանակութիւն է ստանում և կորցնում է իւր ցնորսական բնաւորութիւնը, կեանքը՝ երազից իսկական կեանքը է դառնում:

Սրան համապատասխան ներքին աշխարհի երեսիթ ներքին զանազան արժեքներ ենք վերտպում: Մենք ցանկանում ենք՝ որ մեր մտքերը ճշմարիտ լինին, զգացմունքները՝ հաստատ ու մաքուր, և կամքը՝ ազատ: Այս այն արանցենդենտ գաղափարների աղբիւրները, որ փիլասոփայութեան համար այնչափ գծուար խնդիրներ են եղել և են, և միհնոյն ժամանակ անընդհատ ներկայ են և ներդործում են մեր տմենորեայ կեանքում:

X.

Իմացութիւն:

Եթէ չընդունենք՝ որ մեր մտքերն ընդունակ են ճշմարիտ լինելու, կամ ուրիշ խօսքով եթէ չընդունենք օր իմացումը մեզ համար մի կարելի բան է, այն ժամանակ չենք կարող ոչ մի խօրհրդածութեան ձեռաւնարկել, և մեր մտածողութիւնը մի խաղ կլինի, որի մասին մինչև անդամ իրաւունք չենք ունենալ ասելու՝ արշուր իր ք այդ մի դատարկ խաղ է, թէ մի ուրիշ բան: Ուրիշն միշտ խորհրդածում ենք այն ողաճանով իմացութիւնը հնարաւոր է և մեզ մատչելի: Ճշմարտութեան գաղափարը հետեապէս չէ եղրակացւում որեւ է իմացութիւնից կամ խօրհրդածութիւնից, այլ ընդհատառակն սրանց նախագրուում է:

Այսպէս է գրւում իմացութեան մասին եղած հարցը հազերանական տեսակէակց. և կարելի է ցոյց տալ ո՞յ այլապէս հակառակթեան կտանք, նոլոր այսպէս կոչուած իմացութիւնները վերջ ի վերջոյ համեստում են այն ցարանաթիւնները վերջ ի վերջոյ համեստում են այն

դազափարի ժխտման որը հաստատել և բացատրել են կամենում։ Այսինքն՝ նոքա բոլորն աշխատում են օբյեկտացնել իմացման գործողութիւնը, օբյեկտացնել ճիշտ այնպէս, ինչպէս ինքն իմացութիւնը օբյեկտացնումէ ուրիշ գործողութիւններ և երեսիներ։ Սակայն օբյեկտացումն օբյեկտացնել իւր էութեամբ իսկ մի անկարելի բանէ. ճիշտ այնպէս ինչպէս որ աչքը չէ կարող ինքն իրեն առանել, ինչպէս որ լոյսը չէ կարելի տեսնել եթէ լոյսը հէնց այն միակ միջոցն է որի օգնութեամբ ենք տեսնում։ Աչքն ու լոյսը այն պայմաններն են որոնցով հնարաւոր է տեսողութիւնը. հետեւար գրանք իրենք անտեսանելի են. որովհետեւ իրենց համար, ըստ ենթադրութեան, նոյն պայմանները չկանչեացաբանութիւնն յօրինելու համար եղած բազմաթիւ փորձերը կարելի է կատարելապէս նմանեցնել այն բանին, եթէ մի նկարիչ մտադրուէր մի նկար նկարել, որ ինքն իրեն տեսնել կարողանար։

Նկարին տեսնող է պէտք։ Առանց տեսնողի, այսինքն առանց մի սուբյեկտի՝ նկարը կորցնում է իւր ամբողջ իմաստը։ Զուտ օբյեկտիւ տեսակէտից՝ նկարը լոկ մի նիւթական առարկայ է որոշ մեծութեան և ձեր, լոկ մի քաթան է շրջանակի վերայ քաշուած և զանազան տեղերում որոշ ներկերի զանազան շերտերով ծածկուած։ Նկարի իմաստը պարզում է միայն այն ժամանակ, երբ մէկը ըմբռնում է այդ ներկերի և դժադրութիւնների յարաբերութիւնը և տեսնում է ոչ թէ քաթան և ներկեր, այլ այն ինչ որ գրանք պատկերացնում են։ Հետեւար նկարիչը նկարելու ամբողջ ժամանակը նկարի առաջ մի նայող է երեակայում, ամենից բնականօրէն օրինակ հէնց իրեն։ Տեսնողի վերաբերմամբ եղած այդ գաղափարն այնքան կենդանի է և անդիմադրելի, որ նկարներ են պատահած առաջ մտածակութեան աւելացրած են նաև նայողի պատկերը, որ նայում է այդ բովանդակութեան Այսպէս Բրիւլովը Պոմպէյի վերջին օրը նկարում ինքն իրեն

իբրև նայող է նկարել, իսկ մափայէլը՝ Երեն՝ Scuola d' Athene-ի մէջ վատիկանում։

Բայց արդեօք ամենամեծ անհեթեթութիւնը չէր լինի, եթէ մի նկարիչ երեակայէր՝ թէ այդ նկարուած նայողը կարող է տեսնել նկարը և այդպիսով փոխարինել կենդանի տեսնողին։ Մինչդեռ նման բան են փորձում երեակայել այն մարդիկ, որոնք մտածում են իմացութիւնը՝ իմացութեանը մատչելի բանի միջոցով կառուցանել։

Մատերիալիստները, որոնք իւրաքանչիւր երեսիթ նիւթական մասնիկների շարժման են վերածում և կարծում են՝ թէ ժամանակին այդ շարժումից կկառուցանեն նուե իմացութիւնը, բոլորովին նման են մի նկարչի, որ կյուսար ժամանակին այնպէս լոււ նկարել որ իւր նկարած մարդիկ կարողանան միմեանց տեսնել։ Ակներեւ է որ մենք կարող ենք պատկերացնել և հաշուի ենթարկել մասնիկների ամեն տեսակ շարտգասութիւն և շարժում։ Բայց երենք մասնիկները երեք միմեանց մասին ոչինչ իմանալ չեն կարող, նրանք միշտ լոկ իմացութեան առարկայ կմնան և երեք իմացող սուբյեկտ չեն դառնոյ։

Նմանապէս և այն անձերը, որոնք փորձ են անում իմացութիւնը կառուցանել օբյեկտացած հոգեկան երեսիթներից, օրինակ՝ զդայութիւնն երից կամ հոգու ուրիշ գործողութիւններից, ոչ մի բանի չեն հասնի բացի սուբյեկտիւ զմից, որ իսկապէս իմացութեան Ժխտումն է։ Ներքին տչխարհի ինչպիսի երեսիթներ էլ վերցնելու լինինք և ինչպէս էլ որ գրանց խմբակցենք՝ այլ պէտք գիտենք իրականութեան վերաբերմամբ մի սին և սուտ բան է։ Դիցուք օրինակ կարողացանք իմացութիւնը զդայութեան վերածել, այս գէպքում մենք այնուհետեւ պէտք է այսպէս մտածենք՝ քանի որ զդայութիւնը մեր մի սուբյեկտիւ բանն է, քանի որ նման ոչ մի բան զուտ-օբյեկտիւ աշխարհում ենթ չագրելենք կարող՝ բան զուտ-օբյեկտիւ աշխարհում որ մեր ամբողջ իմացութպատ ուրեմն տպացուցանելով որ մեր ամբողջ իմացու

թիւնը զգայութիւններում է պարունակում՝ տպացու-
ցեցինք որ մենք ոչ մի իրավան իմացութիւն չունենք:

Առաջ բերենք պատեղ նշանաւոր բնախօս Հելմհոլցի
խորհրդածութիւնը, որ շատ պայծառ կերպով երեան է
հանում հարցի էութիւնը: Հելմհոլցը ապացուցանում է, որ
հին սահմանումը, որի համաձայն ճշմարտութիւնը մեր
մտապատկերների՝ առարկան երին համաձայն
լինելն է, — ոչ մի հնարաւոր իմաստ չունի:

«Եթէ, ասում է Հելմհոլցը, որևէ է Ա մարդու գըլ-
«խում եղած մտապատկերի և պատկերացուելիք առար-
«կայի մէջ որևէ է առասակի նմանութիւն, համաձայնութիւն
«գոյսութիւն ունենար, այն ժամանակ մի ուրիշ Յ միաք,
«որը միենոյն օրէնքների համաձայն պատկերացնելու կի-
«նէր թէ այդ առարկան և թէ գորա՞ Ա-ի գլխում եղած
«մտապատկերը, կարող կլինէց դոնել կամ գէթ կարող
«կլինէր մտածել դրանց մէջ մի նմանութիւն: Որովհետեւ
«նմանը՝ նման կերպով անդրագաշճուած (պատկերա-
«ցուած) լինելով պէտք է, ի հարկէ, նման պատկերներ
«(մտապատկերներ) տայ: Այժմ հարցնում եմ. ինչ նմա-
«նութիւն կարելի է մտածել ուղեղում կատարուող գոր-
«ծողութեան, որ ընթացակցում է սեղանի պատկերաց-
«մանը, և իրեն սեղանի մէջ, Հարկաւոր է արդեօք երկա-
«կայել, թէ սեղանի ձեր նկարում է ուղեղում ելեկա-
«տրական հոսանքներով, և թէ եթէ պատկերացնողը պատ-
«կերացնի որ ինքը սեղանի շուրջը ման է գալիս ելեկ-
«տրական հոսանքները կնկարեն նաև մարդու պատկերը:
«Այսաքին աշխարհի հեռանկարական ծրագրուիլը ու-
«զեղի կիսագնդերում, որ սմանք ենթադրում էին, այն-
«յայտնի է որ անբաւարար է նիւթական առարկա-
«յի մասին մտապատկեր կազմելու համար: Եւ ենթա-
«գրենք թէ խիզախ երեակայութիւնը առանց տա-
«տանուելու այդ և նման ենթադրութիւններ կանէր էլ.
«Բայց դարձեալ ուղեղում սեղանի այդ ելեկտրա-
«կան ձեակերպութիւնը լոկ մի ոյլ նիւթական օբյեկտ

«կլինէր, որ պիտի ըմբռնման ենթարկուի, և ոչ թէ սե-
«զանի մտապատկեր: Սակայն իմ առաջ բերած ենթա-
«գրութիւնը ժիտել կաշխատեն ոչ այնքան մատերիալիս-
«տիկ կարծիքների կողմանիցները, որքան հէնց սպի-
«րիտուալիստները: Մինչդեռ հէնց սրանց համար ինչ-
«պէս ինձ թւում է բանն ընդհակառակն աւելի պարզ
«պիտի լինի: Ի՞նչ նմանութիւն կարելի է ենթադրել մտա-
«պատկերի՝ աննիւթ, անտարած հոգու փոփոխութեան,
«և տարածութիւն բռնող մարմնի՝ սեղանի մէջ: Սպիրի-
«տուալիստիկ փելիսոփաների կողմից, որքան ես գիտեմ,
«նոյն խակ երբէք փորձ չէ եղել այդ նմանութիւնը հաս-
«տատելու համար հիպոտէզ կամ ֆանտազիա յօրինելու.
«Բայց և հէնց այդ հայեացքի էութեան համաձայն ամե-
«նեին չէ կարելի նման փարձեք անել:»*

Հելմհոլցի այս խորհրդածութիւնները շատ պարզ
կերպով ցցց են տալիս, որ եթէ մտապատկերների
առարկաների հետ ունեցած համաձայնութիւ-
նը օբյեկտիւ կերպով հասկանալու լինենք, հետեւբար
հասկանանք ինչպէս մէկը միւսի մի սրոշ նմանութիւն,
ապա անհեթեթաթեան կհասնենք: Սակայն սրանից չէ
հետեւմ որ իմացութիւնը տնհնարին բան է, այլ միոյն
որ համաձայնութիւնը, որի մասին է խօսքը, այլ կերպ
պէտք է հասկանալ: Եւ առհասարակ՝ անհզաժեշտորէն
իմացութեան ժխտմանը կհասնենք, երբ իմացութիւնը մեր
հոգու և այլ առարկաների միջև եղած որևէ օբյեկտիւ ազ-
գեցութիւններից կամ յաշակերութիւններից գուրս բերել
աշխատենք: Խրաքանչիւր օբյեկտիւ ազգեցութիւն կամ յա-
րաքերութիւն իրեն իրեւ հետեւամք ունենաւմ է միայն մի
նոյնպիսի օբյեկտիւ հակազդեցութիւն կամ հակադարձ յա-
րաքերութիւն, որը հետեւբար իւր մէջ իմացութիւն չէ պա-
րաւնակում: Աչա թէ ինչու նիւթական ընտթեան մէջ ամեն

*Handbuch der physiologischen Optik, bearbeitet von H. Helmholtz.
Leipz. 1867, էջ. 443:

տեսակ աղբեցութիւն և յարաբերութիւն ենթագրելով
հանդերձ առարկաների միջև՝ դէպի իմացութիւն ոչ մի շարա-
ժում չենք տեսնում։ Նիւթական աշխարհը մեր սովորական
հասկացողութեամբ բոլորովին կոյրէ, ամենեին չէ իմա-
նում ինքն իրեն։ Իսկ մարդը աշխարհի հանդիսատեսն է,
նա իմացութիւն ունի։

XI.

Զգացմունի:

Մեր զգացմունքների իրական (ոէալ) լինելը այն է՝
որ դրանք ախորժ և անախորժ են լինում, այնպէս որ
կարող են մեր իրական երջանկութիւնը կամ դժբաղգու-
թիւնը կազմել։ Մեր զգացմունքների այս յատկութիւնը
չէ կարսղ օբյեկտացման ենթարկուել և չէ կազմում իմա-
ցութեան առարկայ բառիս սովորական իմաստով վերցրած։
Օբյեկտիւ երեսյթների փոխադաշտ յարաբերութիւն-
ները, դրանց աղբեցութիւնները և հոկտղղեցութիւն-
ները, և նմանապէս այն բոլոր օբյեկտիւ գործողութիւնները
որոնք կատարում են էակների մէջ՝ ինչպէս էլ որ բար-
գելիս և շրջելիս լինենք, ախորժութեան կամ անախոր-
ժութեան ոչ մի նշան անդամ չեն տոյ։ Ահա ինչու հա-
մար նիւթական աշխարհը կատարելապէս անդայ ենք
համարում։ Այս գեռ քիչ է՝ մեր հոգու երեսյթները օբ-
յեկտիւ կերպով դնելիս, մեր հոգեկան մեքանիզմի գոր-
ծողութիւնները վերլուծելիս՝ կարծես թէ հոգեկան կեանքի
միայն սառն դիակն ենք ուսումնասիրում, և դորա զանազան
մասերի նկարագրութեան վերայ պէտք է աւելացնենք ա-
ռանձին ցուցում դրանց յատուկ զգացմունքների նշանա-
կութեան համար, դրանց համեմատական ծանրակշխութիւնը լինե-
լու համար՝ եթէ կարելի է այսպէս ասել։

Աշխարհն ըստ ինքեան, օբյեկտիւ տեսակէտից, սառն

և միապաղաղ է։ Միայն մեր զգացմունքն է որ նրանից
զղուանքի և հիսացման առարկայ է շինում, նորա մէջ գե-
ղեցկութիւն և վեհութիւն, սարսափ և տգեղութիւն մըտ-
ցնում։ Եւ այս կատարում է անընդհատ, ամեն բոպէ.
անգոյն, գժգոյն օբյեկտիւ աշխարհը մեզ նաշխուն է երե-
ւում։ Դայները, ինչպէս և միւս բոլոր յատկութիւնները՝
լոկ մեր սեպհական օբյեկտացրած զգայութիւններն են։

Բայց ինչպէս էլ որ օբյեկտացնելու լինենք մեր
զգացմունքները՝ պարզ է որ չենք կարող զրկել իրենց
իրական (ոէալ) նշանակութիւնից, այսինքն այն յատկու-
թիւնից որով գրանք մեր երջանկութեան կամ տանջան-
քի տարրն են կազմում։ Դրանց իդեական բնութիւնն այն-
պէս է, որ պահանջում է որ գրանք իրական (ոէալ)
նշանակութիւն ունենան։ Դրանք իրական (ոէալ) են ար-
դէն նորա համար որ սուբյեկտիւ են։

Սրանով կարելի է բացատրել հոգեբանների սովորա-
կան ջանքերը՝ ամբողջ հոգեկան կեանքը զգայութիւնների
վերածելու, իբրև այնպիսի երեսյթների, որոնք կատա-
րելապէս սուբյեկտիւ լինելով հանդերձ միւնոյն ժամանակ
անտարակոյս իրական (ոէալ) են։

Այսուղից է առաջ դալիս նաև զգացմունքների
գործնականապէս դայթակեցուցիչ լինելը մարդու
համար, մարդկանց անդադար հետամուտ լինելը ախորժելի
զգացմունքների՝ ի վեաս ծամրատութեան և բարոյականու-
թեան։ Ախորժելի զգացմունքը ինքն է իրեն արդարա-
ցնողը, ինքն է իւր նպատակը, ոչ մի ուրիշ իրականու-
թեան կարօտ չէ։ Ուստի մեր միտքը՝ որ յիշում է ան-
ցեալը և կանխատեսում ալպագան՝ յաճախ մեր բաղդա-
ւորութեանը արգելը է համարում, և ինքնամուռ
ցութիւնը շատերի համար ախորժանքի պայման է
հանդիսանում։

Վաեմագոյն և լաւագոյն իմաստով՝ պէտք է նոյնպէս
ընդունել որ մեզ համար իրական երջանկութիւնը մեր
զգացմունքների մէջ է, Յիւրակ՝ մեր իմացութիւնը, ինչ-
ուղացմունքների մէջ է։

պէս վկայում է պատմութիւնը, կարող է շատ անսույզ, չառ խարուսիկ լինել, նոյնպէս և մեր գործունէութիւնը կարող է ապարդիւն, անյաջող և հանդամանքների տակ ճնշուած լինել, Բայց մի բան մեղ չի խարի, մի բան մեղ միշտ երջանկութիւն կբերէ՝ հոգու կատարեալ մաքրութիւնն ու անդրբութիւնը, որ որբութիւն անունով է յայտնի:

— Ի բայր Պատմութիւնները
առիւն, մաս մզմայր մատուցում (բաժա) այսուց
մասնաւ նոյն առաջնորդութիւնը ինչպէս այսուցում
առաջ առաջ առաջնորդութիւնը առաջ այսուցում

III.

Կ ա մ ի:

ՍԵՐ գործողութիւնները մեր իշխանութեան տակ են, ենթարկուած են մեր կամքին Ահա ամենահասարակ որոշումը թէ ինչ բան է կամքը: Կամքը մեր գործողութիւնների աղբեւը կամ առաջնող պատճառը չէ: մեր գործողութիւնների շրջանը տաւած է մեղ անկախ մեր կամքից, կախուած է մեր հոգու և մաշմանի որպիսութիւնից և ուժերից, և ոչ մի կամք չէ կարող ընդառնել և փոխել այդ շրջանը: Բայց կամքը կարող է ընտրութիւն անել այդ տուած գործողութիւնների միջի, կամ յետ կենալ գրանցից: **ՄԵՐ** գործողութիւնների (ոչ ամենքի, այլ մի քանիսի) վրայ ունեցած մեր այդ իշխանութիւնը կամեց ողութիւն, աղատութիւն ենք անուանում, որ և վերագրում ենք, աւելի կամ պակաս շափով բոլոր շնչաւոր էակներին: Կամք և աղատութիւն համանիշ են, և «անազատ կամք» contradictio in adjecto է, ինքն իրեն հակասող մի խօսք:

Երբ կամքն օբյեկտացնել են ուզում՝ սովորաբար նորան ոյժ են կոչում և գործողութիւններ վերագրում: Բայց իւրաքանչիւր ոյժ ենթարկուած է յայտնի որդիների որոնցից չէ կարող խոյս տակ: Բնարութիւն

անել և յետ կէնտ ոչ մի ոյժ չէ կարող: և ապատ սյժը նոյնպիսի մի contradictio in adjecto է ինչպէս և «անազատ կամքը»: Բնդհակառակն կամքն ուզիդ կերպով հատկանալու համար՝ պէտք է օբյեկտացնենք հոգու բոլոր ուժերն ու գործողութիւնները, և ապա պատկերացնենք թէ կամքը անօրինում է դրանց, հետևաբար շնչաւոր էակի ուժերից և գործողութիւններից բարձր է կանգնած, և ոչ թէ դրանց թւումը, գրանց շարքումն է: Իսկ եթէ սյդպէս է ապա կամքը օբյեկտացուած լինել չէ կարող: Եւ իրօք՝ ինչպէս օբյեկտացնել ընտրութիւնն ու յետ կենալը: Կամքի ճշմարիտ գաղափարի հակառակորդները սովորաբար էլ տառեմ են՝ թէ ընտրութիւն չկայ, այլ կայ միայն մի ցանկութեան ոչնչացնում միւսի միջոցով: Բայց բոլորս էլ գիտենք, որ այն մարդը որի հոգին կոռուզ ցանկութիւնների իշխանութեան տակ է գտնուում, որը լոկ գրանցից հզօրագունին է հնագանդում և չէ կաշող ոչ մէկից յետ կենալ քանի գեռ նրան չեն ընկճել միւս ները, — մի ողորմելի էակ է, անկարող ինքն իրեն իշխելու, կամ աղաւը կը եւ բոլորս էլ համանում ենք թէ ինչ է նշանակում սեպհական ցանկութիւններից բարձր լինել և աշխատել մի քանիսը ընկճել, իսկ միւս ները կրթել և զօրացնել: Մենք կարող ենք օբյեկտացնել մեր ցանկութիւնները, այսինքն սին և սուտ գարձնել, ինչպէս Դեկարտն է ասում, ներքին աշխարհի համարակ երեսը թիւների վերածել և քաշուել հեռանալ գրանցից մեր անմատչելի եւը:

Հոգեկան կեանքի բոլոր յատկութիւններից կամքն ամենից քիչ կարող է օբյեկտացման ենթարկուել: Խմացութիւնը գեռ կարելի է օբյեկտիւ կերպով պատկերացնել իրեւ էակների միջի և զած մի ինչ որ կապակցութիւն, փռխագարձ յարաբերութիւն կամ ազգեցութիւն: Զգացմունքը սովորաբար օբյեկտացման են իբրև զգացուող էակի վիճակ կամ նորա մէջ կատարուող մի ներքին գործողութիւն, ճակ կամ նորա մէջ կատարուող մի ներքին գործողութիւն, որով զգացմունքը նշանակելու համար գործածութեան

մէջ են մտել այնպիսի բառեր, ինչպէս են ցնցում,
յուղմունք, émotion և այլն։ Սակայն կամքը չէ կարելի
օբյեկտացնել նոյն իսկ և՛ անկատար ձեռփ։

Ոչ ոք կարծեօք Շոպենհաուէրից լաւ չէ արտայայշ-
տել կամքը օրինկտիւ կերպով ըմբռնելու այդ անհնարի-
նութիւնը։

«Եթէ ընդունենք, ասում է Շոպենհաուէրը, կամքի
«ազատութիւնը՝ այն ժամանակ մարդկային ամեն գործու-
«ղութիւն անբացատրելի հրաշք կլինի, այն է՝ մի գոր-
«ծողութիւն առանց պատճառի։ Եւ եթէ խիզախենք փորձ
«անել պատկերացնելի գարձնելու մի այդպիսի liberum arbit-
«rium indifferentiae՝ ապա շուտով կտեսնենք որ այդ գէպ-
«քում միտքը իսկապէս դէմ է առնում, նա ոչ մի ձե-
«չունի մի այդպիսի բան մտածելու համար։ Որովհետեւ
«հիմնաւորութեան օրէնքը, երեսյթների մշտական որոշու-
«թեան և միմեանցից կախումն ունենալու սկզբունքը՝ մեր
«խմացական կարողութեան ամենալավդհանուր ձեն է, մի
«ձեւ որ նայած իւր օբյեկտաների զանազանութեանը՝ զա-
«նազան տեսակների է լինում։ Իսկ այստեղ պէտք է
«մտածենք մի այնպիսի բան, որ որոշում է՝ առանց ինքը
«որոշելի լինելու, որ առանց հաջկագրուելու, հետեա-
«բար առանց հիմքի, առաջացնում է օշինակ Ա՝ մինչդեռ
«կարող էր նոյնպէս Յ առաջացնել, կամ Յ, կամ Դ, և
«այն էլ կատարեալ կերպով կատող էր, կարող էր հէնց
«նոյն հանգամանքներում, այնպէս որ Ա-ի մէջ այնպիսի
«բան չ'այ որ իւրեն առաւելութիւն տա՞ (քանի որ
«առաւելութիւնը կլինէր պատճառականութիւն, պատ-
«ճառաբանութիւն) Յ-ի, Յ-ի, Յ-ինկատմամբ։ Այստեղ մենք
«յանդում ենք բացարձակ պատահանութիւն կաղա-
«փարին։ Կը կնում եմ՝ այս գէպքում միտքը կատարեա-
«պէս դէմ է առնում, եթմիայնէ կարող ենք նորան մի
«այդպիսի վիճակի հասցնել։» *

* Die beide Grundprobleme der Ethik, 2-te Ausg. Leipzig. 1860. S. 45.

Այստեղ պարզ է որ գժուարութիւնն առաջ է գա-
լիս ամբողջ գործողութիւնը օբյեկտիւ կերպով պատկե-
րացնելու պատճառով։ Անկարելի է, ասում է Շոպենհա-
նուերը, որ որևէ գործողութիւն իւր պայմաններով կա-
տարելապէս որոշուած չինի. հետեաբար կամածին գոր-
ծողութիւն չկայ։ Օբյեկտիւ տեսակէտից այս կատարելա-
պէս անտարշակուսելի է։ Բայց գործողութիւններից մի քա-
նիսում պայմաններից մէկը իմ կամեցողութիւնն է։
իսկ կամեցողութիւնը միայն բոլորովին սխալ կերպով կա-
րող եմ մի օբյեկտիւ բանի տեղ ընդունել և ուրիշ
պայմանների հետ մի շարքում դնել։ Կամեցողութիւնը
օբյեկտացնելու նոյնքան քիչ իրաւունք և հնարաւորու-
թիւն ունեմ։ որքան իմացութիւնը կամ զգացմունքը
օբյեկտացնելու։

Ահա թէ ինչու միայն այն աշխարհը որ լիովին օբյեկ-
տացնում ենք՝ միայն նիւթական աշխարհ՝ միենոյն
ժամանակ իրրել կատարեալ անհրաժշտութեան ասպարէզ
ենք ընդունում, մինչդեռ ամենաստոր շնչաւոր էակներին.
կամեցողութեան սաղմեր ենք վերագրում։

XIII.

Հոգու լիակատար կեանիը։

Ուրեմն՝ ճշմարտութիւնը, բարին և աղատ
գործունէութիւնը գտղափարներ են որոնք իմա-
ցութեան սովորական ձեւերից բարձր են կանգնած, որոնք
մի առանձին տեսակի մտածողութիւն են պահանջում և
միենոյն ժամանակ մեղ շարունակ յատուկ են, մեր հոգեկան
կեանքի գլխաւոր բովանդակութիւնն են կազմում։ Ոչ մի-
այն մարդը այլ և ամեն շնչաւոր էակ հէնց նորա համար
էլ շնչաւոր է կոչում, որ կարող է տանջուել և զուարձա-
պէս կեանք կամքը լոյսի նման կարող է անթիւ աստիճան։

ներ ունենալ, աշեղովի պայծառ վայլից մինչև վերջաւ լոյսի մթնշաղը։ Հոգեկան կեանքի խակական բնոյթն երեան է դալիս, ի հարկէ, նորա կատարեալ կերպով բացուած ժամանակը, հետեւաբար մարդու մէջ, և այն՝ լիակատար հոգեկան կորովի բոպէներում որ երբեմն ունենում է մասդ։ Հոգեկան այդ լիակատար կեանքը զըննելիութեանում ենք որ ճշմարտութիւնը, բարին և ազատութիւնը ընդունել, այսինքն ընդունել որ մեր հոգեկան կեանքը իրական (ռէալ) նշանակութիւն, իրական բովանդակութիւն ունի՝ այն անհրաժեշտ պայմանն է որով միայն և եթ կարող ենք ապրել, առանց որին մեր առաջը միայն դատարկութիւն, ոչնչութիւն և անմտութիւն ենք աեսնում։ Ուստի հոգեբանութիւնը թերեւ կարելի է ուղղակի այդ գաղափարներից սկսել որսնց ոչ մի սեղից չէ կարելի հետեւնել և առանց որսնց չէ կարելի հոգու և նոյա կեանքի մասին հասկացողութիւն ունենալ։ Այդ գաղափարները հաստատելուց յետոյ կարելի է այսուհետեւ առաջանաբար վերացումներ անել։ Օրինակ՝ ճշմարտութիւնը, բաշին և ազատութիւնը վերլուծելով կդտնենք որ այստեղ ամենուրեք մի սուբյեկտ է ենթագրուում, մեր եսը, որի համար միայն և կարող է դպութիւն ունենալ թէ ճշմարտութիւնը, թէ բարին և թէ ազատութիւնը։ Այսուհետեւ՝ եթէ այդ սուբյեկտը համարենք բացառիկ իրականութիւն, ապա մեր հոգու ամբողջ բովանդակութիւնը կարելի լինի ռէալ նշանակութիւնից զուրկ համարել։ Այս գէպօւմ իմացութիւնների փոխարէն մտք եք և մտալատել երեներ կստանանք, բարու և չարի փոխարէն՝ զգացմունքներ, կամքի դործողութիւնների փոխարէն՝ ցանկութիւններ և ձգուածներ, մէկ խօսքով կստանանք մեր ներքին աշխարհը, մեր հոգու սուբյեկտիւ շրջանը։ Այսուհետեւ սուբյեկտիւ իդմի հայեցակէտի վրայ հաստատուելուց յետոյ՝ կդրունենք որ երազի ու արթնութեան մէջ տարբերութիւն չկայ, և որ հետեւաբար նիւթակոն աշխարհը անմիջական ստու-

դութեամբ մեզ յայտնի չէ։ Եւ այսպիսով նորից կհամնենք նոյն աշքիմէդեան յենակէտին որից սկսել ենք, այսինքն՝ cogito, ergo sum.

XIV.


Եղակացութիւն։

Յամենայն գէպս հոգեբանութիւնը՝ մեր հոգեկան կեանքը անմիջապէս ուսումնասիրելով՝ պէտք է մեզ իրենց պարզութեամբ և կենդանութեամբ ամենազօրեղ ապացոյցներ ներկայացնէ մի կողմից՝ սկեպափցիզմի, իսկ միւս կողմից՝ մատերիալիզմի և նեցեսսարիանիզմի դէմ։

Հոգու կեանքը մեզ համար ամենաանմիջական իրականութիւնն է, ինչպէս այդ ուսուցել է նաև Դեկարտը։ Մետաֆիզիկոսները (բնագանցագէտները) ձգտում են հոգին առարկայացնել. հոգին զննում են իբրև մի էակ որին յասուկ են իմացութիւնը, զգացմունքը և կամքը. ուստի և հարց են զննում՝ ապրեօք որ և է իմաստ կայ հոգու այս գործունէութիւններում։ Բայց այն մարդու համար որ հոգեբանութեան հայեցակէտից է նայում՝ հոգեկան կեանքի էութիւնը ուղղակի իմացութիւնը, զգացմունքն ու կամքն է. այնպէս որ եթէ որանց իրական (ռէալ) լինելը ժխտելու լինենք՝ ապա էլ ոչ մի բան չի մնայ խօսելու համար։

Իսչ գիտութիւն էլ որ շարագրելիս լինենք՝ պէտք է ամենից աւելի պինդ հեց ուսումնասիրելիք առարկայից բռնենք և ամենից շատ վախենանք կանխակալ հասկացողութիւններ մէջ բերելուց։ Այդ կանխակալ հասկացողութիւնները կարող են այնպէս լինել, որ բոլորովին կծածկեն մեզանից մեր առարկան, չեն թողնի որ մերձենանք անգամ նրան, այլ կստիպեն լոկ թափառել նորա շուրջը։ Այսպէս՝ մատերիալիստը, որ ձեռնարկում է հոգեբանութեան, ամենաբարեխիզ չանքեր գործ դնելով հանդերձ

կարող է երբեք չհասնել հոգեբանական հարցերի ըմբռնմանը։ Այսպէս մենք տեսանք օրինակներ տրամադաների, որոնք ոկզբեց և եթ մտածողութիւնը ժխտող դաշտափարներով զբաղուելով՝ մեծ երկեր են դրում, որոնք անխուսափելի կերպով լոկ այլ ժխտմանն են տանում։ Ինչ վերաբերում է հոգեբանութեան՝ սուբյեկտի և օբյեկտի տարբերութիւնը, և այնուհետեւ եւ եղ թների սուբյեկտի և իրական (ռէալ) նշանակութեան տարբերութիւնը՝ իւր առարկայի դլխաւոր յատկանիշն են, և ով այդ տարբերութիւնը ինչպէս պէտք է չէ հասկացել, նա ինչը ան էլ խորհի՝ կմտածէ և կխօսի լոկ հոգուն վերաբերող իրերի մտսին, բայց ոչ բուն հոգու մտսին։



Ազդեցութիւն—գոյացութիւն

Ալտերնատիվ—альтернатива

Անալիզ և թարկել—анализировать

Անալոգիկ—аналогический
(ա. նմանորինակ)

Բնախու—физиологъ, | ութիւն—физиология

Անդապ—безчувственный

Անիմաциоնէր—нефилософствующий

Անիրական—недействительный, не-
реальный

Անիւթ—невещественный

Անտարած—непротяженный

Անսույց—недостоверный, невѣрный

Անսուլութիւն—недостовѣрность

Անշ | ցոյց—доказательство, ապ. ի
հակառակն—док. отъ против-
наго, | ցուցանել—доказывать,
ապ. փարել—вести доказатель-
ство.

Առարկայ—предметъ, | ական—объек-
тивный, | ացնել—объективиро-
вать, | ացում—объективирова-
ние, объективация.

Առանձնայակութիւն—особенность

Աստղագիտութիւն—астрономія.

Արխէ—архей.

Բանականութիւն—разумъ.

Բանաձև—формула.

Բանավրութիւն—умозаключение.

Բացառար—отрицательно, | ական
—| тельный, | ել—ть.

Բացարձակ—обсолютны, о.

Բնագէց (ա. նատուրալիստ)—на-

туралистъ.

Բնագանցալիսութիւն (ա. մետа-
ֆիզիկայ)—метафизика, | գէտ

(ա. մետաֆիզիկոս)—метафи-
зикъ.

Բնախու—физиологъ, | ութիւն—фи-
зиология.

Գաղափար—понятие.

Գիտակ | լինել—знать, | ան—науч-
ный, | ից—сознательный, | ից
լինել—сознавать, | ցարքը—
сознательно, | ցական—созна-
тельный, | ցել—сознавать,
| ցութիւն—сознание, | ցում—
сознавание, сознание.

Գիտելիք—знание, познание, свѣдѣніе.

Գիտնական—ученый.

Գիտութիւն—наука.

Գոյ | արանութիւն—онтология, | ու-
թիւն—бытие, существование,
գոյութիւն անենալ—суще-
ствовать.

Գործնական—практический, практика.

Գործողութիւն—процессъ, дѣйствіе,
дѣятельность.

Գրգիռ—раздражение.

Դաս—классъ

Դասաւոր | ել, | ման ենթարկել—
классифицировать.

Դասել (ապ.)—подводить(подъ).

Դատել—судить.

Դատուղութիւն—сужденіе, разсуж-
дение.

Դետերմինիզմ—детерминизмъ.

Գիտեկութիւն (տ. տրամախօսութիւն)	щать.
Դիւն —діалектика.	Ընթացակցիւլ —сопровождать, ուել —ся.
Դիտողութիւն —наблюдение.	Թթուածին —кислородъ
Դոգմատիկ —догматический.	Ժլտաթիւ —отрицать, ում—отрицание.
Դուալիզմ —дуализмъ.	Իդէշիկան —идеальный, յ—идея, լ—идеальный, լիզմ—идеализмъ, լիտ—идеалистъ.
Դրական —положительный, դրական ձեռվ յայտնել—утверждать, дѣлать утверждение.	Խմանել —знать, օն(ав)ать, չը- ն(ав)ать.
Դրութիւն —положение.	Խմատուսէր —философъ, սիրել— философствовать, սիրութիւն —философия (տ. фիլосոփի- յութիւն).
Եղակի —единий, ութիւն—единство.	Խմացանութիւն —теорія познанія, гносеология, ական—познава- тельный, ութիւն—познаніе, знаніе, ում—познаваніе, поз- наніе.
Ելակէտ —психическая точка.	Խնդրուկայիշ —индукция.
Ելեկտրական —электрический, ու- թիւն—электричество.	Խնդրուկիշ —инверсія.
Երեակայ պկան —воображаемый, ել —воображать.	Իր —вещь, ստ ինքեան իր—вещь въ себѣ, ական—дѣйствительный, реальный, ականութիւն—дѣй- ствительность, реальность, сущ- ствующее, ական լինու— дѣйствительность, реальность.
Զագորութիւն —геология.	Լակիր —слухъ.
Զանազան —различный, разный,	Խոհեմութիւն —благородуміе.
Զգայ յական —чувственный, յարան —чувство, органъ чувства, յու- թիւն, յում—ощущеніе, чувство, լ—чувствовать, ощущать, ощу- щеніе, յունք—чувство, чувст- вование, յուել—чувствовать.	Խորհութիւն —разсуждать, размышлять.
Զուգորութիւն —ассоциація, թեմ հոգերանութիւն—ассоціаціон- ная психологія.	Խորհրդական —разсуждать, ութիւն —разсуждение.
Հակ —существо, ան—существенный.	Մրագրութիւն (հետմակարական) — проекція (перспективная).
Հուռմութիւն —сущность.	Կապակցութիւն —связь.
Հմակիրկմ —эмпиризмъ, իկ—эмпи- рикъ, эмпирический.	Կատեգորիայ —категорія.
Հներդիայ —энергія.	Կարողութիւն —способность, спла.
Ոմբութիւն —восприятие, ում— восприниманіе, восприятие, ել— воспринимать.	Կիսակնդեր (ուղեղի) — полушарія
Ըստանուր —общий, րացնել—обобщ.	

(մօզғօվիլ)	Մատերիալիզմ —матеріализмъ, փա- —матеріалистъ.
Կառիֆիկացիայ ևնթարկել —clas- сифицировать.	Մեթոդ —метода.
Հակագործ —обратный.	Մետաфизիկայ —метафизика, ու— метафизикъ (տ. բնուղանցէտ).
Հակագործ —противоположный, դրել —противополагать, դրութիւն —противоположность.	Մեքանիզմ —механизмъ, կ—механи- ка, յօրէն—механика.
Հակագործութիւն —воздѣйствие.	Մեքենաբար —автоматически, յա- րանական (հայեայք, գարտ- փարներ, օրէնքներ)—механи- ческий, յարանութիւն—меха- ника, յօրէն—механически.
Հակագործութիւն —противорѣчить, ութիւն —противорѣчие.	Միասնութիւն —однородность.
Համական —однородный.	Միաւորութիւն —соединение.
Հայեցակէտ —точка зреѣнія, լ—со- зерцать, ցուութիւն—созер- цашне, умозрѣніе.	Միութիւն —единство.
Հանդական —общий.	Միուք —мысль, умъ.
Հանգույղութիւն —пониманіе.	Մոդուս —модусъ.
Հաւաքարանութիւն —сплотовъмъ.	Մոնադ —монада.
Հեռանդարական ծրագրութիւն —пер- спективная проекція	Մոնիզմ —монизмъ.
Հետեղութիւն —послѣдовательный, ուղականութիւն—послѣдов- ательность, ութիւն—выводъ, ցնել—выводить.	Մարերել —вспоминать.
Հիմնարութիւն օրէնք—законъ основанія.	Մատան —мыслить, думать, ու— мыслитель, ութիւն—мыши- ление, ութիւն—мысль.
Հիգուազ —тезисъ.	Մատուուր —умственный.
Հոգածութիւն —память, воспоминаніе.	Մատուուկիւր —представление.
Հոգածութիւն —душевно-больной.	Յագորդաբար —послѣдовательно.
Հոգի —душа, душъ, երան—нейро- логъ, երանական—психологи- ческий, երանութիւն—психо- логія, եկան—душевный, ու- хический, եոր—духовный.	Յիշուութիւն —память, воспоминаніе.
Հւ —форма.	Յամակի —множественный, ութիւն —множественность.
Հշմարել —оправдывать.	Յատուրալիզմ —натуралистъ (տ. բնագէտ).
Մագնիսականութիւն —магнетизмъ.	Յացեարքանիզմ —непессаріанізмъ.
Մամակի —частный.	Նիւթ —вещество, матерія, ական— вещественный, матеріальный, ականացնել—веществовать.
Մաթեմատիկանուկան —математичес- кий, ու—математикъ.	Յամօրինակ —аналогический (տ. մնալութիւ).
Մաթեմատիկան —расположить, թիւն —расположение.	Յարագուան —расположить, թիւն —расположение.

Յօշափելիք —осязаніе.	Տարտծ ական — пространственный, ութիւն — пространство, протя- женіе.
Պատկեր —образъ, անալ—предста- вляться, ացնել—представлять, ացում—представливаніе, пред- ставленіе.	Տարտառութիւն —разнородность. Տարբեր —отличный, различный, ել —отличать, ութիւն—отличие, разница, различіе, ում—раз- личеніе.
Պատճառ աբանութիւն —мотивациі, ական կապակցութիւն—при- чинная связь, ականութիւն —причинность.	Տարր — элементъ, ական — элемен- тарный.
Ջերմածին —теплородъ.	Տեսակ —видъ.
Բացինալ —рationalный, իզմ— рационализмъ.	Տեսական —теоретический, ութիւն —теорія.
Ուշալ —реальный, իզմ—реализмъ, ութիւն—реальность.	Տեսախելիք, ողութիւն —зрѣніе. Տերմին —терминъ.
Սահման ել —опредѣлить, ում—оп- редѣление.	Տպայութիւն —впечатлѣніе. Տրամարան —логикъ, ական—логи- ческій, ութիւն—логика.
Սպաբանութիւն —эмбриология.	Տրամախութիւն —дialektika (տ. դիալեկտիկա).
Սեռ —родъ.	Տրանսցենդենт —трансцендентный.
Սիսթեմ —система, աւոր, ական— систематический.	Տանցաթաղանթ —сѣтчатая оболочка. Տնորք —иллюзія, мечта.
Սկեպտիկ զիգմ —скептический, զիգմ— скептицизмъ.	Փիլիսոփայ —философъ, ական—фи- лософскій, ութիւն—филосо- фія, ութիւն անել—философ- ствовать.
Սովետութիւն —софистика.	Փորձ —опытъ, ականի վերածել— свести на опытъ.
Սուբյեկտ —субъектъ, իւ—субъек- тивный, իւիզм—субъективизмъ, իւութիւն—субъективность.	Քիմիայ —химія.
Սուբстанցիј —субстанція.	Օբյեկտ —объектъ, ացնել—объек- тивировать, ացում—объекти- вированіе, объективациія իւ— объективный, իւութիւն— объективность.
Սուբրիտուլ իզմ—спиритуализмъ, իստ—спиритуалистъ, իսորիկ —спиритуалистический.	Ֆիզիկայ —физика, ական — физи- ческій, ու—физикъ.
Ստոյդ —вѣрный, достовѣрный.	
Ստուդ ասլէն —вѣрно, ել—прѣвѣрять.	
Վարդապետութիւն —ученіе.	
Վերացում, ուցում —отвлеченіе, абстракція.	
Վերլուծ ել —анализировать, разла- гать, ութիւն—анализъ, ում —анализированіе, анализъ.	

ՑԱՆԿ


Հեղինակի առաջին հրատարակութեան յառաջաբանից	5
Հեղինակի երկրորդ հրատարակութեան յառաջաբանից	9
Գլուխառաջին	
Հոգու և մարմնի արրերութիւնը	14—47
I Ենչից պէտք է սկսել	14
II Cogito, ergo sum	17
III Տարակոյս	22
IV Երազ	24
V Անտարակուսելի արջան	26
VI Հողի	29
VII Ներքին աշխարհ	31
VIII Ներքին և արտաքին աշխարհի տարրերութիւնը	33
IX Հողի և նիւթ	36
X Նիւթական աշխարհի իմացութիւնը	40
XI Իմացութիւնն ընդհանրապէս	42
Գլուխ երկրորդ	
Հոգու ուսումնասիրութիւնը	48—96
I Յատուկ կատեգորիաներ	48
II Ներքին դիտողութիւն	50
III Օբյեկտացում	56
IV Էմպիրիկ հոգեբանութիւնը	59
V Դիտակցութիւն	66
VI Էմպիրիկ հոգեբանութեան եսը	70
VII Սուբյեկտ	75
VIII Իդէալիզմ	78
IX Հոգու իրական կեանքը	81
X Իմացութիւն	83
XI Զգացմունք	88
XII Կամք	90
XIII Հոգու լիակատար կեանքը	93
XIV Նզրակացութիւն	95

۴۶۸

շինուածուաց և ամենալավաց միջնորդ պատկան
գույքակիւաց և ամենալավաց պատկան

Կարեւոր նպղոելիք

Եջ.	Տող.	Տպուած է	Աւդիղը
6	վ. 14	առանձնապէս	անձնապէս
»	4	մտքի	մտքերի
22	վ. 3	տեսողութիւնն	տեսնելու
»	»	գալլ	գալլ
»	4	մարմնով	մարմնով
»	» 9-10	տեսողութեան	տեսնելու
28	ն. 4	ամենից	ամենքից
32	ն. 16	ձեռքի	ձեռքիս
»	» 15	վէրքի	վէրքիս
»	» 12-11	զգայութիւնները	զգայութիւններս
»	» 11	վէրքի	վէրքիս
»	» 10	տեղաւորման	տեղաւորման
»	» 4	վէրքի	վէրքիս
40	» 11	մեքենայական	մեքենայաբանական
60	» 16	նա	դա
61	վ. 18	մեքանիկական	մեքենայաբանական
68	» 12	Մոնադաց	Մոնադաց
72	ն. 3	որով—	
81	» 12	լինելու	լինելու
82	վ. 3	մօռանալ	մօռանալ
83	ն. 8	իմաստութիւնը	իմացութիւնը
85	» 2	ենթ չաղբելենք	ենթագրել չենք
90	» 7	չափով	չափով
91	» 11-12	դարձնել,	դարձնել
92	» 2	եթմիայնէ	եթէ միայն
93	» 2	մեցուղաղութեան	կամեցուղութեան



Տիկիսի, Բաբուի, Երեւանի և Ալեքսանդրապոլի
գրախանութեառում վաճառում են՝

Պրոֆ. Մ. Պետրով. «Աւետարանը պատմութեան մէջ»:
Թարգ. Աւետիս Տէր-Յարութիւնեան, խմբ. Ս. Տիգ-
րանեանի. Գինն է 20 կոպ:

Պրոֆ. Ի. Բերդնիկով. «Նոր պետութեան վերաբերմունքը
գէպի կրօնը»: Թարգ. Գէորգ Ալթունեան, խմբ. Ս.
Տիգրանեանի. Գինն է 25 կոպ:

Պրոֆ. Ն. Սուվորով. «Եկեղեցու և պետութեան յարաբե-
րութիւնները»: Թարգ. Պետրոս Տէր-Յարութիւնեան,
խմբ. Ս. Տիգրանեանի. Գինն է 30 կոպ:

Մամուլի տակ է

Պրոֆ. Ռ. Գոն Իհերինգ. «Իրաւունքի կոիւը» (Der Kampf
um's Recht). Թարգ. Աւետիս Տէր-Յարութիւնեան, խմբ.
Ս. Տիգրանեանի:

Պրոֆ. Վ. Մինտոյ. «Ընդուկտիւ և դեդուկտիւ տրամաբա-
նութիւն»: Թարգ. Գէորգ Ալթունեան, խմբ. Ս. Տիգ-
րանեանի: